18542

Ռ. ՌՈՈՒԱՆ

ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԱԿԱՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ

«ԲՈԼՇԵՎԻԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ - 1937

327
Ռ-7

ԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

27 SEP 2006

15 JAN 2010

ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՎ
ՀԱԿԱՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ԲՈԼՇԵՎԻԿ»
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ — 1937

JUL 2013
18542
225
37

ԶԱՐԱԳՈՒՇԱԿ ՃԱԿԱՏ

«ՊՐԱՎԴԱ»-Ն, ՏՊԱԳՐԵԼՈՎ ԱՅՍ ՀՈԴՎԱԾԸ, ՏՎԵԼ Է ՀԵՏԵՎՅԱԼ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆԸ.— «ՄԵՆՔ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԵՆՔ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳՐՈՂ Ռ. ՌՈՈՒԱՆԻ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ «ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱԿԱՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ» ԳՐՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՅՍ ՈՒՆԻ, ՎՈՐ ԴՐԱՆՈՎ ՆԱ ՎՈՐՈՇ ՉԱՓՈՎ ԿՈԳՆԻ ԻՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ — ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ՎՈՉ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻՆ ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ «ՈՏԱՐԵՐԿՐՅԱ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ՎՆԱՍԱՐԱՐԱԿԱՆ-ԴԻՎԵՐՍԻՈՆ ԵՎ ԼՐՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ, ՊՐԱԿՏԻԿԱՅԻՆ ՈՒ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ» (Ի. ՍՏԱԼԻՆ)։

Մի անգամ, 1913 թվականին, վաղ գարնանը, Վիեննայում շտաբի չորս սպաներ կանգնած էին նախասենյակի դռան մոտ, տրագիկ լարվածությամբ ականջ դնելով և սպասելով։ Նրանք սպասում էին ատրճանակի կրակոցին և, յերբ կրակոցը լսվեց, նրանցից ավագը, վոր գնդապետ եր, բաց արեց դուռը, և նրանք բոլորը, մեկը մյուսի հետևից, մտան սենյակը։ Լուսամուտի մոտ, բազկաթոռի վրա պառկած եր կրակողը։ Նա, համազգեստից դատելով, գլխավոր շտաբի սպա յեր։ Նրա վոտքերի մոտ ընկած եր պետական տիպի ատրճանակը։ Սպան մեռած եր։ Իր ինքնասպանությամբ նա մեկ տարով հետաձգեց Ռուսաստանի դեմ պատերազմ հայտարարելը, վոր չափազանց կարևոր եր ավստրո-հունգարական հրամանատարության համար։

Ինքնասպանության փաստը կենտրոնական Յեվրոպայի պաշտոնական շրջաններում մի ամբողջ սեզոն գաղտնի կերպով քննարկվում եր։ Ինքնասպանությամբ իր կյանքին վերջ դրած սպան գնդապետ Ռեդլն եր, վոր կցված եր Ավստրո-Հունգարական կայսրության գաղտնի ծառայության բաժնին։ Նա կանգնած եր հակահետախուզության գլուխ և վաճառել եր իր հայրենիքը։ Ռուսաստանի զին-

վորական կցորդ գնդապետ Զուբովը վեց ժամվա ընթացքում պետք է հեռանար Ավստրո-Հունգարիայի սահմաններից։ Շտաբի սպաներն արին այն ամենը, ինչ կարող եյին, վորպեսզի Ռեդլը հասկանար, թե նա իր դավաճանությամբ ինչպիսի դրության մեջ ե գցել հայրենիքը։ Նրանցից մեկը, վոր հայտնի յեր վորպես ատրճանակից լավ կրակող, նախատեսված եր հրապարակից գնդապետին վերացնելու համար, յեթե նրան դավաճաներ արիությունը։

Առնվազն չորս տարվա ընթացքում Ռեդլը սիստեմատիկաբար Ռուսաստանին հաղորդում եր մի շարք ռազմական գաղտնիքներ։ Նա վաճառել եր զորահավաքի նոր պլանը և այնպիսի բերդերի պաշտպանական կառուցումների գծագրերը, ինչպիսիք եյին Պերեմիշլը և Կրակովը։ Նա ջանասիրությամբ ցարական գաղտնի վոստիկանության ձեռքն եր մատնում նույնիսկ ավստրո-հունգարական այն գործակալներին, վորոնց ինքն անձամբ եր ուղարկում Ռուսաստան։ Բայց նկատի ունենալով, վոր Ռեդլն ինքն ե կատարածեց իր մահվան դատավճիռը, նրա հասցեյին շուտով գտան բազմաթիվ արդարացումներ։ Կառավարությունն իր ամբողջ ագդեցությունը գործադրեց այդ միջադեպն ստվերի տակ թողնելու համար։

Կիսատեղյակ անձինք գտնում եյին, վոր Ռեդլը զոհվել ե՝ իր հայրենիքը պարտությունից փրկելու համար, և այդ, անկախ նրա դավաճանությունից, զուտ ճշմարտություն ե, քանի վոր Ավստրո-Հունգարիան միանգամայն անպատրաստ եր — նա հարկադրված եր միլիոններ ծախսել՝ Ռուսաստանին հայտնի պլանները փոփոխելու համար։ Ռեդլի կողմնակիցները պնդում եյին, թե վոչ-վոք պատերազմ չեր սպասում, և վոր նա Ռուսաստանին վաճառում եր միայն այն, ինչ վոր պատերազմն սկսելու մոմենտին կկորցներ ամեն մի նշանակություն։ 1914 թվականի ոգոստոսին Ռեդլի բարեկամներին համարյա հաջողվեց նրա համար ստեղծել անկաշառ մարդու հիշատակ։

Ռուսական բանակը շրջապատեց Պերեմիշլը, բայց այդ բերդը գրավել նա կարողացավ միայն յերկարատև պաշարումից հետո։ Ինչպես մենք տեսնում ենք, ավստրիա-

կան գլխավոր շտաբը մեկ տարվա ընթացքում արավ այն ամենը, ինչ-վոր կարող եր՝ կայսրությունը Ռեդլի դավաճանությունից անվտանգ դարձնելու համար։

Յեթե Ռուսաստանի զինվորական կցորդին չհաջողվեր կաշառել ավստրիական սպային, ապա անհրաժեշտ տեղեկությունները ստանալու գործը կհանձնարարվեր հետախույզներին։ Վերջիններս մեծ ճարպկություն ու հաստատակամություն պետք ե գործ դնեյին, իմանալու համար այն ամենը, ինչ վոր Ռեդլը կարող եր վաճառել։

Խաղաղ ժամանակ լրտեսությունը փոխարինում ե ռազմական գործողություններին, բայց նա ավելի քիչ ծախսեր ե պահանջում։ Պատերազմի ժամանակ հետախույզն ամենամահացու զենքն ե հանդիսանում — միակ հնադարյան զենքը, վոր չի կորցրել իր նշանակությունը։

Մենք, պատերազմի ժամանակակից միջոցների պայմաններում, սովոր ենք կատարելագործման այնպիսի տեմպի, յերբ նորմուծությունները, վորոնք ապահովել են հաղթանակը մեկ ճակատամարտում, հաջորդ ճակատամարտերի ժամանակ դիտվում են վորպես վոչ բավարար և հնացած միջոց։ Սակայն ռազմական արվեստի մեջ կատարվող բոլոր փոփոխությունների պայմաններում հետախույզը մնում եր չկատարելագործված։ Թեև այն հիմնարկը, վորն այժմ կոչվում ե բանակի հետախուզական բաժին, ռազմական ինֆորմացիա յի հավաքում մի շարք աղբյուրներից, սակայն հիմնականում նա իր աշխատանքը կառուցում ե հետախույզների և գաղտնի գործակալների խիզախության ու հնարամտության վրա։ Վորքան ել կարևոր ե լավ կազմակերպումը հակառակորդի թիկունքում, գլխավոր դերը, այնուամենայնիվ, ընկնում ե իրեն՝ հետախույզի վրա։ Ճարպիկ, գաղտնի գործակալի ձեռք բերած տեղեկությունները նրա հայրենիքի կառավարության կողմից կարող են գնահատվել տասը հազար անգամ ավելի թանկ, քան նրա քաշով մեկ վոսկին։

Ֆրանսական տվյալների համաձայն, մի ճարպիկ կին-հետախույզ համաշխարհային պատերազմի ժամանակ վոչընչացրել ե 16 տրանսպորտ ու առևտրական նավ։ Այդպիսի

արդյունքը, վոր շատ ավելի կործանիչ ե, քան յուրաքանչյուր մի գծանավի գործողությունները, հասցնում ե այն մտքին, վոր հետախույզները հանդիսանում են վոչ միայն հզոր մի զենք, վորն անփոփոխ ե մնում պատմության ամբողջ ընթացքում, այլև համեմատաբար վոչ թանկ զենք։ Գծանավ կառուցելն ու սպառազինելը և միքանի տարի այն պահպանելը՝ քանի դեռ չի հնացել, արժե առնվազն 100 միլիոն դոլլար, մինչդեռ ամենալավագույն գաղտնի գործակալ-հայրենասերները նստում են անհամեմատ ավելի եժան։ Հետախույզների մեծ մասը, անկախ նրանց աշխատանքի վտանգավորությունից, ստանում են համեմատաբար վոչ մեծ վարձատրություն։ Ամեն մի կառավարություն իր տրամադրության տակ ունի բազմաթիվ գործակալներ։ Խաղաղ ժամանակ հետախույզներն ու գաղտնի գործակալներն իրենց պահում են միանգամայն այնպես, ինչպես պատերազմի ժամանակ, բայց ավելի մեծ վստահությամբ և մեկ վայրից մյուսը փոխադրվելու ազատությամբ։

Այդ ժամանակ հետախույզը խաղաթղթի վրա չի դնում իր կյանքը, քանի վոր հակառակորդները դառնում են բարեկամներ, և բնակչության կասկածամտությունն զգալիորեն թուլանում ե։ Հետախույզի դիմակավորումը և նրա խորամանկությունները շատ ավելի դժվար ե լինում մերկացնել։ Ամենայն հավանականությամբ հետախույզն, այդ առաջադրանքների կատարմանը զուգընթաց, ստանում ե միքանի միանգամայն լեգալ, գործնական հանձնարարություններ։ Պատերազմի ժամանակվա անխուսափելի լարվածության ու վտանգի համեմատությամբ, այդպիսի աշխատանքը մի կատարյալ տոն ե յուրաքանչյուր պրոֆեսիոնալ գաղտնի գործակալի համար։

Պատերազմի ժամանակ աշխարհը պարսպված ե լինում անխուսափելի պատնեշներով։ Մեկ վայրից մյուսն անցնելը վերահսկման ե յենթարկվում, փոստն անցնում ե ռազմական գրաքննչության ձեռքից, և հետախույզի աշխատանքը հակադրվում ե հակահետախուզության աշխատանքին,—այն ե՝ կազմակերպված հսկողություն հետախույզների նկատմամբ, քաղաքացիական բնակչության

զգաստություն, վորն ընդհանուր առմամբ կարող ե խոչընդոտ հանդիսանալ նույնիսկ ամենափորձված հետախույզի աշխատանքի համար։

Հետաքրքրական ե նշել, վոր պատերազմական գործողությունները դադարելուց հետո հետախուզության աշխատանքը չի դադարում։ Պետությունները միմյանց հսկում են վոխերիմ թշնամիների ամբողջ կրքոտությամբ։ Գաղտնի ծառայության գնդերը յերբեմն կրճատվում են, բայց յերբեք չեն զորացրվում։ Խաղաղության վոչ մի տեսակի պայմանագրով նրանք չեն արձակվում իրենց տները։ Վերսալի պայմանագիրը նոր եր միայն կազմվում, հետագայում Գերմանիային կաշկանդող կապերը նոր եյին միայն քննարկվում, բայց հաղթանակը տարած դաշնակիցներն արդեն սկսել եյին ուշադիր հսկել միմյանց, կարծես թե այդ միակ միջոցն եր հաղթանակողի դերն ամրապնդելու համար։

Լրտեսությունն իր եյությամբ ուրիշի յերկիրը ներխուժելու ապորինական մի ակտ ե հանդիսանում։ Սակայն այն պետությունները, վորոնք իրենց նվիրել են խաղաղության և կարգ ու կանոնի պահպանմանը, անդադրում աջակցում են լրտեսությանը։ Չարագուշակ ճակատում զինադադար չկա։ Այդ նշանակում ե, վոր թեև մեր մեծ մասն ապրում և աշխատում ե ձգտելով իր բարեկեցությանը, պահպանելով անհատական ազնվության հայտնի կանոնները, ընդհատակում տեղի յեն ունենում անընդհատ պայքար, ինտրիգներ, վորոնք բոլորի կողմից ճանաչվում են վորպես բնական և միևնույն ժամանակ ապորինական յերևույթ։

Չորս ամսվա ընթացքում, մինչև 1928 թվականի մարտի 1-ը, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Լեհաստանում և Չեխո-Սլովակիայում լրտեսության մեղադրանքով դատապարտված են յեղել 17 մարդ։ Այնուամենայնիվ, այժմ ել, այն դեպքերում, յերբ նախկին հետախույզ սպան, կամ թե պահեստի վորևե սպա, վորը վայելում ե հետախուզական այն բաժնի սպասարկության վստահությունը, վորին նա մի ժամանակ պատկանելիս ե յեղել, մեկնում ե արտասահման, նրան անմիջապես տալիս են մի շարք հրահանգներ։ Մեկնելու ժա-

մանակ նա ստանում ե հատուկ հարցացուցակ այն օտարերկրյա պետության բանակի կամ նավատորմի (նայած նրա մասնագիտությանը) վերաբերյալ, վորտեղ նա այցելում ե. այդ հարցերի պատասխանները պետք ե հետախուզական բաժնին տան նրան անհրաժեշտ լրացուցիչ տեղեկություններ։ Հետախուզական բաժինն այնուհետև կարող ե հավաստիացնել, վոր ինքը յերբեք վորևե այդպիսի բան չի լսել, վոր հրահանգները տրված են յեղել վոչ պաշտոնական կարգով, բայց և այնպես, բոլոր առաջնակարգ ու յերկրորդ կարգի պետություններում այդ բանը մտել ե առօրյա պրակտիկայի մեջ։ Ճանապարհորդող պահեստի սպան ամեն դեպքում պարտավոր չե գործել գաղտնի։ Այն, ինչ նա կատարում ե, ամեն դեպքում չի կարող բնութագրվել վորպես դատապարտելի գործողություն. նրա աշխատանքը կարող ե հիմնականում դիտվել վորպես լրացում զինվորական ու ծովային կցորդների կատարած դիտողություններին, կցորդների, վորոնք կոչվում են «հավատարմագրված լրտեսներ»։

Վոչ այնքան հեռու անցյալում մի յեվրոպական պետության առաջարկվում ե չափազանց կարևոր ծովային մի գյուտ։ Այդ գյուտի բացառիկ օգտագործման իրավունքի համար գյուտարարը պահանջում եր խոշոր գումար—մեկ միլիոն ֆունտ ստերլինգ։ Այդ պետական գործիչը, վորը պետք ե այդ միլիոն ֆունտ ստերլինգն ավելացներ բյուջեյին, իսկ այնուհետև գտներ այդ գումարը, դեմ ե արտահայտվում գյուտի համար վորևե վճար տալուն։ Նա ցինիկաբար հայտարարում ե՝ «Թող գյուտը գնի վորևե այլ պետություն։ Մենք կարող ենք մի փոքր սպասել։ Մեր գործակալները շուտով կգողանան այն և այն ժամանակ մենք կկարողանանք այդ գյուտն օգտագործել համարյա ձրի»։ Այդ լրջմիտ ռեալիստը ներկայումս կանգնած ե աշխարհի խոշորագույն բանկերից մեկի գլուխ։ Նրա վերաբերմունքը պետական հետախուզության հեռանկարների նկատմամբ խաղաղ ժամանակ (այդ բանը պատահել ե մինչև 1914 թվականը) արժանի յե հիշատակման։

Ժամանակակից պատերազմը պահանջում ե կազմա-

կերպված հետախուզական ծառայություն և վորպես դրա հետևանք — մի այլ ծառայություն՝ հակահետախուզություն։ Յուրաքանչյուր պետություն, վորը կարող ե պատերազմ վարել, պետք ե ունենա հետախույզներ. իր հարևանների գաղտնի նախաձեռնություններին հականերգործելու համար նա պետք ե նաև ունենա լավ պատրաստված ու փորձված գործակալներ, վորոնք ընդունակ լինեն չեզոքացնելու մյուս պետությունների հետախուզությունը։ Հետախույզը, խախտելով մյուս պետությունների իրավունքը, պատերազմի ժամանակ ռիսկի յե յենթարկում իր կյանքը, իսկ խաղաղ ժամանակ յենթարկվում ե արտաքսման, բանտարկության ու թշվառության, վորովհետև նա չունի վոչ մի պաշտպանություն։ Կառավարությունները չեն կարող մասնակցել ապօրինական ձեռնարկումներին։ Նրանք խստորեն հետապնդում են օտարերկրյա լրտեսներին։ Ուստի նրանք պատժում են նաև իրենց գործակալներին, հրաժարվելով նրանցից, յերբ վերջինները ընկնում են ծանր դրության մեջ։

Մյուս կողմից պարզ ե, վոր բանակի կամ ծովային շտաբն ինչպես խաղաղ, այնպես և պատերազմի ժամանակ պետք ե իմանա այն ամենը, ինչ հնարավոր ե իմանալ բոլոր հավանական հակառակորդների մասին։ Եքսպերտները պնդում են, վոր վատ հետախուզությունը պատերազմ ե առաջացնում. այդ, համենայն դեպս, նպաստեց վերջին պատերազմի առաջացմանը։ Հայտնի յե, վոր մարտական տրամադրությունն Ավստրո-Հունգարիայի ու Գերմանիայի գլխավոր շտաբներում առաջ եր գալիս այն տեղեկությունների հիման վրա, վոր ստացվում եյին 1914 թվականի ձմռանն ու վաղ գարնանը ռուսական զինվորական մինիստրության դավաճաններից և լրտեսներից։ Ջեկույցների համաձայն ցարական բանակը բոլորովին կազմալուծված եր։ Ինչու՞ ուրեմն չպետք եր շտապել Սերբիային ուլտիմատում ներկայացնել առանց վողորմածության և գթասրտության։

Այդ բոլորը տրագիկական սխալ եր։ Ռուսաստանը կարողացավ Ռենենկամպֆի և Սամսոնովի բանակները մոբիլիզացիայի յենթարկել այնպիսի արագությամբ, վորը

զարմացրեց նրա դաշնակիցներին։ Յեվ գերմանական հրամանատարությունն այդ ժամանակվանից յեկավ այն յեզրակացության, վոր իր հետախուզական ծառայությունը չարաչար սխալվել եր բելգիացիների պոտենցիալ ուժերի գնահատման հարցում։

Հետախույզների հաղորդագրությունների համաձայն Մեծ Բրիտանիան անհուսալի կերպով խրվել եր բանվորական շարժման և Իռլանդական ապստամբության կողմից նրա առջև դրված դժվարին պրոբլեմների լուծման մեջ։ Բայց այս անգամ ևս չարդարացան այն տվյալները, վորոնք ձեռք եյին բերված աշխարհիս ամենալավ պատրաստված և ամենալայն հետախուզական ծառայությամբ։

Ձեռնարկելով հետախույզների գործունեյության և նրանց ունեցած ռազմական նշանակության մանրամասն շարադրմանը, հարկավոր ե հենց սկզբից մատնանշել, վոր այն ռիսկը, վորին յենթարկվում ե հետախույզը, չափազանց մեծ չե մահվան վտանգի համեմատությամբ, վորին ժամանակակից պատերազմում յենթարկվում են գործող զորքերը։ Ռազմական որենքները պահանջում են մահապատժի յենթարկել այն անձանց, վորոնք մեղադրվում են լրտեսության մեջ, անկախ եթիկական նկատառումներից։ Յենթադրվում ե, վոր մահապատժի սպառնալիքը կդժվարացնի հարմար անձնակազմի ընտրությունը հետախուզական առաջադրանքներ կատարելու համար։ Բայց իրականում այդ սպառնալիքը հետ ե պահել հետախույզի հատկություններով օժտված չափազանց փոքրաթիվ մարդկանց։ Դրանք սովորաբար գրավիչ արկածներ վորոնող մարդիկ են։ Այդ տիպի սպաները, իբրև կանոն, չափազանց տաղանդավոր են լինում ռազմական գործերում. ուստի հրամանատարները, չցանկանալով ռիսկի յենթարկել իրենց արժեքավոր ստորադրյալներին հանուն մի վորևե ձեռնարկման, վորը դուրս ե գտնվում զորամասի խնդիրների շրջանակից և կրում ե չափազանց վտանգավոր բնույթ, հրաժարվում եյին նրանց թողնել հակառակորդի տերիտորիան։

Պատասխանելու համար այն հարցին, թե ում ե յենթարկվում ավելի մեծ վտանգի՝ մարտիկը, թե հետախույզը,

անհրաժեշտ ե աչքի անցկացնել միքանի վիճակագրական տվյալներ, վորոնք վերաբերում են 1914—18 թվականներին, թեև վոչ մի տեղ չեն յեղել այնպիսի գրանցումներ, վորոնցից հնարավոր լինի ստույգ կերպով սահմանել հետախույզների թիվը։ Շատ հետախույզ-սպաների թույլատրվում եր գործակալներ հավաքագրել և նրանց վերաբերյալ տեղեկություններ ներկայացնել ընդհանուր առմամբ, հաշիվ տալով միայն նրանց վրա ծախսված գումարների մասին։ Ինչպես բազմիցս հաղորդվել ե, Ֆրիդրիխ Մեծը հայտարարում եր, վոր նա պատերազմական գոտում իր տրամադրության տակ ունեցել ե մեկ խոհարար և հարյուրավոր հետախույզ։ Ֆրիդրիխին հարկավոր եր միայն մեկ խոհարար, քանի վոր նա ուտելու կողմից չափավոր եր և հաճախ հիվանդանում եր, բայց, շրջապատված լինելով ուժեղ ու հաստատակամ հակառակորդներով, նա կարիք ուներ զգալիորեն ավելի մեծ թվով հետախույզների, և այդպիսի հետախույզներ նա, անտարակույս, ուներ իր տրամադրության տակ։ Պրուսական հետախուզության ղեկավար Շտիբերը հավաստիացնում եր ֆոն Ռունին և Մոլտկեյին, վոր ֆրանս-պրուսական պատերազմի սկզբում նա Մակ-Մագոնի և Բազենի բանակների թևերն ու թիկունքն ե ուղարկել 36 հազար հետախույզ։ Խուսափելով այդ պնդումների ծայրահեղությունից, մայոր Շտեյնհաուերը յենթադրում եր, վոր Հյուսիսային Ֆրանսիայում և Բելգիայում, այն մոմենտին, յերբ «Մեծ Բերտան» առաջին արկն արձակեց Լիեժ քաղաքի ուղղությամբ, կային մոտ 8 հազար հետախույզ։

Տերիտորիաները գրավելիս՝ խաղաղ բնակիչներին հաճախ գնդակահարում եյին՝ վորպես լրտեսների՝ միայն այն բանի համար, վոր նրանք չար աչքով եյին նայում իրենց տերիտորիան ներխուժած հակառակորդին։ Յերբեմն նրանց ամբողջ հանցագործությունը կայանում եր այն ստորացմանը բնազդաբար ընդդիմանալու մեջ, վորին յենթարկվում եր քաղաքացիական բնակչությունը։ Սակայն Բելգիայի և Ֆրանսիայի՝ օկուպացիայի յենթարկված դեպարտամենտների բազմաթիվ բնակիչներ դատապարտվում

էին լրտեսության համար, նրանց յենթարկում էին յերկարամյա բանտարկության։

Հետախուզական ծառայության նվաճումները գլխավորապես գոյացվում են միքանի առանձնապես հմուտ հետախույզների աշխատանքի արդյունքներից։ Մյուս բոլոր հետախույզները ձեռք են բերում պատահական, կցկտուր տեղեկություններ, թեև այդ տեղեկությունները ևս յերբեմն ունենում են մեծ արժեք։ Բացի դրանից, այդպիսի հետախույզները շեղում են հակառակորդի հակահետախուզության ուշադրությունը և դառնում են ծխապատնեշի նման մի բան, որը քողարկում է հետախուզության միքանի հանճարների գործունեությունը։

Համաշխարհային պատերազմի վերջին ամիսներին հակահետախուզությունը հասնում է գագաթնակետին և փաստորեն անցնում հարձակման։ Բրիտանական զինվորական մինիստրության հատուկ հետախուզական բաժնի նախկին պետ՝ բրիգադի գեներալ Հ. Ի. Կոկկերիլը պարծանքով թվարկում է իր աշխատակիցների հաղթանակները։ Հակահետախուզությունը ձերբակալում էր հետախույզներին, բռնում էր ծովային ու ռազմական ինֆորմացիաներ, յերևան էր բերում դավադրությունները և ռազմագործարանների հրկիզման ու ավերման նախապատրաստությունները, բռնում էր անգլիական նավահանգիստներից նավերի դուրս գալու վերաբերյալ ինֆորմացիաներ և բացի դրանից զգալի չափով նպաստում էր բլոկադին։ Հակահետախուզությունը հաղորդում էր մաքսանենգության բոլոր դեպքերի մասին, թույլ չտվեց, որ հակառակորդի յերկիրը փոխադրվեր 70 միլիոն ֆունտ ստերլինգ գումարը և լիովին քայքայեց անդրովկիանոսյան յերկրների հետ հակառակորդի ունեցած հաղորդակցության բոլոր միջոցները։

Յեթե գեներալ Կոկկերիլը և նրա յեռանդուն աշխատակիցները փրկեցին Բրիտանիայի միլիոնավոր դոլլարները, ապա բոլոր հիմքերը կան յենթադրելու, որ ժամանակակից հետախուզական ծառայությունն այսուհետև ևս կարդարացնի իր դերը։

Գաղտնի ծառայության բոլոր արխիվները պահպանվում են որպես խոր գաղտնիք, թանկարժեք նյութերը հաշվի չեն առնվում և պետկազմի փոփոխման դեպքում դատապարտված են ոչնչացման։ Գաղտնի ծառայության վերաբերյալ գրքերն իրենցից ներկայացնում են պարծենկոտ մեմուարներ («միայն խիզախներից խիզախագույններին է թույլատրվում մեզ հետ միասին ծառայել այս վտանգավոր պոստում»), տարակուսելի մերկացումներ կամ թե կիսաբելետրիստիկ և մելոդրամատիկ պատմվածքներ՝ գաղտնի, հուզող դեպքերի և գաղտնի ծառայության մի որևէ գործակալի սխրագործությունների մասին։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ

Բանակի կամ նավատորմի հետախուզական բաժնին կցված սպայի գործունեությունը թե պատերազմի և թե խաղաղ ժամանակ, բացառապես հարձակողական բնույթ է կրում։ Նրա նպատակն է՝ մանրամասնորեն ուսումնասիրել մյուս պետությունների նավատորմերն ու բանակները, որովհետև հետախուզությունն անխուսափելիորեն կապված է դրանց զարգացման հետ։

Հետախուզության այն սպաները, որոնք խաղաղ ժամանակ տվյալներ են ձեռք բերում այս կամ այն յերկրի զինված ուժերի մասին, յերբեք չեն մոռանա Գերմանիայի որինակը։ Գերմանացիները պատերազմից առաջ բազմակողմանի տեղեկություններ էին հավաքում աշխարհիս բոլոր յերկրների մասին։ Նրանք, ծովային ու զինվորական կցորդների ղեկավարությամբ, բոլոր տվյալներն էին հավաքում նավահանգիստների, գլխավոր քաղաքների մասին, այն բլուրների մասին, որոնցից նրանց վրա կրակելու յե հրետանին, կամուրջների և յերկաթգծերի մասին, ճանապարհների ու հովիտների, խրամների ու ջրանցքների, բոլոր հարմարությունների ու խոչընդոտների մասին և, իհարկե, ամրությունների ծովային բազաների, չոր նավաշինարանների ու զինանոցների մասին։ Ստանալով այդ

տվյալները, անհրաժեշտ եր հետևել նրանց հետագա եվոլյուցիային։ Յեթե, օրինակ, վորևէ յերկրում հնարված են նոր, արագ կրակող թնդանոթներ, ապա անհրաժեշտ եր վերանայել այդ գործիքների կատարելագործմանը վերաբերյալ ոտարերկրյա բոլոր տեղեկությունները։ Այդ կատարելագործման կապակցությամբ վորևէ զինանոց կարող եր հնացած դուրս գալ։

Մյուս պետությունների բանակների շտաբները հիմնում եյին հետախուզության գերմանական սիստեմով և այդ ընդունում եյին վորպես սպառնալիք իրենց հայրենիքին։

Պետությունների մեծ մասը պատերազմից առաջ սահմանափակ գումարներ եր բաց թողնում հետախուզության համար։ Համաշխարհային պատերազմից հետո բոլոր խոշոր պետությունները շարունակում են պլաններ պատրաստել՝ իրար վրա ծովային ու ցամաքային հարձակումներ գործելու համար և տեղեկություններ հավաքել լրտեսության միջոցով։

Հետախուզության պետը պարտավոր է հակառակորդի վերաբերյալ բոլոր տվյալները պատրաստ ունենալ, նախքան դրանք կարող են պետք գալ, և վոչ մի իշխանություն չի կարող խանգարել նրան ներկայացնելու դրանք ըստ պաշտոնի ավագին։ Ինֆորմացիա կազմելու համար, պետը կարդում է բազմաթիվ լրտեսների և գաղտնի գործակալների զեկույցները, համեմատում է այդ զեկույցները, վերլուծում է առողջ դատողության ու փորձի տեսակետից և աշխատում է պարզել ճշմարտությունը, դեն գցելով այն սխալներն ու սուտը, վորոնք կարող են լինել ամեն մի զեկույցում։

Ներկայումս լավագույն հետախուզական բաժինները հրաժարվում են տեղեկություններ գնելուց։ Այդ վկայում է, վոր հետախուզական օրգանները ձգտում են ավելի ճշգրիտ տեղեկություններ ստանալ։ Անգլիացիները, ֆրանսիացիները, իտալացիները և ամերիկացիները դառը փորձով սովորել են, նրանք գիտեն, վոր ինֆորմացիայի ճշտության նկատմամբ վստահ լինելու համար հարկավոր է, վոր իրենք ճարեն այն։ Ասում են, թե Շվեցարիայում համաշ-

խարհային պատերազմի ժամանակ գոյություն է ունեցել բորսայի կամ շուկայի նման մի բան, վորտեղ պրոֆեսիոնալ լրտեսները տեղեկություններ են վաճառել այն յերկրների մասին, վորոնց ծառայել են իրենք։ Ամեն մի հետախույզ կարող եր գնել նրանցից այն ամենը, ինչ-վոր հետաքրքրում եր իրեն։

Տեղեկություններ ստանալու մեծ աղբյուր են հանդիսանում գերիների և քաղաքացիական ազգաբնակության ցուցմունքները։ Սակայն այդ բոլորը մանրամասն ստուգում է պահանջում։ Պետք է ուշի-ուշով զննել պատերազմական գերիների ու սպանվածների բոլոր իրերը։ Ամենափոքր մի բան կարող է օգնել հակառակորդի դիտավորությունների բացահայտմանը։ Սպանված հրետանավորի մոտ գտնված հասարակ բացիկը կանխեց գերմանական մեծ առաջխաղացումը Շմեն դե Դամի վրա՝ 1918 թ. մարտի վերջին շաբաթը, թեպետ այդ կանխումը բավականաչափ ժամանակին չեր, վորպեսզի ֆրանսիացիները կարողանային վճռական դիմադրություն նախապատրաստել։ 1914 թվականի հոկտեմբերին Դիկսմյուդում վերցված յերկու պատերազմական գերիներ հաղորդեցին, թե գերմանական գլխավոր շտաբը կազմել է պահեստի գնդեր 201-ից մինչև 270 համարով, և նրանցից արևմտյան ճակատում ստեղծել է վեց նոր կորպուս, վորոնք ծրագրված է նետել դաշնակիցների թույլ ձախ թևի վրա։

Հետախուզությունն օգնում է մոլորության մեջ գցելու թշնամի կողմի դիտողներին։ Լոոսի մոտ գերմանացիներն օգտագործեցին դատարկ գնացքը, վորպեսզի հակառակորդի դիտողներին համոզեն, թե ուժանդակ ուժեր են բերում։ Սակայն այդպիսի խորամանկությունը հաճախ կրկնել չի կարելի։ Հակառակորդի հրետանին կվոչնչացնի այդպիսի գնացքները։

Հետախուզության պետը պետք է անընդհատ հետևի թշնամու հրետանուն, գիտենա նրա հրանոթների թիվը, դրանց դասավորությունը, կալիբրը և իրազեկ լինի ռազմամթերքի մատակարարմանը։ Համաշխարհային պատերազմի շրջանում շարունակ նոր տիպի զենքեր մտցվեր։ (Ստոկ-

սի զարմանալի մորտիրը, ձեռքի նռնակներ, հրանետներ, թունավորող նյութեր) հետախուզության սպաներին հարկադրում եր միշտ արթուն լինել և վորոշել, թե արդյոք ստացվող ինֆորմացիան պետք է ընդունել վորպես հետախույզի յերևակայությունը, թե՞ հակառակորդի հնարագիտական հանճարը։ Կամբրեյի մոտ տեղի ունեցած ճակատամարտից առաջ, գերմանական հետախուզությունը Ֆրանսիայի իր գործակալներից միքանի զեկույցներ ստացավ կառուցվող տանկերի մասին, սակայն շտաբին կից տեխնիկական խորհրդատուները գտան, վոր այդպիսի դանդաղաշարժ մեխանիկական կառուցվածքներն ոգուտ չեն կարող բերել կռվում։ Ասում են, թե այդ պահպանողականներից մեկն ինքնասպան յեղավ, յերբ տեղեկացավ տանկերի գործողության մասին։ Պատերազմի ավելի ուշ շրջանում անգլիացիները շատ շփոթվեցին, տեղեկանալով իրենց հետախուզությունից, թե գերմանացիները ռազմաճակատ են բերել 300-ից ավելի նոր վեց դյույմանոց հաուբիցներ, վորոնք պատրաստվել եյին Անգլիայում և Ռուսաստան եյին ուղարկվել «Կերենսկու առաջխաղացման» համար։ Այդ հաուբիցները վերցրել եյին ավստրո-գերմանական զորքերը, յերբ ռուսական 11-րդ բանակը 1917 թվականի աշնանը թողեց ճակատը և գործնականում դադարեց գոյություն ունենալուց։

Հետախուզությունը պետք է ընդունակ և նվիրված գործակալներ ունենա։ 1918 թ. մարտի 24 ն եր՝ կիրակի որը, յերբ գերմանական գերհեռահար մի թնդանոթ բոլոր «Մեծ Բերտաներից» ամենախոշորը, սկսեց ռմբակոծել Փարիզը։ Պաշարողական դրության մեջ չհայտարարված քաղաքի ռմբակոծումը տեղի ունեցավ ռմբակոծիչների և ցեպելինների հարձակումից հետո։ Քաղաքի բնակչությունն առաջին խուճապի պահին չհասկացավ Կրուպպի գործած հրաշքը և յենթադրում եր, թե գերմանացիները, վորոնք այդ ժամանակ ջախջախել եյին բրիտանական ճակատը Բարիզիսից մինչև Գուզոկուր, նոր ապշեցուցիչ առաջխաղացում են կատարել ճակատի կենտրոնով և մոտեցել են Փարիզին։ Իրականում թնդանոթը գտնվում եր Կրեպի ան

Լաոննեյի մոտ, Սեն-Գոբեն անտառի ծայրին, Փարիզից 112 կիլոմետր հեռու։ Ինքնաթիռները յերամներով թռչում եյին այդ շրջանի վրա, բայց վորովհետև գերմանացիները լավ եյին քողարկել և հաճախ տեղից տեղ եյին փոխադրում իրենց հրեշը, ուստի միայն գիշերվա դեմ հաջողվեց վորոշել թնդանոթի տեղը։ Ամբողջ շրջանը յենթարկվեց ինքնաթիռային ռմբակոծման և ֆրանսիական մարտկոցների կրակին։ Սակայն հետախուզությունը չեր կարող հույս դնել պատահականության վրա, պետք յեղավ դիմելու տեղական բնակչությանը։ Ժողովրդի հոծ բազմությունն ստանձնեց կատարել այդ առաջադրանքը։ Նրանցից վիճակով ընտրեցին չորս մարդ, վորոնց գիշերն ուղարկեցին գերմանական ճակատի թիկունքը՝ Լա Ֆերի և Անիզի լե Շատոյի միջև։ Մի շաբաթից կամավորներից յերեքը բարեհաջող կերպով հետ բերվեցին ինքնաթիռով։ Նրանք բերին տեղեկություններ, ներառյալ նաև կինոժապավեն՝ թնդանոթի նկարով։ Նրանցից միայն մեկը չվերադարձավ։

Կալիբրը, պտուտակի կտրվածքը, վառոդը, արկի քաշը, լիցքը, բարձրացման անկյունը — հրետանավորների համար հետաքրքրություն ներկայացնող բոլոր տվյալները ներկայացրին կամավորները Շանտիլիի հետախուզիչ բաժնին։ Այնուհետև այդ տեղեկություններն ուղարկվեցին հրետանու ֆրանսիական եքսպերտներին։ Ֆրանսիական, բրիտանական և ամերիկյան ֆիրմաները կարող եյին վերստեղծել այդ հրեշը։ Բայց ինչի՞ համար։ Գերմանական թնդանոթը խիստ ջլատեց Ֆրանսիայի քաղաքացիական ազգաբնակչության բարոյական վիճակը, և դա այն միակ արդյունքն է, վորին հասան գերմանացիները «Մեծ Բերտայի» միջոցով։ Այդ թնդանոթը ֆրանսիացիներին ապշեցրեց մի որով։ Հետախուզությունը, ձեռք բերելով այդ թնդանոթին վերաբերյալ բոլոր տվյալները, նորից ապացուցեց իր յեռանդն ու գործունեյությունը։

Յերբ խոսում են համաշխարհային պատերազմի մասին, ապա միշտ հիշում են ռազմական հետախուզության բացակայության կամ տապալման յերկու որինակ։

Առաջին օրինակը.— անգլո-ֆրանսիական միջերկրածովյան հզոր նավատորմը բրիտանական դե-Ռոբեկ ծովակալի հրամանատարությամբ ռմբակոծում էր Դարդանելի ամրությունները։ Գերդրեդնոուտ «Յելիզաբեթ թագուհին» կրակում էր թերակղզու ուղղությամբ, 15 դյույմանոց արկեր արձակելով ամրոցների ու այն նավերի վրա, որոնք զորք էին փոխադրում Մարմարա ծովում, նաև ցամաքային կոմունիկացիոն գծերի ուղղությամբ։ Այդ արկերի ներգործությունն այն աստիճան ավերիչ էր, որ գերմանացիների ամբողջ յեռանդը չէր կարողանում պահպանել Թուրքերի արիությունը։ Հնարավոր է, որ դարձյալ մեկ համազարկից հետո Թանկագին նեղուցը բացվեր հակառակորդի առջև։ Իսկ այդ՝ ազատ մուտք կապահովեր դեպի Սև ծովը և ապա չսառչող ծովերով դեպի Ռուսաստան, կապահովեր ռազմանյութերի, հանդերձանքի ու սանիտարական գույքի ազատ փոխադրումը և այնքան անհրաժեշտ հացահատիկի արտահանությունը Յեվրոպայի շտեմարանից։ Այդ կպաշտպաներ նաև Գալիպոլիի կոտորածից, կպահպաներ միքանի հազար մարդկանց կյանքը յերկու կողմերի համար՝ Միջագետքում ու Պաղեստինում և առնվազն մեկ միլիոն մարդկանց կյանքը՝ ռուսական ու ռումինական ճակատներում, որտեղ, զենքի պակասության հետևանքով, ճակատամարտերը 1915 թվականից հետո կատարյալ կոտորածի նման էին։ Բայց դաշնակիցները հաշվի չառան դրությունը։ Թուրքական կառավարությունը, ինչպես հետագայում դաշնակիցներն իմացան ամերիկյան դեսպան Հենրի Մորգենտաույից, համոզված լինելով, որ դե-Ռոբեկի եսկադրան կգրավի Կոնստանդնուպոլիսը, խուճապահար փախչում էր Փոքր Ասիա, պաշտոնական արխիվները բեռնած այն գնացքների վրա, որոնք պետք է Անատոլիա ուղևորվեյին։ Յեվ այդպիսի րոպեյին դաշնակիցները դադարեցրին ռմբակոծությունը։ Հետախուզության բացակայությունը, որը կկարողանար ժամանակին տեղյակ դարձնել հավանական հաջողության մասին, հասցրեց այն բանին, որ դաշնակիցների ծովային ուժերը ձեռքից բաց թողին իրենց բոլոր առավելությունները։

Մի այլ օրինակ.— 1917 թվականը պարտվողականության կատաղի պրոպագանդի տարի յեր Ֆրանսիայում։ Պատերազմից հոգնած յերկրի զորքի բարոյական վիճակը խիստ ճնշված էր։ Այն բանակի մարտունակությունը, որը մեկ տարի դրանից առաջ հակառակորդի տեղատարափ կրակի տակ պահպանում էր Վերդենը, ուժեղ կերպով խախտվել էր։ Միքանի զորամասեր խռովություն բարձրացրին, չցանկանալով մեկնել վտանգավոր հատվածները։ Նրանք հետ դարձրին յերեսներն ու վերադարձան նույն այն ճանապարհով, որով յեկել էին, իսկ այն զորամասերը, որոնց նրանք պետք է փոխարինեյին, հնարավոր չէր յերկրորդ անգամ ռազմաճակատ ուղարկել։ Յեվ այդպես, մի ամբողջ օրվա ընթացքում, ռազմաճակատի չափազանց կարևոր հատվածը պաշտպանվում էր մի բուռը հրետանավորների ու սապյորների միջոցով։ Սակայն գերմանական հետախուզությունն այդ հատվածում չուներ հետախույզներ, որոնք տեղյակ լինեյին ստեղծված ամբողջ դրության մասին և ժամանակին իրազեկ դարձնեյին գերմանական հրամանատարությանը։ Վճռական գրոհն այդ օրը պատերազմի ամենահեշտ նվաճումը կհանդիսանար արևմտյան ճակատում, բայց վոչ մի գրոհ չձեռնարկվեց։ Ֆրանսիացիներն շտապ կարգով զորք փոխադրեցին ճեղքվածքը ծածկելու համար, իսկ Կիլայխտրում գտնվող գերմանացիները կույր էին և չէին կռահում ֆրանսիացիների թուլությունը։

Գեներալ Կոքսը՝ բրիտանական եքսպեդիցիոն ուժերի հետախուզական բաժնից, չափազանց խորաթափանց ու լավատեղյակ մարդ էր։ 1918 թվականի փետրվարին և մարտի սկզբներին նա վոչ միայն ստույգ կերպով նախագուշակեց այն տեղամասը Պիկարդիայում, որտեղից Լյուդենդորֆը պատրաստվում էր հարձակման անցնել, այլև մատնանշեց այդ հարձակման օրը (մարտի 20 ին կամ 21-ին)։ Կոքսը և նրա զինակիցները համարյա ստույգ կերպով հաշվել էին այն ուժերի թիվը, որ Լյուդենդորֆը և ֆոն Գուտյերը մտադիր էին ուղարկել Հաուֆի 17-րդ դիվիզիայի դեմ՝ ավելի քան 64 կիլոմետր յերկարության

ունեցող ճակատով։ Նրանք հաղորդեցին, վոր գերմանական այն 60 դիվիզիաներից, վորոնք հարձակվելու յին այդ ճակատում, 23-ը կհարձակվեն անմիջականորեն Սեն-Կանտենի վրա, վորտեղ Հաուֆն ուներ ընդամենը միայն 4 դիվիզիա։ Սակայն չնայած այդ աստիճան վորոշակի նախազգուշացմանը, լրացուցիչ ուժեր չուղարկվեցին։ Մարտի 21-ի լուսադեմին մառախուղի հետևից յերևացին գրոհող գերմանական զորքերը, իսկ լրացուցիչ ուժերը հասան միայն մարտի 24-ին, և այն ել աննշան թվով՝ ընդամենը միայն 3 դիվիզիա։ Այս կոպիտ վրիպման համեմատությամբ հետախուզության փոքրաթիվ զանցանքները կորցնում են ամեն մի նշանակություն։

Զորահավաքը Ֆրանսիայում պատերազմի առաջին յերեք շաբաթներին չափազանց վատ եր կազմակերպված։ Գերմանական միքանի հրամանատարների կարծիքով, կարելի յեր ոգտագործել այդ հանգամանքը և խուսափել բելգիական չեզոքությունը խախտելուց։ Նրանք գտնում եյին վոր վերջին դեպքում Մեծ Բրիտանիան անմիջապես հենց չեր միանա պատերազմին և գերմանական նավատորմը հնարավոր կլիներ ոգտագործել վորպես հարձակողական զենք Ֆրանսիայի ու Ռուսաստանի դեմ։

Լիեժի պաշտպանությունն առաջին խոչընդոտն եր, վոր չեր նախատեսված գերմանական շտաբի կողմից։ Բնականաբար հետախուզությանը մեղադրեցին այն բանի համար, վոր նա ցույց ե տվել փակ դուռը, փոխանակ ցույց տալու բաց լուսամուտը։

Պատերազմի ժամանակաշրջաններից մեկում հետախուզության անգլիական սպաները հրահանգ ստացան չխնայել վոչ ծախս, վոչ աշխատանք՝ Ֆոկկերի այն նոր ինքնաթիռի գծագրերն ու սպեցիֆիկացիաները ձեռք բերելու համար, վորը հենց նոր եր ընդունվել գերմանական ոդային ուժերի սպառազինման կազմի մեջ։ Գերմանական մի դըրժգոհ յենթասպայի, վորը դեռ անցյալում ել կապեր եր ունեցել Բելգիայում գտնվող բրիտանական մի գործակալի հետ, հաջողվում ե համոզել, վոր նա թռչի իր Ֆոկկերով և վայրեջք կատարի բրիտանական ճակատի թիկունքում։

Յենթասպան ուրախությամբ ընդունում ե 10 ֆունտ ստերլինգ կանխավճարը և դարձյալ 50 ֆունտ ստերլինգ ել ստանում և ինքնաթիռը հաջողությամբ տեղ հասցնելուց հետո։ Անկասկած, այն ամենաուժեղ շարժառիթը, վոր բրիտանական գործակալներն ոգտագործեցին յենթասպային համոզելու ժամանակ, այն հայտարարությունն եր, թե անձնապես գործակալի համար պատերազմը կավարտվի բարեհաջող։

Շատ դասալիքներ փորձում եյին լավ ընդունելություն ապահովել իրենց համար, քիչ թե շատ հետաքրքրական տեղեկություններ հաղորդելով իրենց հրամանատարների պլանների մասին։

1917 թվականին միքանի ելզասցիներ դասալքում են և անցնում ֆրանսիացիների կողմը, նախազգուշացնելով նրանց պատրաստվող գրոհի մասին, վորին, դասալիքների կարծիքով, նրանք առիթ չեյին ունենա մասնակցելու։ Հետախուզության սպաները զբաղվեցին այդ մարդկանցով, քանի վոր յերեքամյա կռիվն ամենևին չեր վկայում ելզասցիների ազնվության մասին։ Արդյոք գերմանական հրամանատարությունը չի ցանկանում ֆրանսիացիներին նախապատրաստվող գրոհի միտք ներշնչել,— մտածեցին ֆրանսիացիները։ Բայց այս անգամ հետախուզությունը գործում եր չափազանց դանդաղ։ Նախատեսվող գրոհն սկսվեց ճիշտ մատնանշված ժամկետին, և ֆրանսիական զինվորները, վորոնք ամենայն հավանականությամբ հավատացել եյին ելզասցիների հաղորդած տեղեկություններին, չարաչար ջախջախվեցին, փոխանակ հետ մղելու գրոհը, յեթե այդպիսի նախազգուշացումն ինչպես հարկն ե ոգտագործվեր նախապատրաստման համար։

Համաշխարհային պատերազմից միքանի տարի առաջ Բեռլինի «Վիկտորիա» ապահովագրական ընկերությունն իր «հատուկ բաժանմունքն» ուներ Փարիզում, ըստվորում այդ բաժանմունքի բոլոր ծառայողներն ու գործակալները պահեստի պրուսական սպաներ եյին։ Յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ բոլոր ծառայողները փոխարինվում եյին նորերով և վերադառնում Բեռլին, բայց

նախքան վերադառնալը նրանցից յուրաքանչյուրը պարտադիր կերպով էքսկուրսիա յեր կատարում հանրապետության արևելյան դեպարտամենտներում։ Ապահովագրության բոլոր մասնագետները նախապատրաստվում եյին ռազմական հետախուզության մեջ աշխատելու համար։ Յերբ պատերազմն սկսվեց, նրանք արդեն պատրաստ եյին։

Գուցե այժմ հասել է ժամանակը հետախուզությանը մեղադրելու և ասելու, վոր գերմանական գեներալները նետվեցին առաջ նրա համար, վոր շատ լավ գիտեյին ճանապարհը։ Միքանի տարի սրանից առաջ մի գնդապետ դասախոսություններ եր կարդում Ֆրանսիական գլխավոր շտաբի ակադեմիայում։ Դասախոսությունները գրավեցին մասնագետների ուշադրությունը, վորովհետև դասախոսը վարպետորեն ծաղրում եր գերմանացիներին՝ 1870 թվականին նրանց կիրառած տակտիկայի համար։ Հետագայում այդ դասախոսը, վորի անունն եր Ֆերդինանդ Ֆոշ, իրեն ցույց տվեց վորպես մանեվրի վարպետ, ուստի մենք էլ ավելի մեծ վստահությամբ կարող ենք դատապարտել պատերազմը վարելու պրուսական մեթոդները։

Բայց ամենաաբսուրդ ու անիմաստ յերևույթը գերմանական բանակում—այդ կոնֆլիկտներն եյին ռազմական ու ծովային հետախուզական ծառայությունների միջև։ Նրանցից յուրաքանչյուրն ստանում եր զգալի գումարներ (վոչ պակաս 12 միլիոն մարկից) և, այնուամենայնիվ, յուրաքանչյուրը նախանձում եր գաղտնի բյուջեյում մյուսի գրաված տեղին։ Թե ինչպիսի ընդհարումներ տեղի եյին ունենում մինչև 1914 թվականի օգոստոսը,—հայտնի չէ, բայց յերբ վրա հասավ ճգնաժամը, հետախուզության յերկու բաժիններն էլ գտնվում եյին կարծես «քաղաքացիական պատերազմի» վիճակում, մրցում եյին միմյանց հետ և միմյանց վերաբերվում եյին ավելի մեծ թշնամությամբ, քան դեպի հակառակորդը։ Ռազմական հետախուզության գործակալների բոլոր տեղեկությունները համարվում եյին հակասական և զուրկ վորևէ արժեքից։ Այդպես եյին պընդում ծովային հետախուզության սպաները, բայց յերբ ծո-

վային հետախուզության տեղեկություններն ընկնում եյին ռազմական հետախույզների ձեռքը, վերջիններս էլ ավելի գազազած եյին ցեխը կոխում այդ տեղեկությունները։ Դաշնակիցների գործակալներն ու այլ աշխատակիցները, ինչպես նաև հետախուզությունը, այդ կոնֆլիկտն օգտագործում եյին իրենց օգտին—առաջինները կողոպտում եյին գանձարանը, իսկ մյուսները ձեռք եյին բերում իրենց համար անհրաժեշտ տեղեկություններ։ Հակառակ դրան պատերազմի շրջանում դաշնակիցների հետախուզությունները համագործակցում եյին համերաշխ կերպով. մի բան, վորը վոչ միշտ կարելի յե նշել այդ պետությունների քաղաքացիական կամ ռազմական իշխանությունների վերաբերմամբ։

Գաղտնի ծառայության պրոֆեսիոնալների կոլեկտիվի մեջ ներհոսում եյին բազմաթիվ կամավորներ, մի հանգամանք, վորը վկայում է, վոր նորեկներին լավ ընդունելություն եր ցույց տրվում։ Հրետանային հիանալի հետախուզության կազմակերպումը չափազանց կարևոր մի ներմուծանք եր, վոր ֆրանսիացիները մտցրին ընդհանուր գործի մեջ։ Այդ կազմակերպության նպատակն եր ստանալ այն բոլոր տեղեկությունները, վորոնք վերաբերվում են հակառակորդի հրետանուն, ըստ վորում օգտագործվում եր նույնիսկ քաղաքացիական բնակչությունը՝ ինչպես տղամարդիկ, այնպես և կանայք, վորոնք յերկար ժամանակ, ռազմաճակատին մոտիկ գտնվելու շնորհիվ, սովորել եյին ձայնից վորոշել գերմանական մարտկոցները։ Խաղաղության կընքելուց կարճ ժամանակ առաջ դաշնակից խոշոր պետություններից յուրաքանչյուրն արդեն ձեռնարկել եր հատուկ հրետանային հետախուզական ծառայության կազմակերպմանը՝ ֆրանսիական բանակի որինակով։

Գերմանիայում սովորաբար գանգատվում եյին այն բանից, թե այլևս յերբեք չի լինի այնպիսի հետախույզ, ինչպես Վիլհելմ Շտիբերն է։ Այդ նշանակում եր, վոր հետախուզության մեծ վարպետի ժառանգները, չնայած իրենց բոլոր տվյալներին, նրա միայն պատահական ընդօրինակողներն եյին։ Պատերազմի ժամանակաշրջանում Լոնդո-

նում, մի մեկուսացված առանձնասենյակի մեջ, կարելի չեր հանդիպել (բայց վոչ այլ կերպ, քան նրա համաձայնությամբ) մի բարեհոգի փոքրիկ մարդու, վորը նավաստի չեր, փոխծովակալ ու գաղտնի սպասարկության պետ և վորի մեթոդներն անհայտ եյին նույնիսկ Բիսմարկի հետախույզի համար։ Սըր Ռեջինալդ Հոլլը արքայական նավատորմում հայտնի յեր վորպես հրետանու հարցերի եքսպերտ և վորպես մասնագետ՝ պայթուցիկ նյութերի բնագավառում։ Բացառիկ հնարամտության տեր այդ սպան (հնարամտություն, վորը մասնավորապես դրսևորվեց 1911 թվականին մի նավ վարպետորեն փրկելու մեջ), ուներ հսկայական անձնական հմայք։ Նա հիանալի տիրապետում եր ոտար լեզուների և ուսումնասիրում եր համաշխարհային քաղաքականության հարցերը։ 1914 թվականի հոկտեմբերին նա նշանակվեց ծովային հետախուզության պետ։ Փայլուն գավառիր ու ջերմ հայրենասեր, վորևե անձնական հաշիվներից հեռու Հոլլն իր ստորադրյալներին վոգեշնչում եր դիմելու բազմաթիվ տարօրինակ ու վտանգավոր ձեռնարկումների։ Նրա նվաճումները, շատ անաչառ դիտողների ստիպում եյին բրիտանական գաղտնի սպասարկության բաժինը ճանաչել, վորպես ամենագործունյան այն բոլոր բաժինների մեջ, վորոնք համաշխարհային պատերազմի շրջանում գործում եյին զանազան տեղերում։ Հոլլը միշտ ձգտում եր գտնել առավել գործուն միջոցներ, պատերազմը շահելու համար։ Նրա հետ աշխատող ամերիկյան ծովային սպաները խոր հարգանքով եյին խոսում բրիտանական ծովային հետախուզության մեջ գոյություն ունեցող փոխադարձ համագործակցության ու ընկերական վերաբերմունքի մասին։

Բրիտանական ծովային հետախուզական բաժինը մեծագույն նվաճումներ ձեռք բերեց շնորհիվ ջրի տակ սուզվելու հմուտ ընդունակությանն այն մարդու, վորն արժանի յե ավելի բանի, քան թռուցիկ ծանոթությունը։ Նավաշինարար Ե. Ձ. Միլլերը չափազանց ընդունակ ջրասույզ եր։ 1914 թվականին ծովային դպրոցին կից ջրասուզային գործի հրահանգիչ նշանակվելուց մեկ տարի

հետո, նա առաջադրանք ստացավ իջնել ջրի տակ, գտնելու գերմանական այն սուզանավը, վոր կարճ ժամանակ դրանից առաջ թնդանոթի կրակից խորտակվել եր Կենտի ծովափին։ Խորտակված սուզանավի յենթադրական տեղը նշված եր խարսխանշով։ Միլլերին հանձնարարվում եր ձեռք բերել սուզանավի և նրա վրա յեղած սարքերի կոնստրուկցիայի ու կառուցվածքի վերաբերյալ բոլոր հնարավոր տվյալները, վորոնց մասին ծովակալությունը չեր կարողանում բավականաչափ տեղեկություններ ստանալ գերմանական ծովային բազաներին կից գործող իր գործակալներից։ Ոդատար խողովակները խճճելու վտանգի տակ, Միլլերն արկի բաց արած անցքի միջով սողոսկում ե սուզանավի կորպուսը և ուշադիր հետազոտում սուզանավի ներքին կառուցվածքը։ Միլլերը սոսկ նավաստի չեր, վորը կատարում եր իր պարտքը, նա նաև մեծ նախաձեռնության տեր ջրասույզ եր։ Նա իր համար ճանապարհ ե բաց անում դեպի սպայական խուցը, վոր գտնվում եր նավի հետին մասում, և սեյֆի մեջ գտնում ե չափազանց թանկագին մետաղե մի արկղ, վորի միջից դուրս են գալիս ականային նոր սարքերի պլաններ, գերմանական ծովային կոդերի յերկու գիրք և մի գաղտնի կոդ՝ կայսերական ծովային նավատորմի հետ կապ պահպանելու համար։

Այդպիսով սկսվում ե Լոնդոնի ծովային հետախուզական բաժնի գաղտնի աշխատանքը, վորի մեջ հռչակավոր «40-րդ սենյակը» կարևոր դեր խաղաց։ Միլլերի սկզբնական հաջողությունն անսպասելի մի բան եր, իսկ այնուհետև նրա արտակարգ ճարպկությունը, համարձակությունն ու մեծ խորություններում ճնշմանը դիմադրելու նրա ընդունակությունն ոգտագործվեցին այնքան, վորքան այդ հնարավոր եր։ Ստեղծվեց հատուկ մի կազմակերպություն, վորը նրան, ոդային պոմպերը և միացած հանդերձանքը փոխադրում եր Բրիտանական ծովափի այն կետը, վորտեղ խորտակվել եր մի վորևե գերմանական սուզանավ։ Սուզանավերն աղետալի եյին յենթարկվում և ընդմիշտ անհետանում բոլորի համար, բացի Միլլերից։ Նա սլանում եր այնտեղ, ուր հաղթող նավը թողնում եր խարսխանիշը, և յեթե միայն յե-

ղանակը թույլ էր տալիս, իջնում էր ծովի հատակը։ Նա հաճախ հարկադրված էր լինում օգտագործել պայթեցնող արկեր՝ սուզանավի ներսը թափանցելու համար, բայց ամեն անգամ թափանցում էր սուզանավի մեջ, չնայած սպառնացող վտանգին, և ապա յերևում ջրի յերեսը, ձեռքին բռնած մի նոր մետաղե արկղ, վորը պարունակում էր հակառակորդի նոր կոդերն ու պլանները։

Ժամանակի ընթացքում նա նույնքան լավ ծանոթացավ գերմանական սուզանավի ներքին կառուցվածքին ու բոլոր հարմարություններին, ինչպես յուրաքանչյուր գերմանական ինժեներ։ Մինչև 1918 թվականի նոյեմբեր ամիսն արդեն ծովի հատակին պառկել եյին ավելի քան 60 սուզանավ և դրանք բոլորը, չնչին բացառությամբ, հետազոտված եյին Միլլերի կողմից։ Գերմանական նավատորմի հրամանատարները մշտապես փոխում եյին ականային դաշտերի դասավորությունը, գաղտնի կոդերն ու հատուկ հրամանները, բայց բրիտանական հետախուզությունը արագորեն իմանում էր այդ բոլոր փոփոխությունների մասին։

Լինում եյին դեպքեր, յերբ 24 ժամվա ընթացքում ծովակալության մեջ ստացվում էր մինչև 2000 բռնված հաղորդագրություն։ Բոլոր գերմանական կոդերն ու ծածկագրերն արագորեն վերծանվում եյին, չնայած վոր սկզբնական շրջանում այդ փաստաթղթերից յուրաքանչյուրը մի կատարյալ հանելուկ էր հանդիսանում։ Անգլիացիները պնդում են, վոր նրանք Դոգջեր Բանկի մոտ տեղի ունեցած ճակատամարտից մեկ օր առաջ գիտեյին գերմանական ուժերի դուրս գալու մասին, տեղյակ եյին նրանց թվական կազմին ու շարժման ուղղությանը և գիտեյին նաև Յուտլանդյան ճակատամարտի նախապատրաստության մասին, շնորհիվ բռնված ու վերծանված ռադիոհրամանների։ Սակայն մի չափազանց լավատեղյակ էքսպերտ գտնում է, վոր բրիտանական ծովային հետախուզությունը հանկարծակիի բերվեց Յուտլանդյան ճակատամարտի ժամանակ, վորովհետև վոչ բռնված հաղորդագրությունները, վոչ Կոպենհագենից գործակալների ուղարկած զեկույցները ժամանա-

կին հաշվի չեյին առնվել։ Գուցե այդ ճիշտ է, սակայն «40-րդ սենյակում» վերծանված հարյուրավոր այլ գրությունները, հաղորդագրությունները՝ յերթևեկող սուզանավերի մասին, հարձակման պատրաստվող ցեպելինների մասին, այնուհետև նավատորմին տրվող կոդային հրամանները, արտաքին գործերի մինիստրության հրահանգները չեզոք յերկրներում գտնվող դեսպաններին — կասկածից վեր է, վոր օգտագործվում եյին դաշնակիցների օգտին։ «40-րդ սենյակից» դուրս յեկավ Ցիմմերմանի այն կործանիչ հեռագիրը՝ ուղղված Մեքսիկա գերմանական դեսպան Ֆոն Եկգարդտին, վորի պատմությունը նկարագրված է դեսպան Ուոլտեր Հայնս Պեյջի հռչակավոր նամակներից մեկի մեջ։

Պրեզիդենտ Վիլսոնը դեռ շարունակում էր չեզոքություն պահպանել։ Նա հասկանում էր, վոր յերկիրը կանգնած է պատերազմի շեմքին, բայց չէր ցանկանում ընթանալ իր բոլոր իդեալներին հակասող ուղիով։ Ցիմմերմանը ցանկանում էր շփոթություն ստեղծել Նոր Աշխարհում, խուսափելու համար յեվրոպական գործերի մեջ Ամերիկայի միջամտությունից։ Նրա հեռագիրը Ֆոն Եկգարդտին առաջարկ էր պարունակում Մեքսիկայի հետ՝ ընդդեմ Միացյալ Նահանգների դաշինք կնքելու և Ճապոնիայի հետ համագործակցելու մասին։ Մեքսիկային հրապուրելու առարկա պետք է ծառայեր ԱՄՆ-ի հարավ արևմտյան մասում գտնվող տերիտորիայի հափշտակումն ու անեքսիան։ Այդ առաջարկն ամբողջովին ֆանտաստիկ էր, սակայն դա այն վճռական խթանը հանդիսացավ, վորն ամերիկյան կառավարությանը հարկադրեց մտնել պատերազմի մեջ։

Լայն հասարակության համար անհայտ մնաց այն դերը, վոր խաղացել էր սըր Ռեջինալդ Հոլլը։ Ցիմմերմանի հեռագիրը բռնել եյին բրիտանական ծովային հետախուզության գործակալները և վերծանել եյին Հոլլի ստորադըյալները։ Բայց հետագա դիտողությունները հեշտացնելու նպատակով, ծովային հետախուզության պետը զայրացած գերմանական չինովնիկներին ուղարկեց կեղծ հետքով։ Նա Լոնդոնի միքանի ժուռնալիստների, վորոնց հոդվածները

կարող եյին Գերմանիա ընկնել Հոլանդիայի, Դանիայի կամ Շվեյցարիայի վրայով,— առաջարկեց իրեն մեղադրել այն բանի համար, վոր ծովային բաժինն անընդունակ յեղավ այդ կարևոր հաղորդագրությունը բռնել Ֆոն Էկգարդտին դեռ չհասած, մինչդեռ Մեքսիկայում գտնվող ամերիկյան գաղտնի գործակալները կարողացան հեշտությամբ գողանալ այդ փաստաթուղթը։

ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԻՍՏԵՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ռազմական լրտեսությունը հետախուզության առանձնապես վտանգավոր տեսակն ե։ Հետախուզությունը պատվավոր զբաղմունք եր մինչև այն ժամանակ, յերբ պատերազմն ընդունեց վիթխարի թափ, վորը պահանջում եր մոբիլիզացիայի յենթարկել ամբողջ ժողովուրդներ։ Նույնիսկ մարշալները զգեստը փոխում և հետախուզության եյին գնում (որինակ՝ մարշալ Պեյուն)։ Ֆրանսիական մեծ մարշալ Կատինան պարծենում եր այն բանով, վոր մի անգամ ինքն ածխահատի կեղտոտ ցնցոտիներ ե հագել Առաս թափանցելու համար, վորը պաշարել եր իր բանակը։ Անգլիական թագավոր Ալֆրեդը ևս, վոչ պակաս «մեծ» եր, վորովհետև զգեստը փոխած գաղտնի այցելեց դանիացիների ճամբարը, գնահատելու համար այն վտանգը, վոր սպառնում եր նրա արևմտյան սաքսոնական թագավորությանը։

Ասպետության դարաշրջանում հետախուզությունն ամոթաբեր զբաղմունք եր համարվում, և վորոշ ժամանակ բանակների հրամանատարները հրաժարվում եյին ոգտվել հետախուզության ծառայություններից։ Այդ ժամանակ գողերը կախաղան եյին բարձրացվում սովորական գողության համար, իսկ պրոֆեսիոնալ լրտեսը վայելում եր վորոշ արտոնություններ։ Ռազմական հետախույզ Ռոբինզոնը, վորը ձերբակալվեց Լոնդոնում 1757 թվականին, Տաուերի բանտում նստեց ընդամենը 6 ամիս, վորից հետո ազատ արձակվեց։ Դրանից կարճ ժամանակ անց վոճ դոկտոր Հենսի, վորը դատվել եր 1758 թվականի հուն-

սին, անսպասելի կերպով դատապարտվել ե կախաղանի։ Դատի ժամանակ նա հարցնում ե՝ կարելի՞ յե արդյոք հետախույզի հետ վարվել այնպես, ինչպես սովորական ժուլիկի հետ (Կոլեն, «Սաքսոնական մարշալի պատերազմը»)։

Մենք տեղեկություններ չունենք այն մասին, թե ի կատար ածվե՞ց արդյոք Հենսիի մահապատիժը, բայց այդ մահապատժի հնարավորությունն իսկ մեծ հուզմունք առաջացրեց գաղտնի գործակալների շրջանում։ Մահապատիժն ահեղ նորմուծություն եր և նա վախեցրեց Անգլիայում Լյուդովիկոս 15-րդի համար աշխատող շատ գործակալների։ Ֆրիդրիխ Մեծը մոտավորապես նույն այդ ժամանակ վերջ դրեց հետախուզությանը՝ վորպես ուրախ ավանտյուրայի։ Ֆրիդրիխն աչքի յեր ընկնում զորավարի բնածին տաղանդով և այդ ամենից ավելի պարզ արտահայտվեց հետախույզների ոգտագործման մեջ։ Նրան համարում են կազմակերպված ռազմական հետախուզության հայրը, իսկ հետախուզության մայրն ինքը՝ անհրաժեշտությունն եր։

Սկզբում Ֆրիդրիխը յերազում եր Վոլտերի դափնիների մասին։ Նրա պամֆլետները տարածվում եյին ամբողջ Յեվրոպայում։ Ֆրիդրիխը, վորը բոլորին հայտնի յե վորպես «հողեր հափշտակող», իր «հանցագործությունների» ցուցակին ավելացրեց վատ մաններներն ու ցինիզմը։ Զափազանց ազդեցիկ բուդուարներում քննարկվում եր այն հարցը, թե ինչպես խելքի բերել նորելուկին։ Շուտով Ֆրիդրիխը հասկացավ, վոր Ռուսաստանն ու Ֆրանսիան միանում են Ավստրիայի հետ և վոր Սաքսոնիան ու Շվեդիան կհետևեն նույն այդ որինակին։

Փոխանակ զբաղվելու փիլիսոփայությամբ ու պամֆլետներով, Ֆրիդրիխը պետք ե դառնար իր ժամանակվա մեծ զորավարը, այլապես այդ դաշինքը կճզմեր նրան։ Նա պետք ե հաշվի առներ իր փոքր, աղքատիկ թագավորության իրադրությունը և լավ իմանար հակառակորդի ռազմական ուժը։ Նա մի անգամ արդեն հաղթել եր Ավստրիային, բայց վորպեսզի հաղթեր նաև այդ յերկրներին, նա պետք ե տեղյակ լիներ նրանց բոլոր մտադրություննե-

րին։ Ուստի, Ֆրիդրիխը գաղտնի սպասարկությունը կազմակերպեց այնպես, վոր կարողանար իր պլանները կառուցել լայն ու փաստական ինֆորմացիայի հիման վրա։ Նրա գաղտնի սպասարկությունն այն ժամանակվա ամենախոշոր ռազմական նորմուծությունը հանդիսացավ, ըստվորում գաղտնի պատերազմի նրա մեթոդները մեկ ու կես դար հետո ել դեռ պահպանել եյին իրենց ուժը ռազմական գործի բոլոր մյուս բնագավառներում։ Ֆրիդրիխը պահում եր հարյուրավոր հետախույզներ և անձամբ ստուգում ու համեմատում եր նրանց հաղորդած զեկույցները։ Նա իր գործակալներին բաժանում եր չորս կատեգորիայի— 1) սովորական լրտեսներ, վորոնք հավաքագրված եյին չքավորության միջից և գոհ եյին աննշան գումար վաստակելու կամ մի վորևե զինվորականի ծառայություն մատուցելու հնարավորությունից, 2) ուրիշներին խիստ նման մարդիկ, անհուսալի ռենեգատներ ու վուլգար տեղեկատուներ, վորոնք պիտանի յեն գլխավորապես հակառակորդի մոտ կեղծ տեղեկություններ տարածելու համար, 3) բարձրաստիճան մարդիկ, պալատականներ ու ազնվականներ, շտաբի սպաներ ու դավադիրներ, վորոնք ամբողջ ժամանակ պահանջում եյին խոշոր գումարներ կամ արտոնություններ և 4) այնպիսի անձինք, վորոնք հարկադրված են հետախույզներ դառնալ հակառակ իրենց ցանկության։ Պրուսական յեռանդուն թագավորը վոչ միայն կլասիֆիկացիայի յեր յենթարկում գործակալներին, այլև կանոններ եր մշակել բոլոր կատեգորիայի գաղտնի գործակալների հավաքագրման ու ոգտագործման վերաբերյալ։

Ֆրիդրիխը հաշվի չեր առել պատրիոտ-հետախույզին։ Նա ռեալիստ եր, ցինիկ և բացարձակ միապետ։ Պետություններ կառավարողները նրա ժամանակներում սակավ եյին գործ ունենում իսկական հայրենասիրության հետ։ Ֆրանսիական հեղափոխությունը դեռ Յեվրոպան չեր բոցավառել նացիոնալիստական խանդավառությամբ։ Սպառնալիքներ ու կաշառք, աստիճանը բարձրացնելու և վաստակ ձեռք բերելու խոստումներ—ահա այն միջոցները, վորոնցից ոգտվում եր Ֆրիդրիխը։

Այնպիսի քաղաքագետներ, ինչպիսիք եյին Գրոցիուսը և Մակկիավելլին, գրում եյին լրտեսների ոգտագործման ոգտին։ Բայց մեր որերին սըր Ռոբերտ Բադեն-Պաուելը վարկաբեկեց իրեն «Իմ՝ վորպես հետախույզի արկածները» գրքով։ Նապոլեոնը, վորն իր տրամադրության տակ ուներ խնամքով կազմակերպված ու թանկ նստող վոստիկանական գաղտնի սպասարկություն, հաճախ կրկնում եր՝ «Լրտեսն ի ծնե դավաճան ե»։ Նա հույսը դնում եր գլխավորապես կաշառքների և սպառնալիքների վրա։

Այսպիսով, հետախուզության սիստեմատիզացիայի գործում վոչ մի նորմուծություն չի յեղել մինչև այն ժամանակ, յերբ յերևան յեկավ մի այլ պրուսացի՝ Շտիբերը, Բիսմարկի ժամանակվա հետախուզության այդ մեծ վարպետը։ 1870 թվականին ռազմական լրտեսությունն ուժեղ չափով զարգացավ, ըստվորում գործակալները վխտում եյին ամենուրեք և իրենց պահում եյին այնպես, ինչպես մինչ այդ յերբեք չեյին պահել։ Շտիբերի առաջին փորձերը վերաբերում են մինչև 1866 թվականն ընկած ժամանակաշրջանին, յերբ նա Ավստրիայում կազմակերպեց այնպիսի հետախուզություն, վորի արդյունքները պատմության մեջ չունեյին իրենց հավասարը։ Նրա համար որինակ եր ծառայում վոչ թե Ֆրիդրիխը, այլ Մովսեսը։ Յերբ այդ մեծ մարգարեն իր 12 տոհմակիցներին ուղարկեց դիտելու յերկիրը, նա չսահմանափակեց նրանց զուտ տեղագրական բնույթի առաջադրանքով։ Յեհովայի հետ ունեցած սովորական խորհրդակցությունից հետո նա պատրաստ եր ստույգ ցուցումներ տալու ագրեսիվ գաղտնի ծառայության համար։ Յերբ Մոլտկեն հարձակվեց Մակ-Մագոնի վրա և անցավ Հռենոսը, Ֆրանսիայի հյուսիսային մասում, վորտեղ նա ներխուժեց, վխտում եյին պրուսական հետախույզները։ Շտիբերը Ստրասբուրգից մինչև Սենա ընկած տարածության վրա ուներ 36 հազար գործակալ։

Բիբլիական առաջնորդն իր տոհմակիցներին հրամայեց բարձրանալ սարի վրա, դիտել յերկիրը և այդ յերկրում ապրող մարդկանց, վորոշել՝ շատ ե նրանց թիվը, թե

քիչ, ուժեղ են նրանք, թե թույլ, ինչպիսին է նրանց հողը, ինչ քաղաքներ ունեն նրանք, վորտեղ են նրանք ապրում—վրաններում, թե տների մեջ։ Ապա նա խորհուրդ տվեց նրանց իմանալ, թե արգավանդ է արդյոք հողը և ինչ անտառներ կան այդ յերկրում։ Յեվ Շտիբերի կողմից Նապոլեոն 3-րդի տերիտորիան ուղարկված գումարտակները 1868 թվականից սկսած հավաքում եյին հենց այդպիսի տեղեկություններ։ Դեպի Փարիզ տանող ճանապարհի յուրաքանչյուր քայլափոխը նշված եր քարտեզի վրա և ստուգված մասշտաբով, կարծես թե ռազմական հարձակումը ճշգրիտ գիտություն է, ինչպես աստղաբաշխությունը կամ մաթեմատիկան։ Ֆրանսիական հակահետախուզությունը չափազանց թույլ եր և վոչինչ չեր կարող անել մեծածախ դավաճանությամբ զբաղվող 36 հազար ռեզիդենտների կամ տուրիստների դեմ։ Այդչափ մեծ թվով հետախույզների գործունեյությունը պետք է վոր շոշափելի լիներ։ Նրանք տեսնում եյին ամեն ինչ և փոշեծուծի նման ներծծում եյին այն ամենը, ինչ-վոր անհրաժեշտ եր Շտիբերի համար։

Այն անգերազանցելի արագությունը, վորով պրուսական բանակները 1870 թվականի կամպանիայի ժամանակ շարժվում եյին դեպի Փարիզ, զգալիորեն վերագրվում է Շտիբերի կողմից կատարված նախապատրաստությանը ներխուժման գոտիներում։ Այդ հաջողության միտքը հետագա 40 տարիների ընթացքում իշխում եր Յեվրոպայի բոլոր գաղտնի ծառայությունների և հետախուզության նախագծերի վրա։ Հետախույզներից նրանք, վորոնք չեյին պատրաստվում նմանվել Շտիբերին, պետք է, այնուամենայնիվ, պլաններ մշակեյին՝ այդպիսի վտանգը հետ մղելու համար։ Այս բոլորը հասցրեց հատուկ դպրոցների ստեղծման, վորը միակ նորմուծությունն եր ռազմական գաղտնի դպրոցի սիստեմում՝ Շտիբերի հաղթանակից մինչև համաշխարհային պատերազմի սկիզբն ընկած տասնամյակների ընթացքում։ Վորքան ել գրավիչ թվար նման հաստատությունը, այնուամենայնիվ, հետախուզական դպրոցը գլխավոր շտաբի միայն յերկրորդական ակադեմիան

է հանդիսանում, վորտեղ հետախուզական գործի ընդունակությունները կարող են կուլտիվացիայի յենթարկվել այնպիսի տեխնիկական պատրաստության հետ, վորն ապագա հետախույզի գործունեյությունը կուղղի անմիջական նշանակություն ունեցող բնագավառները։ Մինչև պատերազմը, գերմանական հետախուզական դպրոցները քիչ-շատ փառք եյին վայելում Յեվրոպայում։ Դասատուներն, անկասկած, չափազանց լավն եյին և վերին աստիճանի պահանջկոտ, բայց և այնպես յեղել են դեպքեր, յերբ մինչև համաշխարհային պատերազմն այդ դպրոցն ավարտած գերմանական գործակալները բանտարկության են յենթարկվել իրենց թույլ տված սխալների համար։

Դաշնակիցները պատերազմի շրջանում մշակեցին մի շարք կարգապահական տույժեր, վորոնք կիրառվում եյին գաղտնի սպասարկության մեջ թույլ տրված զանցանքների համար։ Շտիբերի հետախուզական մեխանիզմը հենց միանգամից կորցրեց իր հավասարակշռությունը, յերբ նա դեմ-հանդիման կանգնեց զգաստ հակառակորդին։ Յերբ Բրյուսելը նոր եր միայն գրավված, գերմանական սպաները, յերկաթուղով գալով այնտեղ, առանց վորևե տատանման, կառապաններին տալիս եյին այն շենքերի հասցեները, վորոնք բելգիական մայրաքաղաքում հատկացված եյին սպաների համար։ Այդ նմանում եր հիանալի կերպով կազմակերպված մի ուրախ ուղևորության։ Միևնույն ժամանակ դա գաղտնի պատրաստության շտիբերյան մի տրյուկ եր, բայց համարյա վերջին տրյուկն այդ չարագուշակ ու սպառնալի առաջխաղացումների մեջ։

Գերմանական սպասարկության դժբախտությունն այն եր, վոր նրա ղեկավարները չեյին կարողանում արագորեն կողմորոշվել այն նոր պայմաններում, վորի մեջ Գերմանիան ընկավ ֆրանս-պրուսական պատերազմից հետո։

Գերմանական սպասարկությունը բաժանվում եր բանակային հետախուզության, ծովային հետախուզության և անհատական կորպուսի։ Առաջինն աշխատում եր գլխավոր շտաբի ղեկավարությամբ, վորն, ըստ լուրերի, ցանկանում եր ղեկավարել նաև յերկրորդին։ Արտաքին գործերի

մինիստրությունը ղեկավարում եր յերրորդ կազմակերպությունը, ըստ որում այդ ղեկավարությունը կիրառվում եր կայսրի անմիջական հսկողության տակ։ Հետախուզական դպրոցները միացված եյին գլխավորապես գաղտնի սպասարկության առաջին յերկու բաժինների հետ, և դասարանները կոմպլեկտավորվում ու ղեկավարվում եյին վոչ ավելի գաղտնի կերպով, քան ռազմական գերատեսչության շատ մյուս բաժինները։ Գաղտնի սպասարկության պետերն իրենք եյին դասավանդում այդ դպրոցներում և մանրամասն քննարկում եյին զանազան հնարամիտ գործողություններ։ Գլխավոր շտաբի զինվորական ինժեներները դասախոսություններ եյին կարդում ամրությունների կառուցման մասին, յեռանկյունաչափությունից, տեղագրությունից ու գծագրությունից։

Հետախույզը պետք է կարողանա ճիշտ վորոշել վայրի բարձրությունը, անկյունները, հեռավորությունը և ռելյեֆը։ Մեկ խոսքով, նա պետք է դառնա դիտող, ըստ վորում իր դիտողությունների մեջ նա պետք է հենվի միայն իր տեսողության ու ինտուիցիայի վրա։ Հայտնի յե, վոր մինչև 1914 թվականի ամառը Մեծ Բրիտանիայում գործող մի գաղտնի գործակալ հեռավորությունը քայլերով չափելու և անկյունների պատահական դիտողության ու դրան հաջորդող յեռանկյունավորման միջոցով, յարդի ու վոտնաչափի ճշտությամբ հաշվել եր հյուսիսում գտնվող մի մեծ ու կարևոր կամուրջի չափը։ Առանց վորևե կասկած առաջացնելու տեղական բնակիչների մեջ, նա նույնիսկ վորոշել եր, թե քանի մարդ կարող է տեղավորվել այդ կառուցման մոտակայքում. Նա ուսումնասիրել եր կամուրջի հիմքը, կամրջասյուների յերկրաբանական տեսակը, և վորոշել, թե իր կարծիքով ինչ քանակությամբ դինամիտ եր անհրաժեշտ, Գերմանիայի և Բրիտանիայի միջև պատերազմ ծագելու դեպքում, այդ կամուրջը «հիմնական վերանորոգման» յենթարկելու համար։

Համաշխարհային պատերազմի ժամանակ հետախույզների պատրաստումը գերմանական դպրոցներում, ըստ յերևույթին, կատարվում եր հապճեպորեն, անփույթ կերպով և

վոչ գերմանական վոգով։ Մինչև պատերազմն այդ պատրաստությունը կատարվում եր այնպես, վոր վեց—ութը ամսվա ընթացքում դպրոցները տալիս եյին գործակալների այնպիսի շրջանավարտներ, վորոնց կրթությունն իրագեկ ու անաչառ անձանց կարծիքով չեր զիջում շատ տեխնոլոգիական ինստիտուտների տված կրթությանը։ Սակայն պետք է հաշվի առնել այն ճշմարտությունը, վոր տեխնոլոգիայի ինտենսիվ ուսումնասիրությունը հակառակ է տաղանդավոր հետախույզի բնությանը։ Շտիբերի-Շուլմեյստերի տիպի բնածին վարպետները յերբեք չեն ցանկանա դպրոց հաճախել։ Գուցե հենց դրանով է բացատրվում գերմանական գործակալների ակտիվությունը խաղաղ ժամանակ և նրանց լիակատար ձախողումը համաշխարհային պատերազմի պայմաններում։ Պետք է նաև նշել, վոր գերմանական սպասարկության ղեկավարները, չնայած իրենց դպրոցների նկատմամբ ունեցած վստահությանը, մինչև պատերազմը միշտապես գործ ունեյին մի շարք մութ անձնավորությունների հետ, վորոնք զբաղվում եյին բերդերի ուսումնասիրությամբ և ստացած տեղեկությունների վաճառքով նրան, ով վոր դրանց համար ավելի կվճարեր։

Մի կողմ թողնելով ռազմական հետախույզների՝ ժամանակի ընթացքում սրբագործված ֆրիդրիխյան կլասիֆիկացիան, պետք է նշել, վոր ժամանակակից հետախույզը, անկախ իր նշանակությունից ու բնույթից, իր պետերին հայտնի յե միայն իր աշխատանքի տեսակով։ Հետախույզը կարող է լինել ռեզիդենտ, նստած մի վորևե տեղում և սպասելով բարենպաստ մոմենտի, կամ թե շրջագայելով յերկրում՝ նրա գաղտնիքների մեջ թափանցելու նպատակով։ Վերջինիս աշխատանքը կարող է չափազանց ոգտակար լինել խաղաղ ժամանակ և յերբեմն չափազանց եֆեկտիվ արդյունքներ տալ պատերազմի ժամանակ։ Շրջագայելով յերկրում, հետախույզ-ռեզիդենտն ավելի պակաս չափով է կասկածելի և տալիս է ավելի ճշգրիտ տեղեկություններ, քանի վոր նա հաղորդում է միայն այն մասին, ինչ տեսել է իր սեփական աչքերով։ Սիրողը, պրոֆեսիոնալը, հայրենասերը, ռենեգատը, վարձկանը—բոլորը կարող են

զգաստ, ճշմարտախոս ու շրջահայաց լինել կապի միջոցների ընտրության գործում։ Նրանցից յուրաքանչյուրը կարող է խուսափել անզգույշ արարքներից, իսկ հետախուզության վոչ մի պետ դրանից ավելին չի պահանջի նրանցից։ Ռեզիդենտին շատ ավելի դժվար է հայտաբերել, և սովորաբար հակառակորդը նրան գտնում է հետախույզ-սուրհանդակներին կամ զեկույցներ հավաքողներին հետապնդելու միջոցով, վորոնք յերբեմն կոչվում են «փոստարկղներ»։ Յերբեմն ռեզիդենտն ինքն է մատնում իրեն, տեղեկությունն անմիջականորեն ուղարկելու մի վորևէ ֆանտաստիկ փորձով։

Գերմանական սպասարկության առանձին գործակալները համախմբված եյին մի կազմակերպության մեջ, և պատերազմ հայտարարվելուց հետո հակառակորդի հակահետախուզության կողմից հայտաբերված յուրաքանչյուր գործակալ իր հետևից տանում եր մի շարք ուրիշ գործակալների։ Հակահետախուզությունը հայտաբերեց Ֆրիդրիխ Մեծի սիստեմի մեջ Շտիբերի և նրա կլիկի կողմից կատարված նորմուծությունների մեծ մասի սնանկությունը։ Ժամանակակից գաղտնի սպասարկությունն ապացուցել է, վոր հետախույզների լեգեոնները, կոհորտները և նույնիսկ միասին գործող փոքրիկ խմբերն ավելի մեծ վտանգ են ներկայացնում, քան թե առանձին-առանձին ղեկավարվող և միմյանցից անջատ գործող նույն թվով գործակալները։ Զինվորական մասնագետները, վորոնք սիրում են ընդգծել, վոր պատրաստությունն ու կարգապահությունը մարդկանց ամբոխը դարձնում են կարգապահ բանակ, բնականաբար, չեյին կարող համաձայնվել այն մտքի հետ, վոր հետախույզի համար անբարենպաստ են այն պայմանները, վորոնք բարենպաստ են զինվորի համար։ Համաշխարհային պատերազմի սկզբին, հետախուզական բաժինների այն ղեկավարները, վորոնք գործում եյին Շտիբերի սիստեմով, ստիպված յեղան սեփական փորձի հիման վրա հանգել ընդունված սիստեմների ու կանոնների ժխտման՝ պատերազմի առաջին իսկ շաբաթներից։

Պատերազմ հայտարարվելուց մեկ ամիս հետո, Լոնդոնի հակահետախուզությունը ծանոթացավ վոմն Կարլ Գուստավ Եռնստի՝ մի վարսավիրի հետ, վորն իրավաբանորեն բրիտանական հպատակ եր, քանի վոր ծնվել եր Անգլիայում։ 16 տարի այդ մարդն ապրում եր Կալեդոնյան Ռոդի վրա գտնվող միևնույն տան մեջ և, ամենայն հավանականությամբ, այդ ամբողջ ժամանակամիջոցում փոստ է ստացել, վորպես Մեծ Բրիտանիայում գերմանական հետախուզության սպասարկության «փոստարկղ»։ Ինչպես հետագայում պարզվեց, նրա ռոճիկը յեղել է ամսական ընդամենը 1 ֆունտ ստեռլինգ, բայց յեթե այդ գումարը թվում է աննշան, ապա նրա աշխատանքի հետ կապված ռիսկը նույնպես մեծ չեր, իսկ ջանքերն ել ավելի քիչ եյին։ Գործակալների համար հրահանգներ պարունակող ծրարները կապոցներով ստացվում եյին Շարլոտտենբուրգում գտնվող գերմանական հետախուզական կենտրոնից։ Բոլոր ծրարների վրա փակցված եյին անգլիական նամականիշներ, և Եռնստին միայն մնում եր այդ ծրարները գցել մոտակա փոստարկղը։ Իր մոտ ստացվող բոլոր պատասխանները նա ուղարկում եր իր գերմանական տերերին։ Այդպիսով նրա գործունեյությունն այն աստիճան պատահական եր ու սովորական, վոր նա վոչնչով չեր կարող մատնել իրեն։ Բացի անուններից ու հասցեներից (վերջիններս փոփոխվում եյին շատ սակավ), նա շատ քիչ բան, կամ նույնիսկ վոչինչ չգիտեր այն կենտրոնախույս ուժի մասին, վորի գործողությունն ապահովվում եր ինքը։

Գերմանացիները գտնում են, իսկ անգլիացիները չեն փորձում վիճարկել, վոր Եռնստի, այդ տիպիկ «փոստարկղի» ձախողումն արդյունք եր անգլիական մի գործակալի աշխատանքի, վորին հաջողվել եր սողոսկել գերմանական հետախուզական կենտրոնի գաղտնիքների մեջ։ Համեստ, ամենքի համար անհայտ այդ վարսավիրը նամակագրություն ուներ 22 թղթակիցների հետ, ընդվորում դրանք բոլորն ել գերմանացիներ եյին, խնամքով դասավորված Բրիտանիայի զանազան ծովային ու զինվորական կենտրոններում։ Նրանցից մեկը Բրիտանիա-

յեց մեկնեց 1914 թվականի ոգոստոսի 4-ին և այդպիսով, պատահաբար, թե նախազգացյան շնորհիվ, խուսափեց ձախողումից։ Ինքը՝ Եռնստը վոչ մի հիմք չուներ տագնապ բարձրացնելու և փրկվելու հնարավորություն ել չուներ։ Նա ձերբակալվեց ոգոստոսի 5-ին, ածելին ձեռքին. այն բոլոր 21 գործակալները, վորոնք մնացել եյին Անգլիայի պատերազմական նախապատրաստությունը վերահսկելու նպատակով, նույն որն ել կալանքի տակ առնվեցին։

Եռնստը դատապարտվեց յոթը տարվա տաժանակիր աշխատանքի։ Մյուսներին՝ վորպես գերմանահպատակների, միայն յերկրի ներսը տանելով, չեզոքացրին մինչև պատերազմի վերջը։ Հակահետախուզության այդ նվաճումը գերազանցեց հետախուզության պլանների քայքայման՝ մինչ այդ հայտնի բոլոր դեպքերից։ Գերմանական հետախուզական սպասարկությունը մեկ հարվածով կուրացվեց— Լոնդոնի ամենախիտ մառախուղից շատ ավելի թանձր քողը, պատերազմ հայտարարվելուց անմիջապես հետո, պատեց Բրիտանիային։ Պրուսական գեներալ ֆոն Կլուկը պատմում եր, թե վորքան մեծ ե յեղել նրա զարմանքը, յերբ իր առաջին բանակի ավանգարդն անսպասելի կերպով հանդիպել ե բրիտանական կանոնավոր զորքերի։ Անգլիական հակահետախուզությունն եքսպեդիցիոն ուժերը թագցրել եր իր ամենամոտիկ հակառակորդից։ Յեվ յեթե բրիտանական մշտական բանակը լիներ նույնքան մեծ, վորքան մեծ եյին ֆոն Կլուկի ուժերը, ապա նա այն աստիճան զարմացած կլիներ, վոր այդ զարմանքը կզգացվեր Մոնսից մինչև Տաննենբերգ։

Առաջին ձախողումներից հետո, հետախուզության գերմանական ղեկավարները դադարեցին հավատալ իրենց կազմակերպության անսխալականությանը և սկսեցին արհամարհել և վոչ սակավ դեպքերում մեղադրել իրենց։ Խոսվում եր, թե հետախուզական կարևոր առաջադրանքները շատ հաճախ տրվում եյին անկուլտուրական ու ախմար անձանց։ Եռնստը—այդ վարսավիրը և ծնունդով ոտարերկրացին—Անգլիայում հիմքից ձախողեց ամեն ինչ։

Գերմանական գաղտնի սպասարկությունը անանկ դուրս յեկավ վոչ ինարկե կապույտ արյան պակասության հետևանքով. Նրա անհաջողությունները կարող են վերագրվել հնացած ստրատեգիային։ Շտիբերի նման հանճարը հաշվի կառներ փոփոխությունները և կաշխատեր պար չգալ պոչում։ Սակայն արդարությունն ասելով Շտեյնհաուերի և նրա կոլեգաների մասին, վորոնք 1914 թվականին ղեկավարում եյին գերմանական հետախուզությունը, պետք ե նշել, վոր գլխավոր ձախողումները տեղի եյին ունենում վոչ յեվրոպական կոնտինենտում։ Մեծ Բրիտանիան, Հյուսիսային Ամերիկան և Արևելքն այն ամուր ընկույզներն եյին, վորոնք դիմադրում եյին ամեն մի ճնշման, իսկ Շտիբերը ցուցումներ չեր թողել այն մասին, թե ինչպես պետք ե սողոսկել ցամաքային սահմաններ չունեցող հակառակորդի կողմը։

Հենց վոր Շարլոտտենբուրգյան կենտրոնում հասկացան Բրիտանիայում տեղի ունեցած ձախողման նշանակությունը, անմիջապես ձեռնամուխ յեղան աշխատանքի. անհրաժեշտ եր Եռնստին փոխարինել մեկ ուրիշով, ինչպես նաև փոխարինել ձերբակալված 21 գործակալներին։ Կենտրոնը խորհուրդ ստանալու համար դիմում ե Հոլանդիայում, Շվեդիայում ու Դանիայում գտնվող զանազան խոշոր գործակալներին։ Գերմանական հետախուզությունը պահանջում եր վճռական միջոցներ ձեռք առնել, բայց հետագա ամիսների դեպքերը գործակալների մի նոր խումբ ես ուղարկեցին բանտ և ապա Թաուեր՝ գնդակահարության։ 1914 թվականի աշնանն ականակիրներով, շոգենավերով, բուքսիրներով և թիավարվող նավակներով Անգլիա ժամանեցին մոտ քառորդ միլիոն բելգիական գաղթականներ։ Այդ մասսայական շարժումը քողարկում եր զգալի թվով լրտեսների սողոսկումը, քանի վոր բրիտանական իշխանությունները չեյին կարող բոլոր յեկողներին յենթարկել խիստ հարցաքննության։ Այդ խմբի գործակալներից մեկն այն աստիճան հանդուգն յեղավ, վոր նույնիսկ նկատողություն արեց անգլիական ծովափնյա պահպանությանն այն բանի համար, վոր իրեն շատ արագությամբ եր բաց թողել,

և հիշեցրեց նրան, որ պատերազմի ժամանակ պետք է կասկածանքով վերաբերվել բոլոր օտարերկրացիներին։

Բելգիացիների հետ Անգլիա սողոսկած գերմանական գործակալները չարդարացրին այն հույսերը, որ դնում էին նրանց վրա հետախուզության ղեկավարները։ Նրանց չհաջողվեց վերականգնել Եռնստի և ձերբակալված թղթակիցների աշխատանքը։

Դրանցից առաջինը ճախորդ հայրենասեր Կարլ Հանս Լոդին էր։ Լոդին գերմանական նավատորմի պահեստի ավագ լեյտենանտ էր և լավ ծանոթ էր Անգլիային, քանի որ անցյալում, որպես ուղեցույց, ծառայելիս է յեղել «Համբուրգ—Ամերիկա—Լայոն» ֆիրմայում։ Նա որոշ ժամանակ ապրել էր Ամերիկայում և տիրապետելով լեզվին՝ ամերիկյան ակցենտով, իրեն հանդես էր բերում որպես ամերիկացի։ Ձերբակալվածների մեծ մասը ոչինչ չգիտեր անգլերեն խոսակցական լեզվի առանձնահատկությունների մասին և այդ բանի համար նա տուժեց։ Մինչդեռ Լոդին տուժեց իր հետքերը թագցնելու փութաջանության ու ավելորդ ջանքերի համար։ Այն բանից հետո, յերբ Գերմանիայում հայտնի դարձավ նրա ձախողումը, գաղտնի սպասարկության պաշտոնյաները նրա անունը տալիս էին միայն նրան դատապարտելու համար և պնդում էին, որ նա մի շարք վրիպումներ է թույլ տվել, կասկած ու զգաստություն է առաջացրել շրջիկ գործակալների վերաբերմամբ, մի բան, որը հասցրեց մյուս գործակալների հայտաբերմանն ու նրանց մահվան պատճառը դարձավ։

1914 թվականի սեպտեմբերի առաջին կեսին Լոդին յերևաց Եդինբուրգում՝ ամերիկացի Չարլզ Ե. Ինգլիսի անունով տրված պասպորտով։ Իսկական Ինգլիսը դրանից կարճ ժամանակ առաջ յեղել էր Բեռլինում և աշխատում էր վիզա ստանալ վերադառնալու համար։ Նա ստիպված է լինում որոշ ժամանակ սպասել, որովհետև արտաքին գործերի մինիստրությունն անհասկանալի կերպով «կորցրել էր» նրա փաստաթուղթը, որով հետագայում Լոդին ձերբակալվեց Շոտլանդիայում. սովորական ձևով ներողություն խնդրելուց հետո, Ինգլիսին, ամերիկյան դեսպա-

նության պահանջով տրվեց նոր պասպորտ։ Այդ ժամանակ Լոդին հեռագիր է ուղարկում Ստոկհոլմ, աննկատելի կերպով հյուրանոցից փոխադրվում է մի մասնավոր բնակարան և, վարձով մի հեծանիվ վերցնելով, սկսում է ուսումնասիրել արվարձանները։ Նա չափից դուրս շատ հարցեր է տալիս, կասկածելի հետաքրքրություն ցուցաբերելով դեպի Ռոզիտեյի նավահանգիստը, և դրսևորում է ծովային գործերին վերաբերվող գիտելիքներ, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեյին սովորական տուրիստի գիտելիքների հետ։ Լոդինն իր առաջին իսկ հեռագրից հետո կասկածի տակ է առնվում։ Նա հեռագիրը հասցեագրել էր Ստոկհոլմ՝ Ադոլֆ Բուխարդի անունով, և չմտածված կերպով, փորձում էր իրեն ցույց տալ որպես մի մարդ, որը թշնամական զգացմունքներ է տածում Գերմանիայի հանդեպ։ Բայց գրաքննությունն այնքան էլ դյուրահավատ չէ։ Յեթե մեկը գրում է չափից դուրս կանխամտածված կերպով, ապա գրաքննությունն էլ իր հերթին հատուկ ուշադրություն է նվիրում նրան։ Լոդինին հետևող գործակալներն սկսում են փոստի օգնությամբ ստուգել նրա անշընորհք խորամանկությունը, նրա նամակները բռնվում էին՝ քիմիական մշակման յենթարկելու համար։ Պարզ է, որ չեզոք պետության ոչ մի հպատակ և ոչ մի ամերիկացի, Լոդինի տեղը լինելով, փող չէր ծախսի հեռագիր տալու չեզոք պետության մի այլ հպատակի՝ գերմանացիների անհաջողությունների առթիվ իր հրճվանքն արտահայտելու համար։

Լոդին չէր օգտվում կոդից, չէր գործադրում խորամանկություն կամ գաղտնի հաղորդագրությունների վորևե այլ ձև։ Նա գալիս է Լոնդոն, իջնում մի փոքր հյուրանոցում և ուսումնասիրում հակաօդային պաշտպանության կառուցումները, այնուհետև վերադառնում է Եդինբուրգ, իսկ այնտեղից գնում Լիվերպուլ՝ օժանդակ հածանավերի վերածված օվկիանոսային շոգենավերը դիտելու համար։ Լոդին Բուխարդին ուղարկում է 5 նամակ, որոնցից միայն մեկն է հասնում Շվեդիա։ Այդ նամակի մեջ Լոդին հաստատում էր Շոտլանդիայում ափ հանված և այն տեղից,

ծնայի վրա տեղի ունեցող գործողություններին մասնակցելու համար Ֆրանսիա փոխադրվող ռուսական բանակի մասին տարածված սխալ լուրերը։ Լիվերպուլից նա ուղևորվում է Հոլիհեդ, Դուբլին և Կիլլարնեյ, այնտեղից Կվինստաունին կից ծովային բազան։ Բայց Բուխարդին ուղարկված նրա վերջին նամակը բավականաչափ հանցանշան էր բարդում նրա վրա, և նա Սկոտլանդ Յարդի պահանջով կալանքի տակ է առնվում բրիտանական ոստիկանության կողմից։ Չորս օր անց, հոկտեմբերի 30-ին, Լոդին կանգնում է Լոնդոնի զինվորական դատարանի առաջ։

Նրա իրերի մեջ, բացի կեղծ պասպորտից, գտնում են մի հուշատետր ծովային հարցերի վերաբերյալ դիտողություններով և Բեռլինի, Համբուրգի ու Ստոկհոլմի հասցեներով։ Բուխարդին ուղարկված 4 նամակների պատճենները նույնպես պահված էին այդ ծոցատետրի մեջ։ Նա չէր պաշտպանվում և իրեն պահում էր որպես մի մարդ, որը կատարել է իր պարտքը, առանց ամաչելու դրանից և առանց վախենալու սպասվող հետևանքներից։

Լոդիի մահից հետո Մեծ Բրիտանիա չեն ուղարկվում մեծ թվով գործակալներ, գլխավորապես Անտվերպենի և Վեզելի հետախուզական դպրոցներից։ 1914 թվականից դեռ շատ առաջ գերմանական հետախուզական սպասարկությունը հավաքել էր Ֆրանսիայի ու Ռուսաստանի պոտենցիալ ռազմական ուժերի վերաբերյալ բոլոր տեղեկությունները։ Ուստի այդ յերկրներում գործող հետախուզությունը կարող էր սահմանափակվել զորքի շարժման, գնդերի և դիվիզիաների թվական կազմի ու բարոյական վիճակի, ռազմամթերքի արտադրության ու բեռնման նկատմամբ սովորական դիտողություններ կատարելով։ Բայց Բրիտանիայում պատրաստվում էր կամավորական մեծ բանակ, բանվորները շարունակում էին հուզվել, Իռլանդիայում խմորում էր տեղի ունենում, և բրիտանական նավատորմը, որն անհաղթահարելի էր մարտում, ձգում էր իր բլոկադը, որը պետք է օղապարան դառնար Գերմանիայի վզին՝ անկախ ցամաքում նրա տարած հաղթանակներից։ Գործակալ-ռեզիդենտները կարողացան կա-

տարել Ֆրանսիայում և Ռուսաստանում նրանց առջև դրված խնդիրները։ Մեծ թվով այդպիսի գործակալներ մնացել էին այդ յերկրներում, ընդորում նրանցից շատերը մնացել էին չհայտաբերված և ժամանակ առ ժամանակ լուրջ ծառայություններ էին մատուցում իրենց կենտրոններին։ Իսկ Անգլիան ոչ միայն հրապարակից վերացրեց մինչև պատերազմ հայտարարվելն իր յերկրում բույն դրած և վարսավիր Եռնստի միջոցով Գերմանիայի հետ կապ պահպանող բոլոր գործակալներին, այլև իր ձեռքում էր պահում այն գաղտնիքների մեծ մասը, որոնք հանգիստ չէին տալիս Շտեյնհաուերին ու նրա պաշտոնակիցներին։

15 օրվա ընթացքում (1915 թվականի մայիս-հունիս) հայտաբերվեցին ու ձերբակալվեցին յոթը գործակալ։ Այդ գործակալներից ոչ մեկը չափազանց վտանգավոր բնագավառում կատարվող աշխատանքի համար հարմար չէր, նրանցից ոչ մեկը զուրկ չէր նախնական պատրաստությունից։ Այդ յոթը գործակալներից յուրաքանչյուրը ստացել էր որոշ պատրաստություն, թեև նրանց ուսուցիչները յեղել էին այնպիսի մարդիկ, որոնք ունեյին զուտ տեսական գիտելիքներ, քանի որ Գերմանիան նրանց օրոք ոչ մի պատերազմ չէր մղել։ Ուսուցիչները կարող էին միայն պատմել խաղաղ ժամանակ, հակահետախուզության բացակայության պայմաններում տեղի ունեցող լրտեսության և հետախուզության միջև յեղած տարբերությունը, որը կատարվում է այն դարաշրջանում, երբ մարդիկ մահացու պայքար են մղում միմյանց դեմ, իրենց տրամադրության տակ ունեն յերիտասարդ, բայց զգաստ հակահետախուզություն, որն օրեցօր կատարելագործվում է։ Այդ տարբերությունը չափազանց շոշափելի չէր։ Այդ յերկու շաբաթվա ընթացքում ձերբակալված յոթը գործակալներից ոչ մեկին չէր հաջողվել ձեռք բերել քիչ թե շատ արժեքավոր տեղեկություններ։ Նրանցից ոչ մեկն Անգլիա չէր յեկել շահեկան հանձնարարականներով, գաղտնի սպասարկության ասպարեզում ունեցած մեծ փորձով կամ բոլոր տեսակի խոչընդոտները հաղթահարելու բնածին ընդունակությամբ։

ՀԵՏԱԽՈՒՅԶԸ ՅԵՎ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Խելացի ու բանիմաց հետախույզները հազվագյուտ դեպքում են տապալվում, իսկ նրանցից լավագույնները նույնիսկ կասկած ել չեն առաջացնում։ Դրանով ե բնորոշվում լրտեսության արվեստը, վորը հիմնականում հանգում ե յերեք մոմենտի՝ 1) իմանալ ամենաարժեքավոր փաստաթղթերի տեղը, 2) ձեռք բերել դրանք, մնալով աննկատելի, ու արագորեն պետին հանձնել այն ամենը, ինչ հաջողվել ե ստանալ, և 3) այնպես անել, վոր հակառակորդը չիմանա, թե իր պլանները հայտնի յեն դարձել։

Յեթե այդ պայմաններից յերկրորդը կամ յերրորդը խախտվեց, ապա ամեն ինչ խորտակված ե — գործակալը կտապալվի ինչպես իր մոտ՝ հայրենիքում, այնպես և արտասահմանում։

Արժեքավոր փաստաթղթերի տեղը վորոշելը պակաս դժվար ե, քան այդ թվում ե, մանավանդ պատերազմի ժամանակ, յերբ ամենասովորական բաները կարող են նշանակություն ունենալ հակառակորդի շտաբի համար։ Ավելին՝ շատ գործակալներ ստույգ հրահանգ են ստանում, թե ինչ տեղեկություններ պետք ե ձեռք բերել, վորտեղից կարելի յե ստանալ այդ տեղեկությունները և այլն։ Դրանից հետո տեղեկություններ ձեռք բերելն այնքան ել մեծ սխրագործություն չե։ Ամեն մի գաղտնի գործակալ կարող ե կատարել այդ։ Տեղեկություններ ձեռք բերելուց հետո նույնը տեղ հասցնելը շատ ավելի դժվար ե ու վտանգավոր։ Հետախույզ-սիրողը, վոգևորված գաղտնի տեղեկություններ ստանալու գործում իր ունեցած խաբուսիկ հաջողությամբ, այնպես ե յերևակայում, վոր իրեն տրված առաջադրանքը համարյա լրիվին կատարված ե։ Բայց գցույշ պրոֆեսիոնալը գիտե, վոր ամենամեծ վտանգը դեռ առջևումն ե։ Ժամանակակից գրաքննության ու հակահետախուզության պայմաններում գործակալը, չնայած մի շարք հնարամիտ գյուտերին ու քիմիական նորմուծություններին, չափազանց խոցելի յե դառնում

այն մոմենտին, յերբ նա փորձում ե հաղորդել իր դիտողություններն ու հայտնությունները։

Պատերազմի ժամանակ տեղեկություններ հաղորդելու պրոբլեմի վրա այնքան ուշադրություն եր կենտրոնացվում, վոր յերրորդ պայմանի մասին, այն ե՝ հակառակորդից թաքցնել, վոր նրա գաղտնիքները ծանոթ են, մտաբերվեց շատ ավելի ուշ։ Հետախույզները յերբեմն հիշում եյին այդ, յերբեմն անտեսում, նայած հանգամանքներին։ Պետք ե հիշատակել, վոր այն հետախույզը, վորը վոչ մի բանից չի խորշում, կգերազանցի մյուսներին և նրանցից ավելի յերկար կապրի։

Խաղաղություն կնքելուց հետո մի ֆրանսիական գաղտնի գործակալ հայտարարեց, վոր ինքը բազմիցս յեղել ե մայոր ֆոն-Բյուլովի գերմանական հետախուզական կենտրոնում, վոր գտնվում եր Շվեյցարիայի մայրաքաղաքի արվարձաններում։ Այդ մի իսկական ամրոց եր, այն կենտրոնը, վորը ղեկավարում եր կենտրոնի և աջ թևի ֆրանսիական բանակների թիկունքում գործող հետախույզների մեծ մասին։ Նախկին հակառակորդներին իր խոսքերի ճշտության մեջ համոզելու համար գործակալը համարձակորեն նկարագրեց հետախուզության գլխավոր զենքը — դոնակներ՝ գորգի և հատակի տախտակների տակ՝ զանգերով, վորոնք տագնապ եյին բարձրացնում, յերբ նրանց վրա վոտք եր դրվում, բազկաթոռներ և նույնիսկ բանալիներ, դիտավորյալ կերպով թողնված փակերի մեջ և միացված բարձր լարվածություն ունեցող ելեկտրական լարերի հետ։ Անկախ այն բանից, թե նա առաջին անգամ ինչպես ե թափանցել այդ գաղտնի ապաստարանը (արդյոք կաշառքի, թե սեփական համարձակության շնորհիվ), նրա զգուշությունն ու իրազեկությունը նրան թույլ եյին տալիս կրկնել այդ այցելությունները։ Գործակալը կարողացավ հասնել դրան միայն շնորհիվ այն բանի, վոր նրա՝ վորպես հետախույզի՝ ամբողջ գործունեյությունը հետքեր չեր թողնում։

Հայտնի յե նաև, վոր մի գերմանական գործակալ յերկար տարիների ընթացքում ծառայել ե ֆրանսիական

զինվորական դատարանում և վորպես թարգմանիչ մասնակցել լրտեսության մեջ մեղադրվող անձանց դատավարություններին: Այդ մարդը սառնարյուն կերպով և դերասանական ինքնատիրապետմամբ ներկա յեր գտնվում իր պաշտոնակիցների դատապարտմանը, բայց յերբեք վորևե զգացմունք չեր ցուցաբերում նրանց նկատմամբ: Նրա խնդիրը, վորպես գործակալի, այն եր, վոր նա պետք ե իր պետին տեղեկություններ հաղորդեր, թե ֆրանսիացիներն ինչպես են հայտաբերում և դատում հետախույզներին, մի բան, վորը հսկայական նշանակություն ուներ պետերի համար, վորոնք նախապատրաստում և ուղարկում եյին իրենց գործակալներին:

Այդ թարգմանչի տիպի հետախույզները բացառիկ ու հատկապես վտանգավոր տիպեր են, վորոնք ձգտում են մեծ իշխանության: Բավարական թագաժառանգի շտաբում գտնվում եր բոլորի կողմից չափազանց բարձր գնահատվող մի յերիտասարդ մայոր: Նրա անդուլ ջանասիրությունն աշխատանքի մեջ ընդհանուր զարմանք եր առաջացնում: Իրականում, իշխան Ռուպրեխտի՝ բոլորի կողմից հարգված այդ օգնականն անգլիացի յեր: Նա կապ ուներ բրիտանական հետախուզական բաժնի հետ, վորը նրան Գերմանիա յեր ուղարկել նախքան պատերազմը, ինչպես և Տրենգին, Բրենդոնին և բազմաթիվ այլ արկածներ վորոնողների: Պատահական հանգամանքները նրան հասցնում են բարձր պաշտոնի, և նա, իր ճարպիկության ու խելքի շնորհիվ այդ պաշտոնի մեջ եր գտնվում մինչև զինադադար կնքելը: Դրանից հետո նա վերջապես փոխում ե իր համազգեստը և մասնակցում խաղաղության հարցերի շուրջը տեղի ունեցող բանակցություններին: Նրա արժեքն իբրև գործակալի այն ժամանակամիջոցում, յերբ նա, վորպես մայոր, ծառայում եր բավարական շտաբում, կարող ե գնահատվել միայն յենթադրաբար: Հնարավոր ե, վոր նրա ամբողջ աշխատանքը գլխավորապես կայանում եր մշտական գաղտնի կապ կազմակերպելու մեջ, վորը գնալով ավելի ու ավելի դժվարին խնդիր եր դառնում, վորքան ավելի յեր աճում իշխանի վստահությունը նրա նկատմամբ:

նախանձախնդիր ընկերներն ու ստորադրյալները կարող եյին նրան հետևել ավելի մանրամասն, քան դետեկտիվները[1]: Այնուամենայնիվ յենթադրվում ե, վոր նա կատարել եր ինչ-վոր արտակարգ մի բան, վորովհետև Լոնդոնի զինվորական մինիստրությունը հրաժարվեց հաղորդել նրա գործողությունների մասին:

Այնպիսի նշանակումները կամ առաջքաշումները, վորի հետ մենք գործ ունենք տվյալ դեպքում, կամ թե թարգմանչի հետ պատահած դեպքում, բնականաբար հազվադեպ են: Ներկայումս կան հակահետախուզության սպաներ այդ չարիքի առաջն առնելու համար: Բայց մշտապես յերկրում բնակվող և հաստատակամությամբ ու խելքով օժտված գործակալից իրեն անվտանգ դարձնելն անհնարին բան ե: Այդպիսի գաղտնի գործակալ եր Կարլ Զիվերտը: Նա իր ամբողջ կյանքի ընթացքում ապրել ե Ռուսաստանում և 40 տարուց ավելի, ներքին գործերի մինիստրի հրամանով, Կիևում գրավում եր փոստային գաղտնի գրաքննչի պաշտոն: Այդ հիման վրա նրան թույլատրված եր բաց անել կայսերական շտաբի պետ գեներալ Ալեքսեյեվին հասցեագրված փոստը, ուսումնասիրել բանակի հրամանատար Բրուսիլովի կնոջ կողմից Կիևի շրջանի հրամանատար գեներալ Տրոցկու կնոջն ուղարկվող նամակները, ըստվորում նա նույնիսկ կարդում եր զինվորական մինիստրի ու կոմս Գեորգիյ Բոբրինսկու՝ Գալիցիայում օկուպացիայի յենթարկված ավստրիական տերիտորիայի ռուսական նահանգապետի միջև տեղի ունեցող պաշտոնական գրագրությունը: Զիվերտը բռնվեց միայն պատահաբար:

Մեծ փորձը Զիվերտին թանկարժեք գործակալ եր դարձնում հետախուզության յուրաքանչյուր պետի համար: Սակայն պաշտոնական պոստեր չունեցող գործակալները ռազմական գործերի մեջ թափանցելու արագության տեսակետից նրան գերազանցում եյին: Այժմ հայտնի յե,

1 Հետախույզ վոստիկանության գործակալ Անգլիայում յեվ ԱՄՆ-ում:

վոր մի գործակալ, աշխատելով յերկաթուղում, համաշխարհային պատերազմի առաջին յերկու ամիսների ընթացքում Արևելյան Պրուսիայում գտնվող գերմանական շտաբին է հաղորդելիս յեղել ռուսական դաշտային շիֆրը։ Ունենալով այդ շիֆրը, գերմանական հրամանատարությունը կարողանում եր անմիջապես թարգմանել այն բոլոր ռադիոհաղորդումները, վոր փոխանակում եյին ռուսները՝ Արևելյան Պրուսիա ներխուժելու ժամանակ։ Շատ հավանական է, վոր այդ շիֆրը ձեռք բերելու համար գործակալն իր աշխատանքի դիմաց ստացել է միայն միքանի հարյուր ռուբլի, բայց ֆոն-Հինդենբուրգի փառքը գերմանական ժողովրդի նեցուկը դարձավ և յերկար տարիների ընթացքում բարձր եր պահում նրա վոգին։ Դրա փոխարեն ռուսները ծանր պարտություն կրեցին — վեց կորպուս վոչնչացվեց, տասնյակ հազարավոր մարդիկ գերի ընկան, կամ թե խեղդվեցին լճերի մեջ։

Մեծ հետախույզների ցանկը լրիվ չի լինի, յեթե մենք չհիշատակենք գնդապետ Լոուրենսի անունը։ Ճանաչված հանճար, մեծ փորձառության տեր Լոուրենսը Փոքր Ասիայում տեղի ունեցող կամպանիայի ժամանակ ցույց տվեց, վոր ինքը կարող է, վորպես հետախույզ, ցանկացած բոպեյին անցնել թուրք-գերմանական ռազմաճակատով։ Նա այնքան վարպետորեն կարողանում եր փոխել հագուստը, վոր մի անգամ նրան Դամասկոսում ընդունել եյին թուրք դասալիքի տեղ և, վորպես «կարգապահական տույժ», ծեծել գիտակցությունը կորցնելու չափ։ Նա միշտ ստույգ տեղեկություններ ուներ հակառակորդի ուժերի մասին, նրա հետախուզության արդյունքներն անգնահատելի նշանակություն ունեյին գեներալ Ալլենբիի համար՝ Պաղեստինում մղվող կամպանիայի ժամանակաշրջանում։ Լոուրենսն այնչափ հետաքրքրական ու մանրամասն է նկարագրում իր աշխատանքը հետախուզության մեջ և զինվորական գործի այլ բնագավառներում, վոր ավելի լավ կլինի, յեթե մենք ընթերցողին խորհուրդ տանք կարդալ նրա սեփական ձեռքով գրված հռչակավոր գիրքը։

Ինչ վերաբերում է սիրող-հետախույզներին, ապա համաշխարհային պատերազմի չեմպիոն պետք է համարել մի բելգիացու, վորն օկուպացիայի մոմենտին ծառայում եր Լիեժի պողպատաձուլական գործարաններում։ Այդ պատրիոտի խիզախության ու աշխատանքի շնորհիվ դաշնակիցները մինչև օգոստոսի 22-ը տեղեկություններ եյին ստանում Լիեժով անցնող գերմանական բոլոր զինվորական գնացքների մասին. օգոստոսի 22-ից հետո նա այլևս մարդիկ չուներ, վորոնց միջոցով կարողանար ուղարկել տեղեկությունները, վոր առաջ նա ուղարկում եր Անգլիա ուղևորվող գաղթականների հետ։ Նա օրերով թաքնվում եր յերկաթուղագծի տակի դրենաժային խողովակի մեջ, հետևելով գնացքներին և հաշվելով վագոնները, յերբ նրանք անցնում եյին իր գլխավերևով։ Նա նույնիսկ ի վիճակի յեր նկատելու հրետանին և օկուպացիոն զորքերի մյուս հատուկ զորամասերը։ Յեթե նա գաղտնի սպասարկության հատուկ պատրաստություն էլ ստացած լիներ, հազիվ թե կարողանար վարվել ավելի հմուտ ու ավելի հասկանալով գործը, ըստվորում իր ստացած բոլոր տեղեկությունները նա ժամանակին հաղորդում եր անգլիացիներին։

Այն հանգամանքը, վոր համաշխարհային պատերազմի ժամանակ ռազմական հետախուզության զգալի մասը դրված եր քաղաքացիական բնակչության վրա, նրանով է բացատրվում, վոր զինվորականները չափից դուրս զգույշ եյին և խուսափում եյին հակառակորդի թիկունքում աշխատելուց։ Այն գոտում բնակվող քաղաքացիական բնակչությունը, վորտեղ տեղի յեն ունենում զինված ընդհարումները (Արմանտյերի կռվի ժամանակ, օրինակ, միքանի ընտանիքներ ապրում եյին խրամատներից հազիվ 750 մետր հեռավորության վրա) անկախ իրենց կամքից օգտագործվում եյին գաղտնի զինվորական սպասարկության համար։ Հետախուզությունն իրենից ներկայացնում է նույնպիսի դժվարին պրոֆեսիա, ինչպես բեմի վրա խաղալը կամ պիես գրելը — մի ասպարեզ, վորտեղ համարյա յուրաքանչյուրն զգում է, վոր ինքը կոչված է մեծ մարդ լինելու։ Միև-

նույն ժամանակ հակահետախուզությունը, այսինքն հակառակորդի հետախույզների մերկացումը, միլիոնավոր մարդկանց կիրքն է հանդիսանում։ Սակայն կան մարդիկ, վորոնք հանուն վաստակի վաճառում են տեղեկությունները։ Պատերազմ հայտարարվելուց անմիջապես հետո այդ մարդիկ (ամենից հաճախ չեզոք յերկրների քաղաքացիները) և ամեն տեսակի ռենեգատները, նախկին հանցագործներն ու բախտախնդիրները շտապում են նրա մոտ, ով ամենից բարձր գին կտա։ Յեթե չլիներ զինվորական դատարանն ու գնդակահարությունը, ապա այդ բորենիների հսկայական վոհմակները կվխտային պատերազմական գործողությունների ամբողջ թատերաբեմի վրա։ Յեվ տարորինակ է, վոր բռնվելու դեպքում նրանց սպասող ճակատագիրը հետ չի պահում այդ ծախու դիտողներին։ Այն բանից հետո, յերբ այդ շայկայի անդամներից վորևե մեկը տապալվում է, դատվում և գնդակահարվում, մյուսներն անհայտանում են կամ անցնում այլ բանակ։ Հենց այդ պատճառով էլ պատերազմի ժամանակ կռվող յերկու կողմերն էլ հայտարարում եյին հետախույզների գնդակահարման մասին։

Հետախույզի կամ հակահետախույզի աշխատանքը, նրա նշանակությունն ու ռիսկը, պրոֆեսիոնալ գաղտնի գործակալներից ստեղծում են ինչ-վոր մի հատուկ կաստա։ Նրանք միշտ չե, վոր խորհրդավոր են, ինչպես վեպերի մեջ։ Նրանք հարկադրված են կատարելու շատ ավելի տաղտկալի, առորյա աշխատանք, քան թվում է նրանց, ովքեր հետախույզի կամ հակահետախույզի գործունեությունը դիտում են ռոմանտիկական տեսակետից։ Նրանք կարող եյին լինել պատրիոտներ, իրենց անձնական կյանքում ունենալ ազնիվ մարդու համբավ, նրանց կյանքը կլինի համեմատաբար տխուր, հանդարտ ու պրոզաիկ։ Նրանց համար նույնիսկ կարող է խորթ լինել այսպես կոչված արկածախնդրության վոգին և լավագույնը նրանց համար—այդ իրենց պրոֆեսիան դրամատիզացիայի յենթարկելու հակում չունենալն է։ Բայց նրանք արկածներ վորոնողներ են, և նրանց պրոֆեսիան պահանջում է այնպիսի հատ-

կությունների հետաքրքրական զուգակցում, վորոնք նման չեն այն հատկություններին, վոր պետք է ունենա զինվորը կամ հետազոտողը, վարձու մարտիկը, սպեկուլյանտը, մաքսանենգը կամ թե վորևե այլ օրինազանց։ Յուրաքանչյուր պրոֆեսիոնալ հետախույզ պետք է լինի օժտված լեզվագետ, վորն ընդունակ լինի ազատ խոսելու իրեն համար անհրաժեշտ լեզուներով, ըստ վորում խոսել ճիշտ ակցենտով կամ առանց վորևե ակցենտի, նայած այն դերի բնույթին, վոր ստանձնել է նա։

Բացի լեզուներ իմանալուց և տեխնիկական տեսակետից ռազմական հարցերի հետ ծանոթ լինելուց, վորը կարող է տալ դպրոցը, գաղտնի գործակալը պետք է ունենա այնպիսի բնածին հատկություններ, ինչպես խիզախությունը, տոկունությունը, սառնարյունությունը, յերևակայությունը և այլն։ Գոյություն ունեն վարքի միքանի հիմնական կանոններ, վորոնք պետք է հայտնի լինեն յուրաքանչյուր պրոֆեսիոնալ հետախույզի, և նա պետք է հավատա այդ կանոնների արդարացի ու անհրաժեշտ լինելուն։

Միքանի հետախույզներ առաջին իսկ րոպեյից վախենում եյին և ամեն ինչ խոստովանում։ Նրանցից շատերը վախկոտ կերպով պնդում եյին, թե իրենք «միայն ուսումնասիրում եյին հակառակորդի բարոյական վիճակի անկումը»։ Պատրիոտ-հետախույզներն իրենց թույլ եյին տալիս յերևան բերել իրենց ջերմ պատրիոտիզմը, հաղորդագրություն լսելով իրենց բանակի հաղթանակի մասին, կամ վոր էլ ավելի վատ է, փորձում եյին ուրախություն արտահայտել իրենց զորքերի պարտության առթիվ, վորն իրականում տխրեցնում եր նրանց և վիրավորում նրանց հպարտությունը։ Սակայն նրանք հավանորեն դիտավորյալ կերպով անտեսում եյին փաստերը և ինֆորմացիա տալիս լուրերի մասին, առանց բացատրելու սակայն, ինչպես այդ պետք է աներ հետախույզը, վոր դրանք միայն լուրեր են։ Գերմանական հետախույզները մշտապես զբաղվում եյին պրոպագանդով ու դիվերսիայով։ Թե մեկը և թե մյուսը—ռազմական գործողություններ են,

բայց դրանով պետք է զբաղվեն հատուկ գործակալներ, որոնց տապալումը վտանգի չենթարկի մյուս հետախույզներին և չխախտի հետախուզության սիստեմը, որը, ձախողվելուց հետո, նորից կանոնավորվել կարող է միայն մեծ դժվարությամբ։

Շտիբերի ժամանակվանից գոյություն ուներ դոկտրինա այն անձանց մատուցած անհատական ծառայության ու հասարակական արժանապատվության վերաբերյալ, որոնք զբաղվում էին հետախուզությամբ, կառավարական դավադրություններով ու նման՝ թեև գաղտնի, բայց այնուամենայնիվ պաշտոնական բնույթի գործերով։ Այն կարծիքը կար, որ բարձր դասին պատկանող անձինք նույնպես պետք է զբաղվեն հետախուզությամբ, և հետախուզության գերմանական ղեկավարությունն ընդգծում է, որ լրտեսությունն ավելի «պատվավոր զբաղմունք է», քան բանակում իր ամենօրյա պարտքը կանոնավոր կերպով կատարելը։ Իրականում, չնայած գաղտնի սպասարկության պրիմատ լինելու վերաբերյալ շտիբերյան դրույթին և ջենտլմենների ու լորդերի մասնակցությանն այդ սպասարկության մեջ, ինչպես նաև չափազանց թանկ նստող հետախուզական դպրոցների գոյությանը,— գործակալների մեծ մասը շատ քիչ բան կամ համարյա թե ոչինչ չգիտեր հետախուզության մասին։ Գործակալներն ընտրված ու պատրաստված էին իրենց պետերին ու վարձողներին որոշ ծառայություն մատուցելու համար, բայց ոչ մի ցուցում չէր տրվում այն մասին, թե ինչպես փրկել իրենց կյանքը և ինչպես բարձրացնել իրենց որակավորումը։ Ընդունված է այն կարծիքը, որ վարձու գործակալը որոշ ժամանակից հետո միշտ դառնում է ավելորդ բեռ։ Եթե հաշվի առնենք, որ այդ միտքը ուժեղ կերպով ընդգծվում էր, իսկ գործակալների պատրաստման խնդիրն այնուամենայնիվ անտես էր առնվում, ապա ոչ մի հիմք չի լինի զարմանալու, որ դաշնակիցները հայտաբերում էին մեծ թվով վարձկաններ ու պրոֆեսիոնալներ, որոնք նույնիսկ սիրողներ էլ չէին կարող համարվել իրենց գործին ծանոթ լինելու տեսակետից։

Վոմն Եվա, մի դաստիարակչուհի, որը տեղ էր ստացել Լոնդոնի հայտնի ընտանիքներից մեկում, կասկածվում է լրտեսության մեջ և հարցաքննության յենթարկվում։ Հարցաքննության ժամանակ նա միանգամից հենց ընկճվում է և խոստովանում իր մտադրությունները, ըստվորում հայտարարելով, թե մինչ այդ մոմենտն ինքն առիթ չի ունեցել ստանալու որևէ արժեքավոր ինֆորմացիա։ Մինչդեռ իրականում, դեռ նախքան կասկած առաջացնելը, նա հիանալի առիթներ է ունեցել այդպիսի ինֆորմացիա ստանալու համար, բայց պարզապես չի իմացել այն խաղը, որ խաղում էր։ Այդ աղջիկը միամիտ կերպով խոստովանում է նաև այդ։ Նա պատմում է, որ իրեն Անգլիա յե ուղարկել իր սիրեկանը և որ ինքն ուզեցել է լրտեսուհի դառնալ, նրան հաճույք պատճառելու համար։ Ի լրացումն նրա քնքուշ յերախտագիտության, նա պետք է ամսական ստանար 200 մարկ։

Գերմանական հետախույզները ժամանակ էին կորցնում նարկոմանների, այդ խղճուկ ու զզվելի արարածների վրա, որոնք ծարավ էին նարկոտիկների և պատրաստ դրա համար խոստանալու ամեն բան, ինչ կամենաք։ Գերմանական քիմիկոսները կարող էին նրանց համար այդ ապրանքից ուղարկել ինչքան որ ուզեն, ըստվորում նարկոտիկ միջոցներ պարունակող փոքրիկ ծրարներն ամրացվում էին Շվեյցարիայից Ֆրանսիա մեկնող ապրանքատար գնացքների վագոնների տակից։ Բայց այդ նարկոտիկ միջոցները Փարիզի տականքների մեջ տարածող գործակալները յերևակայաբար էին վարվում, յենթադրելով, որ նարկոմանը կարող է իր տրամադրության տակ ունենալ ռազմական ստույգ տեղեկություններ, կամ թե կարող է որևէ բան հասկանալ այդ տեղեկություններից, նույնիսկ պատահաբար նրանց հետ առնչություն ունենալու դեպքում։ Հանցագործներին, իհարկե, կարելի յե ստիպել հանուն նարկոտիկների դիմել սպանության, գողության, բայց հուսալի մարդիկ, որոնք իրենց ձեռքի տակ ունեյին կարևոր ռազմական գաղտնիքներ, պատերազմի շրջանում յերբեք անտարբեր չէյին վերաբերվում

դեպի իրենց պարտականությունները։ Այդ պատճառով էլ նրանք լավ պաշտպանված էին հանցագործ տարրերից։

Հետախույզի պատգամները պետք է պարունակեն մեծ թվով տարօրինակ պահանջներ և այդ թվում պահանջ՝ չդրսևորել իր բնորոշ ազգային գծերը։ Ֆրանսիական գործակալներին նախազգուշացնում էին, վոր նրանք խուսափեն չափից դուրս քաղաքավարությունից։ Նրանցից մեկը Մյունխենում իրեն հանդես էր բերել վորպես Բեռլինի ինչ-վոր մի կոնցեռնի կոմիսար, և նրան վոստիկանության ձեռքը մատնեց ճաշարանի սպասուհին։ Վերջինս վոստիկանությանն ասել էր, թե նա իրեն շնորհակալություն է հայտնում ամեն բանի համար, ինչ-վոր ինքը մատուցում է նրան. հաճախակի «շնորհակալություն»-ները համոզում են սպասուհուն, վոր նա այն չէ, ինչի տեղ իրեն ցույց է տալիս։ Համաշխարհային պատերազմի սկզբում, յերբ Գերմանիայի ռազմական դրությունը թվում էր բարենպաստ, միքանի գերմանական գործակալներ դժվարությամբ էին թաքցնում իրենց ցնծությունը։ Լկտի կամ կոպիտ, ինքնագոհ, կոտրատվող, կամ թե շատախոսության սեր ունեցող գործակալը կախաղան կհանվի ավելի շուտ, քան դաստիարակված, զգույշ ու զուսպ հետախույզը։

Մեզ չափազանց հաճելի կլիներ պատմել բեմական տաղանդ ունեցող, գրիմ արած ու կեղծ բեխեր դրած հետախույզների մասին։ Բայց բանն այն է, վոր ժամանակակից հետախույզները սակավ դեպքում են դիմակավորվում, յեթե նրանք կարողանում են խուսափել այդ բանից։ Կեղծ անուն՝ պասպորտի մեջ, կամ թե ամերիկյան կոստյում՝ գերմանական նավաստու վրա — ահա ժամանակակից դիմակավորումը։ Ամենագռեհիկ շարժուձևի պրոֆեսիոնալները կարող են իրենց հանդես բերել վորպես ջենտլմեն. ստորին ծագում ունեցող մարդն իրեն կարող է հանդես բերել վորպես հերցոգ, վորը ճանապարհորդում է ծպտյալ կերպով — այդ էլ հենց նշանակում է դիմակավորում։ Դիմակավորվելու չափազանց դժվար, համարձակ ու բնավ վոչ սակավադեպ յեղանակը — այդ իրեն վորպես հակառակորդի բանակի կամ նավատորմիղի սպա ցույց տալն է։

Գաղտնի հետախուզությունների բոլոր պետերը գիտեն, վոր այն խուճապը, վոր համակում է բոլոր յերկրների քաղաքացիական բնակչության պատերազմի սկզբում, զանազան լուրերը, լրտեսային մանիան — այդ բոլորը ծառայում են հակառակորդի գործակալների սկզբնական քայլերը թաքցնելու համար։ Ընդհանուր զայրույթը և ամեն տեսակ պատահական կասկածելի ու կեղծ տագնապների առթիվ հակահետախուզության որգաններին դիմելն իսկական հետախույզն ոգտագործում է վորպես դիմակավորման լավագույն յեղանակ։ Նա ամբոխի հետ կվազի և կպահանջի ձերբակալել յուրաքանչյուր բացահայտ ոտարերկրացու, կամ թե, ընդհակառակը, նա կհրաժարվի աղմկարար պատրիոտներից և հանգիստ կգրավի իր դիրքը (վորը հետագայում կոգտագործի հետախուզության համար), և խաղաղ, նորմալ ապրելակերպով մոլորության մեջ կգցի ամենազգաստ մարդկանց։

Ամերիկյան մի գաղտնի գործակալ, վորին համաշխարհային պատերազմի շրջանում հանձնարարել էին հետևել Սոնորայի նահանգապետ հայտնի գերմանասեր Պլուտարխ Ելիաս Կալլեսին, դիմակավորվում էր վորպես մեքսիկացի։ Նա իր ամբողջ մաշկը պատել էր յոդով, իսկ յերբ այդ միջոցը չափից դուրս ցավագին յեղավ, նա սկսեց յոդի հետ խառնել ցեխ։

Այդ գործակալի ճարպիկությունը յերևում է այն բանից, վոր նրան նույնիսկ թույլատրվել էր վորոշ կարևոր դեպքերում ոգտվել Սոնորայի դիկտատորի գնացքով։

Փորձված գործակալը գիտե, թե ինչպես պետք է գործել, վորպեսզի կասկածի տեղիք չտրվի. Նա ամենից լավ իր դեմքը կթաքցնի կոպտության կամ թե տխմարության դիմակի տակ. սպորտսմենը դառնում է դանդաղաշարժ մարդ, փայլուն սպան կամ թե կրթված ջենտլմենը միշտ կարող է թաքնվել կեղտոտ, վատ սովորությունների տեր և անառակ կյանք վարող մարդու դիմակի տակ։

Այս բոլորը վերաբերում է գլխավորապես հետպատերազմյան իրադրությանը և յերկրագնդի այն մասին, վոր-

տեղ հաղթական դաշնակիցները հանկարծ մեծ անվստահությամբ են տոգորվում իրար հանդեպ, ավելի մեծ անվստահությամբ, քան դեպի իրենց՝ հենց նոր պարտված հակառակորդները։

Լեզուներ իմանալը, բնածին տաղանդը, լավ նախապատրաստությունը, անձնական գերազանցությունները— այդ բոլորը չեն օգնի գործակալին, յեթե նա չընտրի այնպիսի հարմար դիմակավորում ու դեր, որը նա կարող է խաղալ անսխալ ու բնական կերպով։

Մյուլլերը և Ալտշուլլերը՝ Ռուսաստանում գործող ավստրիական գործակալներից այդ ամենահնարամիտները, ընդունելություն էյին գտել լավ հասարակության մեջ։ Դրանք ոգտակար գործակալներ էյին։ Լուրեր էյին պտըտում, թե ռուսական վինվորական մինիստրի կինը պատրաստվում էր այցելել Ալտշուլլերի նոր սքանչելի կալվածքը, այն մարդու, որը մայրենի Վիեննան վերադարձավ ոչ միայն ռազմական տեղեկություններով, այլև բանակի մատակարարման սպեկուլյացիայից ստացած վաստակով։ Բայց սկսվեց պատերազմը, և սահմանները փակվեցին։ Մյուլլերը մոտ յերկու տարի աշխատում էր ռուսական բանակի թիկունքում և այնքան անփույթ էր, որ մատնեց իրեն։ Ցարական գաղտնի ոստիկանության գործակալը ձերբակալեց նրան։ Բայց Մյուլլերը խելքը գլխին մարդ էր. նա լավ գիտեր, թե ում հետ գործ ունի։ Նա սկսեց պատմել Ռուսաստանի վերաբերմամբ ավստրո-հունգարական գաղտնի հետախուզության ունեցած մտադրությունների մասին։ Նա հաղորդեց ցնցող փաստեր և նույնիսկ մատնեց ավստրիական հետախուզության մոտ ծառայության մեջ գտնվող յերեք ռուս գործակալների։ Իսկ այնուհետև, յերբ արդեն պատմել էր այն ամենն, ինչ որ կարևոր էր համարում, և յերբ մինչև դատի օրն արդեն կարճ ժամանակ էր մնացել, Մյուլլերը փախավ։ Յենթադրվում էր, որ նրան որևէ մեկն օգնել է այդ գործում։

Սիբիրիացի Կրիվոշն առաջ գնաց իր լեզվագիտական ձիրքի շնորհիվ։ Լինելով չքավոր մարդ, նա ուրախ էր դրամ ստանալու ռուսներից, նաև նրանցից, ովքեր չանա-

գրգռված էյին և հետաքրքրվում էյին Ռուսաստանի ռազմական գործերով։ Կրիվոշը բարձր պաշտոն չէր գրավում, բայց դեմ չէր լինի, յեթե կարողանար այդպիսի պաշտոն գրավել։ Որոշ ժամանակ նա որպես թարգմանիչ ծառայում էր գեներալ Բրուսիլովի շտաբում և որպես այդպիսին իր վրա գրավեց ցարական մասնավոր գրասենյակի պետ իշխան Օրլովի ուշադրությունը։ Օրլովին թարգմանիչ էր հարկավոր, և Կրիվոշը կարողացավ այնպիսի տպավորություն գործել, որ թվաց այդ գործի համար ավելի պիտանի, քան հայրենասիրաբար տրամադրված հարյուրավոր ռուսներ։ Օրլովն աջակցեց, որպեսզի նրան սպայական աստիճան տրվի, և գործուղեց նրան VII կորպուսի շտաբը։ Այստեղ Կրիվոշն իր գաղտնի աշխատանքի համար ստացավ նույնպիսի հսկայական հնարավորություններ, ինչպիսին ուներ Կարլ Շուլմեյստերը։

Հեղափոխությունը յերևան բերեց, որ գաղտնի ոստիկանության ցուցակների մեջ, մեծ թվով կասկածելի անձնավորությունների շարքում, հիշատակված է յեղել նաև Կրիվոշի անունը։ Այդպիսով մենք տեսնում ենք, որ այդ՝ բոլորի համար անհայտ մարդն այն աստիճան էր խցկվել իշխանության վստահության մեջ, որ նույնիսկ պահնորդական բաժինն էլ վախենում էր ձեռք տալ նրան։ Հակահետախուզության գործակալներն ուշացան բռնել նրան. Նրանց իշխանությունը վերջացավ, և Կրիվոշի գործունեությունն էլ ընդհատվեց։

Պալեստինում և Փոքր Ասիայում անգլիացիները հարկադրված յեղան պայքար մղել միքանի տաղանդավոր հետախույզների դեմ, որոնք նույնքան դժվար որսալի էյին, ինչպես ցարական բանակի թիկունքում գործող ավստրո-գերմանական գործակալները։ Ռազմական հետախուզության սպա Ալլենբին հաղորդում է յերկու ականավոր գործակալների մասին—Պրեյսսերի և Ֆրենկսի։ Պրեյսսերը, ինչպես և գնդապետ Լոուրենսը, վարպետորեն իրեն հանդես է բերում իբրև արաբացի։ Թուրքական դաշնակիցները նրան համարում էյին բեդուին։ Ինչպես այժմ հայտնի յէ, նա առնվազը յերեք անգամ թափանցել է

Կահիրեյի բրիտանական շտաբը, ազատ կերպով ուղեւորություններ էր կատարում Կահիրեյից Կոստանդնուպոլիս, ինֆորմացիա հավաքելով ավելի փոքր գործակալներից, բնիկ ռեզիդենտներից ու տեղական հետախույզներից, վորոնք դրամ ստանում եյին Գերմանիայից կամ Թուրքիայից։ Պրեյսսերը յերբեք չեր բռնվում. Նրա հետ նույնիսկ չեյին պատահում այնպիսի անհաջողություններ, ինչպես Լոուրենսի հետ, և Թուրքական սերժանտները նրան չեյին ծեծում մինչև գիտակցությունը կորցնելը՝ ընդունելով վորպես արաբական դասալիք։

Ֆրենկսը, վոր կապիտանի ու ապա նաև մայորի չին էր ստացել իրենով հիացող հակառակորդներից, վորոնց նա շատ գլխացավանք էր պատճառել, գործում էր էլ ավելի հանդուգն, քան Պրեյսսերը։ Նա հեշտորեն իրեն հանդես էր բերում վորպես անգլիական կամ գաղութային սպա, ըստվորում նա այնպիսի մեծ ու բազմակողմանի ունակությունների տեր էր, վոր յերբեք իրեն յերկու անգամ հանդես չեր բերի իբրև միևնույն մարդը։ Նա ուներ հիանալի արտաքին, լավ շարժուձև և տեխնիկական գիտելիքներ՝ ռազմական գործի համարյա բոլոր բնագավառներից. Նրա տրամադրության տակ կային հակառակորդի զորքերի բազմատեսակ համազգեստներ։ Մի անգամ նա հրետանային մատակարարման սպայի համազգեստ հագած «ստուգել էր» մի հրետանային գունդ։ Մի ուրիշ անգամ նա ստացավ նախատեսվող լարափակման լրիվ պլանը. Նա մեծ գլխացավանք էր պատճառում այն բոլոր սպաներին, վորոնք թեկուզ հեռավոր կերպով նմանություն ունեյին նրա հետ։ Նրանց ձերբակալում եյին ամենաշատ առաջադրանքներ կատարելու մոմենտին և ստիպում եյին ժամանակ կորցնել՝ մինչև վերջնականապես կպարզվեր նրանց ով լինելը։

ԿԱՊԸ ՀԵՏԱԽՈՒՅԶԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՄԵՆԱՎՏԱՆԳԱՎՈՐ ՄԱՍՆ Է.

Հետախույզի աշխատանքի ամենավտանգավոր մոմենտը տեղեկությունների ըստ նշանակման հաղորդելն է։ Հակահետախուզության գործակալների կողմից հայտաբերված

10-ը հետախույզից 9-ը տապալվել են կապի այն միջոցների անհուսալիության հետևանքով, վորոնցից օգտվում եյին նրանք։ Համաշխարհային պատերազմի ժամանակ գերմանական մի գործակալ օգտագործում է Սկարպ գետը, վորը հոսում էր Առասի մոտով, բրիտանական դիրքերից դեպի գերմանական դիրքերը. Նա ճեղքում էր ձկան մարմինը, բացվածքի մեջ դնում իր հաղորդագրությունները և ձկանը, ռազմական ինֆորմացիայի հետ միասին, վստահում գետին, ըստ նշանակման հասցնելու համար։ Այդ գործակալը չբռնվեց, նրա ուղարկած հաղորդագրություններից հակառակորդի ձեռքն ընկավ միայն մեկը։ Անգլիական զինվորներին հրամայվում է հավաքել ու ստուգել գետի յերեսին նրանց դիրքերի մոտով լողացող բոլոր թափթփուկները և շնորհիվ այդ բանին, մի խորամանկ հնարամտություն ևս սնանկ դուրս յեկավ։

Փոստատար աղավնիների օգտագործումն այն աստիճան սովորական յերևույթ էր, վոր ռազմաճակատում բոլոր զինվորներին հրամայվում էր սպանել հակառակորդի կողմը թռչող աղավնիներին։ Հավաստի կերպով ապացուցված է, վոր մի աղավնի ներկված է յեղել վառ գույներով, վորպեսզի նմանվի թութակի, վորովհետև ինչ-վոր մի գործակալ յենթադրում էր, վոր թութակը Ֆլանդրիայում պակաս չափով ուշադրություն կգրավի, քան աղավնին։ Նպաստավոր քամու ժամանակ, Ֆրանսիայում գործող գերմանական գործակալները փորձում եյին իրենց զեկույցները տեղ հասցնելու համար օգտագործել օդապարիկներ։ Գերմանական սնայպերները կրակում եյին այդ խաղալիքների վրա, և դրանք ընկնում եյին գերմանական տերիտորիայում։ Բայց ֆրանսական ու բրիտանական սնայպերներին նույնպես հրամայված էր հետևել խաղալիք օդապարիկներին և գնդակահարել նրանց, յերբ նրանք կերևային բրիտանական կամ ֆրանսական տերիտորիայի վրա։

Խաղաղ ժամանակ նամակները տեղ են հասցվում բավականաչափ արագ և հուսալի կերպով։ Բայց պատերազմի ժամանակ նրանք ընկնում են գրաքննիչի ձեռքը, վորը նկատում է յուրաքանչյուր նշագրում, տեքստի միտումնա-

վորություն, ընդգծումներ և այլ առանձնահատկություններ, վորոնք թեկուզ հեռավոր կերպով կոդի առկայության մասին միտք եյին հղացնում։ Սիմպատիկ թանաքի ոգտագործումը, թվում է, վոր կարող եր մոլորության մեջ գցել գրաքննիչներին։ Բայց հետախույզ Անտոն Կյուպֆերլեն, վորը Թաուեր գնաց Լոդիի հետևից, հայտաբերվեց շնորհիվ այն բանի, վոր Հոլանդիա ուղարկված նրա նամակը քիմիական միջոցներով վերծանվել եր։

Կյուպֆերլեն հարմար մարդ չեր հետախուզության համար։ Համաշխարհային պատերազմի ժամանակ փոքր թվով գերմանական գործակալներ չեն զոհվել անճիշտ արտասանության պատճառով։ Կյուպֆերլեն իր արտասանությամբ կասկած եր առաջացնում դեռ նախքան Լիվերպուլում ափ իջնելը։ Նրան հնարավորություն տրվեց այցելել Դուբլին և այնտեղից ուղևորվել Լոնդոն, ուր նրան կործանող նամակն ուղարկելուց անմիջապես հետո Սկոտլանդ Յարդի դետեկտիվներն ընդհատեցին այդ գործակալի կարճատև կարյերան, գործակալի, վորի պատրիոտիզմը չեր կարող ծածկել նրա լիակատար անտեղյակությունը՝ հետախուզության գործում։

Թշնամի յերկու կողմերի քիմիկոսները նոր ու հիանալի թանաքներ եյին պատրաստում ամեն անգամ, յերբ նախկին թանաքների գաղտնիքը հայտնի յեր դառնում հակառակորդին, և յուրաքանչյուր այդպիսի գյուտ գաղտնի ճանապարհներով ուղարկվում եր գործակալներին։ Այդ պատճառովել թանաքները հաճախ պատրաստվում եյին վորպես դեղ, սապոն, ատամի պաստա, քսուք։ Բայց փոքր քանակությամբ թանաք ուղարկելու էլ ավելի լավ յեղանակ եր համարվում այն, յերբ վոչինչ չկասկածող մի ճանապարհորդի խնդրում եյին մի վորևե զգեստ հանձնել արտասահմանում գտնվող բարեկամին։ Այդ բարեկամը— գործակալ եր լինում կամ նրա ոգնականը, իսկ զգեստը (վերարկու, ժիլետ, վերնաշապիկ, վարտիք կամ մի զույգ գուլպա) թաթախված եր լինում նոր տեսակի թանաքի մեջ։ Այնպիսի մի հասարակ պրոցես, ինչպիսին վերնաշապիկը կամ գուլպաները յեփելն է, կարող եր գործակալին

մատակարարել բավականին քանակությամբ թանաք, ծածկելու համար այն լրագրի լուսանցքները, կամ թե մի այլ թղթի յերես, վորը կարող եր խուսափել գրաքննչի զգաստությունից։

Մի չափազանց կարևոր հետախուզական զեկույց, վոր պատերազմի սկզբում ստացվել եր Անգլիայում մի բելգիական գործակալից, գրված է յեղել չափազանց յուղոտված, կարծես թե ամբողջապես յուղի մեջ թաթախված մի մեծ թերթ թղթի վրա, իսկ նամակի կենտրոնում այրելու միջոցով բացված եր մի մեծ ծակ։ Այդ թղթի վրա կիտրոնա-ֆորմալինային թանաքով գրված եր գերմանական այն զորքերի թվական կազմի մանրամասն գնահատականը, վորոնք Բելգիայով անցնում եյին դեպի Ֆրանսիա։ Գրանցումը յուղի միջով շարունակվում եր մինչև այրված ծակի յեզրը և ապա նրա մյուս կողմից շարունակվում մինչև թղթի ծայրը։ Այդ թղթի մեջ փաթաթված եր մի զույգ կոշիկ, վորը մի գաղթական իր հետ տանում եր հապճեպորեն դասավորված այլ մանր իրերի հետ միասին։

Վոմանք պնդում եյին, վոր չպայթած արկերը չեն պայթել հենց այն պատճառով, վորովհետև նրանց մեջ պայթուցիկ նյութի փոխարեն դրված են յեղել հրահանգներ։ Յենթադրվում եր, վոր գործակալներին հայտնի յեր, թե յերբ և վորտեղ պետք է բաց թողնվի իր համար նախատեսվող արկը։ Գործակալը պետք է գտնվեր տվյալ վայրի մոտակայքում, փորելով դուրս բերեր արկը և հետազոտեր նրա բովանդակությունը։

Շատ գործակալներ ստանում եյին այնպիսի մեծածավալ առարկա, ինչպես օրինակ՝ փոստատար աղավնիներով վանդակը։ Գործակալը պետք է հետաքրքրվող աչքերից թաքնվեր և՛ ինքը, թաքցներ և՛ աղավնիներին։

Ռուբեյում բնակվող անգլիական գործակալ Ռիչարդսոնը մի անգամ իր մոտ ընդունում եր գերմանական շտաբի մի սպայի. այդ ժամանակ աղավնին հանդուգն կերպով գլուխը դուրս է հանում զամբյուղից։ Գերմանացին այնպես է ձևացնում, թե վոչինչ չի նկատել, բայց շուտով գնում է և վերադառնում մի զինվորի հետ։ Հավա-

տացած լինելով, վոր սպան նկատել է աղավնուն, Ռիչարդսոնը զամբյուղի մեջ աղավնու փոխարեն դնում է մի հավի ձուտ, և այդ ձուտն այնպես է ապշեցնում գերմանացիներին, վոր նրանք հեռանում են առանց կասկածելու, վոր Ռիչարդսոնն աղավնին թագցրած լիներ ուրիշ տեղ:

Փոստատար աղավնու բռնվելն ավելի մեծ վտանգ է սպառնում, քան հակառակորդի գործակալի ձերբակալությունը: Յեթե գերմանացիները բռնեյին Ռիչարդսոնի աղավնուն, նրանք անտարակույս նրան կոգտագործեյին սուտ ինֆորմացիա ուղարկելու համար: Հետախույզները միշտ իրենց հաշիվ եյին տալիս այդ բանում և շատ անգամ, յերբ ձերբակալությունը մոտակա րոպեների հարց էր թվում, նրանք նախ բաց եյին թողնում իրենց աղավնիներին, նոր միայն մտածում իրենց փրկության մասին: 1916 թվականին մի սավառնորդ տանելիս է լինում մի հետախույզի, վորին նա պետք է իջեցներ Բելգիայի մի հեռավոր մասում: Քանի վոր գործակալն ուղարկվում էր առնվազն յերկու շաբաթ ժամանակով, նրա հետ տվել եյին յերեք աղավնի, վորոնց նա պետք է թողներ ռեզիդենտ-գործակալի մոտ և վորոշ ընդմիջումներով հետ ուղարկեր նախնական զեկույցներով: Չնայած սավառնորդի փորձառությանը, մոտենալով վայրէջքի վայրին, սավառնակն աղետի յե յենթարկվում, ըստվորում գործակալն սպանվում է, իսկ սավառնորդը ծանր վիրավորվում: Շնորհիվ զամբյուղի առաձգականության, աղավնիները մնում են անվնաս, բայց սավառնորդի վոտքը կոտրվել էր, նա ընկած էր իր սավառնակի բեկորների մեջ և չէր կարողանում հասնել նրանց: Նա գիտեր, վոր մի քանի ժամից հետո իրեն կգտնեն, և, յեթե գտնի գերմանական պահակը, ապա աղավնիները կտեղափոխվեն մոտակա շտաբը, իսկ այնուհետև կուղարկվեն դաշնակիցների մոտ այնպիսի ինֆորմացիայով, վորը ցանկալի կլինի հակառակորդի հրամանատարությանը: Հավատացած լինելով, վոր մինչև առավոտ վոչ մի զորամաս չի անցնի աղետի վայրի մոտով, նա սկսում է ոգնություն կանչել: Նրա յենթադրությունը ճիշտ է դուրս գալիս. մի ծեր բելգիացի՝ շուկայի մանրավաճառ կին, առաջինը լսելով աղաղակները, մոտենում է աղետի վայրին, ձեռքի շարժումներից հասկանում սավառնորդի միտքը և նախքան նրան ոգնություն ցույց տալը, բաց է անում աղավնիների զամբյուղը:

Սավառնակի ոգտագործումը՝ հակառակորդի թիկունքը հետախույզներ փոխադրելու համար, մեծագույն նորմուծություն է հանդիսանում հետախուզության պատմության մեջ: Առաջին անգամ այդ միջոցն ոգտագործվել է Բալկանյան պատերազմի ժամանակ, 1912—1913 թվականներին: Առաջին փորձերը կապված են մի հնարամիտ պատանի ամերիկացու անվան հետ, վորը նաև ֆրանսիական գլխավոր շտաբին այդ յեղանակի հետ ծանոթացնում է 1914 թվականի վերջերին: Լեյտենանտ Բերտ Խոլլը, վորպես սավառնորդ, իր կարյերն սկսում է թուրքական բանակում, 1912 թվականին: Նա թռչում էր ֆրանսիական մոնոպլանով և ոդային հետախուզություն կատարում, որական հարյուր վոսկի դոլլար վարձատրությամբ: Թուրքական բանակը կանգնած էր պաշտպանողական դիրքերում: Յերբ Կիրկ Կիլիսի և Լյուլե Բուրգասի պարտություններից հետո, պաշարվում է Ադրիանուպոլիսը, թուրքերն սկսում են հետաքրքրվել Փոքր Ասիայով: Խոլլը լավ էր աշխատում, բայց յերբ դադարեց վարձատրությունը, դադարեց նաև նրա աշխատանքը: Նա իր սավառնակով ֆրանսիացի մեխանիկի հետ միասին թռչում է Բուլղարիա և բուլղարացիների կողմից հրավիրվում նույն գումարով հետախուզություն կատարելու իրենց համար: Յեվ վորովհետև նա թուրքերի մոտ ծառայելու ժամանակամիջոցում հիմնովին ուսումնասիրել էր Կոստանդնուպոլսի ամրացված դիրքերը, նրան առաջարկում են փորձ կատարել իջնելու ճակատի այն կողմը, Չաթալջայի մոտ, հետախուզության նպատակով: Խոլլը մասնանշում է ոդային հետախուզության, վորի համար նա հրավիրված էր, և գործակալային հետախուզության միջև յեղած՝ բոլորին հայտնի տարբերությունը: Բայց նա համաձայնվում է համապատասխան վարձատրությամբ փորձել թուրքական ճակատի սահմաններում իջեցնել վորևէ բուլղարական գործակալի:

Սակայն, երբ բուլղարներն սկսում են ձգձգել վճարումները, Խոլլը պատերազմն իր համար ավարտված է համարում։ Նա արդեն սպառել էր պատերազմող յերկու կողմերի՝ ոդային հետախուզության համար հատկացված միջոցները։ Նա արդեն հավաքում էր իր իրերը, բայց... ձերբակալվում է, որպես թուրքական լրտես։ Պարտատիրոջ հետ հաշիվ մաքրելու բալկանյան այդ տիպիկ մեթոդն ամերիկացուն դնում է վերին աստիճանի կրիտիկական դրության մեջ. որպես վարձկան, նա չէր կարող ոգնություն դիմել ամերիկյան դիվանագիտական ներկայացուցիչների մոտ։ Նա կանգնում է զինվորական դատարանի առաջ և դատապարտվում մահապատժի։ Նրա ֆրանսիացի մեխանիկը, որը ձերբակալվել էր որպես յերկրորդական մասնակից, կարողանում է փախչել և, միքանի կորիճների հետ վերադառնալով, հարձակվում է բուլղարական հաուպտվախտի վրա ու ազատում Խոլլին։ 1914 թվականի ոգոստոսին ամերիկական սավառնորդը վերադարձնում է ֆրանսիացիներին ունեցած իր պարտքը, պատերազմի յերկրորդ օրն իսկ միանալով ֆրանսիական բանակին։ Յերեք ամիս հետո նա փոխադրվում է ոդային ծառայության։ Նա մտնում է Լաֆայետի եսկադրիլի կազմի մեջ, որից պատերազմի վերջում կենդանի յեն մնում միայն Խոլլն ու դարձյալ մեկ սավառնորդ։ Մինչև այդ եսկադրիլի կազմվելը, լեյտենանտ Խոլլը ֆրանսիական հետախույզներ էր փոխադրում գերմանական զորքերի թիկունքը։ Այդպիսի թռիչքները պետք է կատարվեյին գիշերով և որքան ավելի մութ լիներ գիշերը, այնքան լավ. վայրէջքը կատարվում էր անծանոթ ու չնախապատրաստված վայրում. ապա նա պետք է վերադառնար, իսկ յերկու շաբաթից հետո նա թռչում էր հետախույզին բերելու, և նորից կրկնվում էր այս բոլոր վտանգավոր պրոցեդուրը։ Խոլլն այդ գործի պիոներն էր և իր սառնասրտության ու հմտության շնորհիվ հաջողությամբ կարողացավ վերադարձնել բոլոր հետախույզներին։

Այդ աստիճան վտանգավոր փորձերից հետո, գործակալների փոխադրությունն ոդով մտնում է բոլոր պատե-

րազմող պետությունների ավիացիայի աշխատանքի որակարգի մեջ, ընդվորում սավառնորդի և նրա ուղևորի պաշտպանության համար հնարված եյին բազմաթիվ զանազան կատարելագործված միջոցներ։ Այսպես, որինակ, վայրէջքը կատարվում էր մի որևէ հետախույզ-ռեզիդենտի տան մոտ, որն ուժեղ լույս էր վառում ծխնելույզի մեջ, այնպես՝ որ լույսը յերևար միայն վերևից։ Այդ ազդանշանը նույնպես ոգնում էր սավառնորդին՝ գործակալին վերադարձնելու համար թռչելիս։ Միքանի դեպքերում հետախույզ ռեզիդենտը պատրաստ չէր լինում պայմանավորված գիշերը, կամ թե պատահում էր, որ նրան ձերբակալած եյին լինում լրտեսության մեջ կասկածելով, այն ժամանակ սավառնորդի թռիչքն անցնում էր ապարդյուն։ Յերբեմն սավառնորդն ստիպված էր միքանի գիշեր իրար հետևից ապարդյուն թռիչքներ կատարել, մինչև որ կերևար գործակալը։

Դաշնակիցները մեծ առավելություն եյին վայելում գաղտնի հետախուզության այդ բնագավառում։ Բելգիայում և Ֆրանսիայի ոկուպացիայի յենթարկված մարզերում նրանց համար բաց եյին գերմանացիներին անհայտ հազարավոր վայրէջքի հրապարակներ, ընդվորում հարյուրավոր հայրենասերներ միշտ պատրաստ եյին ոգնելու նրանց։ Այնպիսի ցածր վարձատրությամբ, ինչպես 700 ֆրանկը՝ յերկու ուղղությամբ թռչելու համար, անգլիացիներն ու ֆրանսիացիներն ոգտվում եյին Բելգիայի նախկին բնակիչների ծառայությունից, որոնք կարող եյին իջեցվել իրենց տների մոտ կամ մերձակա արվարձաններում, որտեղ նրանց հայտնի յեր յուրաքանչյուր թիզ հողը։ Արևմուտքում այդպիսի առավելություն ձեռք բերելու համար գերմանացիներն ստիպված եյին վճարել դավաճան-ֆրանսիացիներին, որոնք ծանոթ եյին վայրին, բայց կարող եյին հայտնի լինել և ձերբակալվել որպես լրտեսներ։ Յերբ գերմանացիները համոզվեցին, որ հանգամանքները դասավորվում են նրանց դեմ, նրանք միկրոֆոններ դրին, որոնք որսում եյին ինքնաթիռի մոտորի աղմուկն ոկուպացիայի յենթարկված տերիտորիայի այն

հեռավոր մասերում, վորտեղ գերմանացի սավառնորդները գիշեր ժամանակ անելու վոչինչ չունեյին։ Դաշնակիցները չեզոքացրին այդ հարվածը, կրկնակի կրճատելով անհրաժեշտ վայրէջքների թիվը և հետախույզներին ցած իջեցնելով պարաշյուտներով։ Այդպիսով, հետախուզությունն ընդունել եր ֆանտաստիկ տեսք, և հետախույզները հակառակորդի վրա եյին իջնում ուղղակի յերկնքից, ըստվորում հակառակորդը, պարտիզանների (իսկ պարտիզանները պատրաստ եյին ընդունելու և թաքցնելու հետախույզին) բոլոր արտերի ու այգիների վրա հսկողություն ունենալու համար պետք է խրամատներից դուրս բերեր իր բոլոր զինվորներին։

Պատերազմի մեջ պահանջվում է արիություն։ Իհարկե, կային բավականաչափ խիզախ տղամարդիկ ու կանայք, վորոնք կարող եյին հետախուզություն կատարել, բայց թռչել հակառակորդի զենիթային մարտկոցների վրայով, վայրէջք կատարել մթության մեջ, կամ, վոր ել ավելի վատ է, թռչել պարաշյուտով — այդ քչերը կարող եյին ցանկանալ։ Սակայն բոլորին պարզ են այն հետախույզի առավելությունները, վորը տեղ եր հասցվում սավառնակով։ Յենթադրենք, վոր սավառնորդը կատարել է հաջող վայրէջք, իսկ հետախույզն իր համազգեստը փոխել ու հագել է քաղաքացիական զգեստ և ուղևորվել այն քաղաքը, վորտեղ այցելելը նրան կտա արժեքավոր նյութ։ Կարիք չկա, վոր նա վորևե բան գրանցի, վորովհետև վերադառնալու յե ամենաշատը մի յերկու շաբաթից հետո և անձամբ կհաղորդի այն բոլորի մասին, ինչ նրան հաջողվել է տեսնել։ Միանգամայն բնական է, վոր հետախույզը կհետևի անցնող զորքերին և, քանի վոր յուրաքանչյուր զինվորի համազգեստի վրա կան վորևե գնդի կամ դիվիզիայի տարբերանշաններ, հետախույզը հիշելով այդ նշանները, արժեքավոր տեղեկություններ է հավաքում տվյալ շրջանի զորամասերի վերաբերյալ։

Յեթե այդ հետախույզը հանդիպի հրետանային խոշոր պարկի, նա պարտավոր է իմանալ, թե քանի՞ թնդանոթ կա պարկում և նրանք ինչ վիճակի մեջ են գտնվում։ Դիտելով միքանի թնդանոթներ մերթ այս, մերթ այն վայրում, նա կարող է գտնել, թե այդ թնդանոթները նո՞ր են արդյոք, թե արդեն յեղել են մարտում։ Բացի դրանից, նա կվորոշի նաև նրանց կալիբրը։ Սակայն թնդանոթների նկատմամբ չափից դուրս բացահայտ հետաքրքրություն ցուցաբերելը կարող է ճակատագրական լինել հետախույզի համար։ Կողմնակի աչքը չպետք է նկատի, վոր հետախույզը հաշվում է թնդանոթները։ Նա կարող է առանց թնդանոթների վրա ուշադրություն դարձնելու, զբոսնել պարկի շուրջը, հաշվելով քայլերը և վորոշել, վոր յերկարությունն այսքան է, լայնությունն՝ այսքան։ Այնուհետև, բազմապատկելով այդ թվերը, նա կհաշվի յուրաքանչյուր տիպի թնդանոթի գրաված մոտավոր տարածությունը և կվորոշի պարկի ամբողջ տարածությունը, իսկ այնուհետև ամբողջ տարածությունը բաժանելով յուրաքանչյուր թընդանոթի գրաված տարածության վրա, հետախույզը կստանա թնդանոթների մոտավոր թիվը։

Հնարավոր է, վոր հետախույզն առիթ կունենա ռեզիդենտ-գործակալից ընդունել գրավոր զեկույց, վորը մոտքում պահելը դժվար կլինի։ Այդ դեպքում նա զեկույցն իր հետ վերցնում է միայն այն ժամանակ, յերբ ուղևորվում է դիմավորելու յեկող սավառնակին։

Հետախույզը պետք է խուսափի սահմանապահ պահակատեղով անցնելուց, վորտեղ նրան կարող են յենթարկել հարցաքննության և խուզարկության։ Նա պետք է գործը կատարի առանց գրավոր զեկույցների, վորքան ել քողարկված լինեն դրանք։ Այդ միքանի անգամ կավելացնի նրա անվտանգությունը։

Սավառնակների օգտագործման ժամանակ գաղտնի հետախուզության գործակալները խուսափում են սահմանի վրա նրանց սպասող վտանգից։ Ներկայումս նախապատվությունը միշտ կտրվի այն գործակալին, վորն իր զեկույցներն անգիր է հիշում և ներկայացնում է բանավոր։

Համաշխարհային պատերազմի շրջանի փոստային խիստ գրաքննությունն ուներ նաև իր դրական կողմը, վորն օգտագործեց գաղտնի հետախուզությունը։

Կապի միջոցները, գրաքննիչներից խուսափելու համար, պետք ե լինեյին ծայրահեղ չափով պարզեցված։ Յերբ այդ պայմանը հաշվի առնվեց, դրան հետևեցին բազմաթիվ գյուտեր։ Բարդ կոդերը և հնարամիտ շիֆրերը, վորոնք խճճված եյին այն աստիճան, վոր դրանք վերծանող լեյտենանտները խելագարվում եյին, արխիվ հանձնվեցին մուսկետների, փողի կողմից լցվող հրացանների և այլ հնացած իրերի հետ միասին։ Գաղտնի գործակալը կարող եր իր գրավոր հաշվետվությունը ներկայացնել մի շարք անկապ ու կցկտուր բառերով, նշաններով և թվերով։ Այդ հաշվետվությունը կարող եր մոլորության մեջ գցել հակառակորդին, յեթե այն պատահաբար ընկներ նրա ձեռքը։ Սակայն փաստաթղթի արտաքին տարորինակությունը կարող եր նաև արագացնել գործակալի տապալումը։

Եդգար Ալլան Պոեն զարմանալի պարզությամբ գրում եր հաղորդագրությունների վերծանման այդ բարդ պրոբլեմի մասին հաղորդագրություններ, վորոնք գաղտնի եյին մնում բոլոր նրանց համար, ովքեր չունեյին այն բանալին, վորից ոգտվել եր հաղորդագրությունը գրողը։ Պոեյի նկարագրած մեթոդները հարյուր տարվա ընթացքում այնքան ել չեն փոփոխվել։ Մի այլ ամերիկացի, գնդապետ Ֆաբիանն իր գիտելիքներն ու ազատ ժամանակը նվիրել եր կոդերի և շիֆրերի հետ կապված բոլոր տեսակ պրոբլեմների լուծմանը։ Ուսումնասիրելով տպագիր տեքստների հազարավոր եջեր, նա կատարելագործում եր տառերի կրկնվածության աղյուսակը, վորը հեշտացնում ե վերծանողի աշխատանքը։

Կոդերի վերծանման այդ հեշտությունը կարևոր դեր ե խաղում, քանի վոր նա սահմանափակում ե դրանց ոգտագործումը պատերազմի ժամանակ։ Կոդերն ու շիֆրերը միշտ իբրև մեկուսիչներ են ծառայում հաղորդվող մտքերի համար։ Բանակին տրվող հրամանները, անկախ հաղորդման յեղանակից, պետք ե լինեն շիֆրագրված, վորը ներկայացնում ե բառերի կամ տառերի հասարակ վերադասավորություն։ Դրանք կարող են հեշտությամբ վերծանվել յուրաքանչյուրի կողմից, ով ունի բանալին։ Շիֆրագիրը նախա-

տևվում ե հակառակորդին մոլորության մեջ գցելու համար ամենաշատը միքանի ժամով։ Շիֆրերը միայն փակուղու մեջ են դնում և ծածկում են գաղտնիքը, մինչդեռ կոդերը կարող են այնպես խորը թաքցնել միտքը, վոր կոդային գիրքը կորչելու դեպքում՝ նրանք յերբեք ել հայտնի չեն դառնա։ Կոդերն ոգտագործում են այնպիսի բառեր ու նախադասություններ, վորոնք ունեն այլ՝ պայմանական նշանակություն, ըստվորում նրանց իսկական իմաստն անհնարին ե հասկանալ, յեթե անհայտ ե, թե ինչ ե նշանակում կոդի յուրաքանչյուր առանձին բառը կամ արտահայտությունը։ Պատերազմի ժամանակ մի բրիտանական գեներալ, վորպես փորձ, կարևոր հրամանները ռադիոյով հաղորդում ե բաց տեքստով։ Ինչպես և նա սպասում եր, գերմանացիները կարդալով նրա կարճ ու յեռանդուն առաջարկները, համոզվում են, վոր այդ մի նոր, վերին աստիճանի խճճված կոդ ե, և չեն ոգտագործում բռնված հրամանները։ Այս եր կոդերի ու շիֆրերի մշտապես ոգտագործման արդյունքը — այն ամենն ինչ թվում եր չափազանց պարզ, ընդունվում եր վորպես ամենաբարդ կոդ։

Բայց ինչպես գտնել այն կոդը, վորով հետախույզը կարող ե ոգտվել և վորը կարող են չնկատել գրաքննիչները։ Յեթե հետախույզն աննկատելի թանաքով գրում ե նամակի տողերի, կամ նոտաների միջև, հայտարարությունների կամ թերթերի վրա, ապա նա վարվում ե հին սովորությամբ, աշխատելով իր ինֆորմացիան գրել կոդով։ Միքանի տառերի կամ թվերի յերևալն ուղարկվող նյութը կմատնի վորպես վտանգավոր փաստաթուղթ, և այն կըվոչնչացնեն։ Մի գործակալ Անգլիայում ձերբակալվում ե այն բանի համար, վոր իշխանությունների ձեռքն եր ընկել մի այնպիսի աննշան հանցանշան, ինչպիսին եյին թերթի լուսանցքներում գրված յերեք թվանշանները։ Կարելի յե յենթադրել, վոր, յեթե նրա թվերը գրված լինեյին կոդով, նա կկարողանար փրկել իր կյանքը կամ թե ավելի յերկար ժամանակվա ընթացքում մնալ չհայտաբերված։ Բայց հետախույզներն ինչ-վոր անտրամաբանական թշնամություն են ցուցաբերում դեպի կոդերն ու

շիֆրերը։ Վորքան գործակալներ են զոհվել տխմար կամ բարդ խորամանկությունների հետևանքով։ Իզուր չէ, վոր այդ սարքովի միջոցներին փոխարինելու յեկավ, վորպես քողարկման նոր միջոց, շեշտված բնականությունը։ Յերկու հոլանդացի, Յանսենը և Ռոսը, աշխատում եյին վորպես ծովային հետախուզության գործակալներ. Նրանք իրենց հանդես եյին բերում իբրև ծխախոտի ֆիրմայի կոմիսիոներներ և իրենց այցելած բոլոր ծովային նավահանգիստներից հեռագրեր եյին ուղարկում, տալով ամենաթանկ մարկայի հազարավոր սիգարների պատվեր։ Այդ հեռագրերի մեջ «թագ» բառը նշանակում եր գծանավ։ Յեթե պատվիրվում եր 4000 «թագ», այդ նշանակում եր, վոր այն նավահանգստում, վորտեղից ուղարկվել է «պատվերը», կանգնած են 4 գծանավ։ Բնական է, վոր սիգարների այդպիսի հանկարծակի պահանջը գրավում է հեռագրական գրաքննիչների ուշադրությունը։ Յերբ այդ «հոլանդական վաճառականներին» (իրականում՝ գործազուրկ նավաստիներին) հարցաքննության են յենթարկում, նրանք հայտարարում են, վոր իրենք հոլանդական մի ֆիրմայի ներկայացուցիչներ են. Նրանց հիշատակած ֆիրման այն աստիճան աննշան եր, վոր թանկարժեք սիգարների այդպիսի մեծ պատվերները կարող եյին բացատրվել միայն նրա տիրոջ թույլ բանականությամբ։ Յերբ նրանց ներկայացվում են հանցանքն ապացուցող փաստեր, նրանք խոստովանում են և մահվան դատապարտվում։

Շիֆրը հայտնի յե յեղել դեռ հնադարյան հույներին ու հռոմայեցիներին, ըստվորում թե առաջինները և թե յերկրորդներն արդեն ոգտվում եյին աղավնիների փոստից և՝ մի հնադարյան պատմաբանի տվյալներով՝ փորձում եյին ծիծեռնակներին վարժեցնել ռազմական հաղորդագրություններ փոխադրելու մեջ։ Մի հնարամիտ հույն, Միլետի բռնակալը, ցանկանում է ապստամբություն բարձրացնել Դարեհի դեմ։ Հաշվի առնելով պարսիկների զգաստությունը, նա հրամայում է սափրել իր ստրուկներից մեկի գլուխը, նրա սափրած գլխի վրա գրում է իր հաղորդագրությունը և, յերբ մազերն աճում են, նրան

ուղարկում է հոնիացի Արիստագորի մոտ, վորը կարող եր հաղորդագրության բովանդակությանը ծանոթանալ շատ հասարակ կերպով, նորից սափրելով ստրուկի գլուխը։ Ժամանակակից գաղտնի գործակալը, գաղտնիքներ հաղորդելու նոր ուղիների ու միջոցների վորոնման ասպարեզում, նորից հարկադրված է դիմել խորամանկության։ Վոգեզի արվարձաններում բարձրացող ծուխը հաղորդման լավ միջոց եր համարվում։ Ծուխը յերևում եր հեռու տարածություններից։ Յեվ բացի դրանից, ծուխը կարելի յեր կարգավորել—այսինքն՝ բաց թողնել վորոշ ընդմիջումներով և այլն։ Մի խոսքով, ծուխը չափազանց ճկուն կոդ եր։ Աննկատելի, համարյա միկրոսկոպային քերծվածքները դրամների վրա նույնպես կոդ եյին։ Վոչինչ չկասկածող ճանապարհորդին կարող եր դիմել հյուրանոցի վորևե ծառայող, խնդրելով միքանի ռուբլի հանձնել այն քաղաքում ապրող իր «չքավոր ազգականին», վորտեղ ուղևորվում եր ճանապարհորդը։ Վերջինս վերցնում եր դրամները, առանց իմանալու, վոր նրանցից յուրաքանչյուրի վրա գծագրված է յերկուսից մինչև 10 բառ, վոր կարելի յե կարդալ դրամները՝ խոշորացնող ապակու տակ դանդաղ պտտելու միջոցով։

Այսպես կոչվող «բառարանային» շիֆրը հաջողությամբ թաքցնում է հաղորդագրությունն անտեղյակ մարդուց, բայց վոչ մի գործակալ հակառակորդի տերիտորիայում չի կարող այն ոգտագործել նամակի կամ հեռագրի համար, վորովհետև այդպիսի հաղորդագրությունն անմիջապես կբռնվի գրաքննչի կողմից։ Այդ կոդը հիանալի միջոց է գաղտնի հետախուզության գործակալների միջև գրագրություն պահպանելու համար՝ խաղաղ ժամանակ։ Կոդից ոգտվելու համար անհրաժեշտ է ունենալ միայն մեկ գիրք, գերադասելի յե բառարանը։ Այն մարդու համար, վորն անծանոթ է տվյալ բառարանին և խոսքերի նշանակության ընդունված սիստեմին, այդպիսի կոդով ուղարկվող հաղորդագրությունը կթվա տառերի ու թվերի կուտակում, խելագարի հատուկ կետադրություններով։ Այդ նպատակի համար ամենից ավելի հարմար են փոքր բառարանները, տպված յերկու սյունակի վրա։

Ավելի հոգնեցուցիչ կոդը, բայց այնպիսին, որը միանգամայն հուսալի է և կատարելության է հասցնում փոստային գրաքննությանը, դա տրաֆարետն է, որը տեքստից առանձնացնում է միքանի խոսք, որոնք կազմում են ինքնուրույն հաղորդագրություն, բայց ցրված են երկար ու ճապաղ նամակի մեջ։ Տրաֆարետը ներկայացնում է սովորական թղթի մի թերթ, վրան ծակոտիներ արված, որոնց արանքից երևում են անհրաժեշտ բառերը։ Այդ ծակոտիները, որոնք կազմում են մի որոշ նկար, ինչպես նաև նրանց հեռավորությունը միմյանցից ու լուսանցքներից, պետք է պահպանվեն գործակալի հիշողության մեջ, որը հաղորդագրությունը գրելիս պետք է հաշվի առնի տրաֆարետի ծակոտիների չափը։ Յուրաքանչյուր գործակալ պետք է իր տրամադրության տակ ունենա տրաֆարետի 6 կամ 7 վարիանտ, իր գաղտնի զեկույցի համար անհրաժեշտ բառերի ամեն տեսակ կոմբինացիաները նրանց հետ հարմարեցնելու համար։ Միևնույն նամակի մեջ կարող է լինել երկու կամ երեք հաղորդագրություն, գրված ընտանեկան գործերի մասին պատմող տողերի արանքում։ Այդ հաղորդագրությունները կարդալու համար անհրաժեշտ է ունենալ երկու տարբեր տրաֆարետ։ Նամակն ստացողը, եթե նա տապալվելու վախ չի կրում, պատրաստի վիճակում ունենում է անհրաժեշտ տրաֆարետները։ Նամակի առաջին ֆրազի մեջ շաբաթվա որևէ օրվա մասին արված հիշատակումը ցույց է տալիս, թե նա տրաֆարետների ինչպիսի կոմբինացիա պետք է օգտագործի. այնուհետև նա տրաֆարետը դնում է մատնանշված էջի վրա և կարդում գործակալի զեկույցը։ Այն դեպքում, երբ ո՛չ նամակ գրողը, ո՛չ նրա հասցեատերը, իրենց մոտ չեն կարող պահել իրենց մերկացնող փաստաթուղթը, անհրաժեշտ է, որ նրանք չափազանց ստույգ կերպով հիշեն տրաֆարետի նկարը։

Այն գործակալը, որն իր տրամադրության տակ ունի բացարձակապես հուսալի կոդ կամ շիֆր, պետք է հաղորդագրությունն ուղարկելիս (միևնույնն է՝ փոստով, թե հեռագրով) հաշվի առնի հասցեի վտանգավոր պրոբլեմը։

Գրաքննիչները հակահետախուզության գործակալների աշխատակցությամբ չափազանց ստույգ տեղեկություններ են ձեռք բերում չեզոք երկրների քաղաքներում հակառակորդի ունեցած հետախուզական կենտրոնների մասին և հիշում են կասկածելի նամակների կամ հեռագրերի հետ կապված բոլոր հասցեները։ Համաշխարհային պատերազմի ժամանակ գերմանական գործակալները, հրահանգի համաձայն, հասցեագրում էին գոյություն չունեցող բելգիական գերիների անունով, որ մի վերին աստիճանի սրամիտ հնարք էր. բայց գերմանական մի շարք գործակալներ, որոնք իրենց հանդես էին բերում որպես կոմիսիոներներ, հսկայական սխալ էին գործում, հայտարարելով, թե իրենք եղել են հոլանդական ու շվեյցարական ֆիրմաների գործակալներ, ըստորում մատնանշելով այնպիսի ֆիրմաների անուններ, որոնք արդեն հիշատակված են եղել նրանցից առաջ տապալված գործակալների կողմից, սակայն որոնց ճակատագիրը նրանց համար անհայտ էր։ Արձակուրդից հետո Ֆրանսիա վերադարձող անգլիական զինվորներից վոմանց խնդրում էին նամակ տանել իրենց հետ և գցել փոստարկղը։ Անգլիացիներն ուրախությամբ կատարում էին այդ խնդիրը, առանց հաշիվ տալու իրենց, որ նրանց միջոցով Ֆրանսիա տարվող նամակը չէր անցնում ոչ մի գրաքննության ձեռքից։ Բայց նամակները միշտ չէ, որ եղել են կապի գլխավոր միջոցը. պատահել են դեպքեր, երբ զեկույցը գրված է եղել խոր թե շուկա ուղարկվող ձվերի և մազերի գանգրացման ունելիների վրա։ Վերջին դեպքում մակագրությունը արվում էր թթվուտով, ապա երեսից ծածկվում արհեստական ժանգի բարակ շերտով։

Լոնդոնում բրիտանական գործակալները բռնում և հետազոտում են միքանի նոտաներ, որոնք հասցեագրված էին Ցյուրիխում բնակվող մի կասկածելի անձնավորության։ Դրանք երկու երգեր էին, մեկը «Սիրո սանդուխք», մյուսը՝ «Դուբլինի ճանապարհին» անունով, իսկ ուղարկողի հասցեն հետևյալն էր՝ «Ջեկ Կամմինգս, Պալաս Թատրոն»։ Այդպիսի անունով մարդ բնավ գոյություն չու-

ներ, բայց վոր հակահետախուզությունը գործ ուներ հակառակորդի գործակալի հետ, այդ պարզվեց, յերբ, քիմիապես հայտաբերելուց հետո, նոտայի գծերի արանքում յերևան յեկավ մի զեկույց՝ Անգլիայում կատարված հետազոտությունների վերաբերյալ։ Հետագայում հաստատվեց, վոր «Կամմինգսի» իսկական անունը Կուրտենե դե Ռիսբախ ե։ Այդ մարդը բրիտանական հպատակություն ընդունած մի ավստրիացու վորդի եր, տաղանդավոր վոդևիլային դերասան, կոմեդիաների հեղինակ, ձեռնածու և տրյուկների վարպետ հեծանվորդ։ Պատերազմ հայտարարվելու ժամանակին նա հրավիրված եր գերմանական մյուզիկ-հոլլերը, վորտեղից փոխադրվում ե Ռուլեբենե. այնտեղ նրան համոզում են զբաղվել գործակալական հետախուզությամբ, թույլ են տալիս դուրս գալ Գերմանիայից և ճանապարհորդության մեկնել «առողջությունը վերականգնելու» համար։ Բայց շնորհիվ այն բանի, վոր նա իր զեկույցներն ուղարկում եր կասկածելի հասցեների ցանկում յեղած հասցեով, այդ ճանապարհորդությունները նրան հասցրին ցմահ բանտարկության։

Տեսնելով, վոր փոստային գրաքննությունն այդչափ վտանգավոր մի բան ե գաղտնի գրագրության համար, գերմանական հետախուզական կենտրոններն սկսում են Ֆրանսիայում գործող իրենց գործակալներին հրամաններ ուղարկել յերաժշտական կոդի միջոցով. յերգերի բառերը մնում եյին անփոփոխ, բայց նոտաներն ամեն անգամ փոխվում եյին։ «Ելզասի անմոռուկը» անունով յերգը ուղարկվում եր վորպես պարբերական հրատարակություն, և չնայած, վոր ոտարերկրյա մի յերաժշտական հրատարակչության կողմից ուղարկվում եյին այդ յերգի տասնյակ նոտաներ, յերկար ժամանակ վոչ-վոք անգամ չեր ել կասկածում, թե դա հետախուզական բյուլլետեն ե։ Բայց ֆրանսիական մի նավահանգստում ապրում եր մի կասկածելի անձնավորություն, վորի թղթակցությունը մանրազննին կերպով ստուգվում եր։ Ամեն շաբաթ նա այլ նոտաների հետ ստանում եր նաև «Ելզասի անմոռուկի» մի որինակ։ Այդ նոտաներն ուսումնասիրվում են և լու-

սանկարվում։ Պարզվում ե, վոր յերգի տեքստը միշտ նույնն ե մնում, իսկ յերաժշտությունը յուրաքանչյուր որինակի մեջ փոխված ե լինում։ Նոտաները հանձնում են վերծանող մասնագետի, վորը բաց ե անում գաղտնիքը։

Յերբեմն ոգտագործում եյին բացիկները։ Այդպիսի բացիկներն այնպես եյին պատրաստվում, վոր մեկ յերեսում սովորականի պես լինում եր հասցեյի ու նամակ գրելու տեղը, մյուս յերեսում՝ նկարը, իսկ նրանց արանքում ամենաբարակ թղթի մի թերթ՝ զեկույցով կամ քարտեզով։ Հարավային Ֆրանսիայում բնակվող գերմանական մի գործակալ իր զեկույցները գրելիս ե յեղել հատուկ թանաքով, ամենաբարակ փայլարի վրա, իսկ այնուհետև այդ թափանցիկ շերտը վարպետորեն փակցնում եր պենսնեյի ապակիներին։ Բարակ թերթի փոքրիկ կտորների վրա զեկույցներ գրելը սովորական բան եր։ Շատ հետախույզներ այդպիսի փաստաթղթերը պահում եյին իրենց ծխամորճի մեջ՝ ծխախոտի տակ, այսպիսով, վտանգի դեպքում գործակալը միշտ կարող եր կպցնել ծխամորճն ու վոչնչացնել վտանգավոր փաստաթուղթը։ Բայց յերբ հրապարակ յեկավ նոր մեթոդը՝ պենսնեյի ապակու վրա փայլար փակցնելը, շատ գործակալներ հրաժարվեցին ծխամորճից։

Գաղտնի գործակալները խիզախորեն վտանգի յեն յենթարկում իրենց՝ վոգևորված գործելիս. նրանց հակառակորդները—հակահետախուզության գործակալները—նույնպես գործում են վոգևորված, իսկ յերբեմն, ամիսներով, համբերությամբ աշխատում են, վոչ մի գործ չներկայացնելով ռազմական դատարանին։

Համաշխարհային պատերազմի ժամանակ Փարիզում ապրում եր մի կասկածելի մարդ, վորը յերկար շաբաթներ իրեն վարկաբեկող վորևե քայլ չեր կատարում։ Բայց վերջիվերջո գտնվում ե մի իր, վորը բաց ե անում կծիկի թելը։ Այդ մարդն ապրում եր մի համեստ հյուրանոցում. նրա սենյակում բազմիցս կատարված խուզարկությունների շնորհիվ նկատվում ե, վոր նա ունի միքանի թաշկինակ, վորոնք յերբեք չի տալիս լվանալու լվացարարին։

Այդ թանկարժեք թաշկինակները ներծծված եյին քիմիական մի նոր նյութով, որը մինչ այդ հայտնի չեր դաշնակիցներին։ Պետք յեղավ մոտ յերկու ամիս՝ հայտաբերելու համար ֆրանսիական գործակալի կողմից վերցված և բոլորովին նույնանման ուրիշ թաշկինակով փոխանակված այդ թաշկինակի մեջ պարունակվող լուծույթի փոքրիկ դոզան։ Զարմանալի չե, որ այդ մարդը կարողանում եր մոլորության մեջ գցել գաղտնի հետախուզության գործակալներին։ Հակահետախուզության գործակալների ու քիմիկոսների արտասովոր համբերատարության շնորհիվ նոր թանաքը վերջապես հայտաբերվում ե, որից հետո այդ գործակալն իր թաշկինակներով, ինչպես նաև շատ ուրիշ գործակալներ հանկարծակիի յեն բերվում և բռնվում հանցանքի վրա։

Կյոլնում յեղած գերմանական մի մեծ ռադիոկայան պարբերաբար բռնվում եր տենդի ինչ-որ նոպայով և յեթերն եր ուղարկում բառերի անիմաստ հոսանքներ, որոնք արտասանվում եյին սարսափելի արագությամբ։ Յենթադրվում եր, որ այդ արվում ե դաշնակիցների ռադիոկայանների աշխատանքը խանգարելու համար։ Ինչպես և մյուս բոլոր գերմանական ռադիոհաղորդումները, այդ խառնաշփոթ հաղորդումները ևս գրի յեն առնվում ֆոնոգրաֆի միջոցով։ Մի անգամ մի սպա դնում ե այդ կայանի վալիկը և փորձում այդ հաղորդման մեջ գտնել կոդի նմանվող որևե բան։ Մինչդեռ նա լսում եր, ֆոնոգրաֆն անսպասելի կերպով դանդաղեցնում ե ընթացքը, և այդ ժամանակ ել հենց նա վերջապես անում ե հարկավոր հայտնությունը։ Հաղորդման արագությունը քողարկում եր այն հատուկ կոդը, որն օգտագործվելիս ե յեղել Հարավային ու Կենտրոնական Ամերիկայում յեղած գերմանական գործակալներին հրահանգներ ուղարկելու համար։ Այդ սրամիտ հնարքը հայտնի յե դառնում միայն ֆոնոգրաֆի ընթացքի պատահաբար դանդաղելու շնորհիվ։

Հիշենք բրիտանական զինվոր-նկարչի նշանավոր պատմությունը. այդ զինվորը մի անգամ Ֆլանդրիայում մի հողմաղացի ուրվագիծն անելիս, նկատում ե, որ հող-

մաղացը պտտվում ե քամուն հակառակ։ Պակաս հռչակա-
վոր չե նաև մայր ու աղջիկ հետախույզների օրինակը,
որոնք յերկար տարիներ ապրելիս են յեղել մի կարևոր
ստրատեգիական կետում, Ամյենից ոչ հեռու։ Այդ յերկու
կանայքն ել ծագումով գերմանուհիներ եյին և գերմանա-
կան գործակալներ, որոնք Ֆրանսիա եյին ուղարկված
1901 թվականին։ Նրանք, անտարակույս, կարող եյին
տեսնել շատ բան, որն անհասանելի յեր գերմանական
հետախույզների համար 75 մղոն հեռավորության վրայից։
Նրանք հնարում են գերմանական սավառնորդներին ազ-
դանշաններ տալու հետևյալ մեթոդը—բակում պարանի
վրա լվացք եյին կախում չորանալու համար։ Բայց այդ
կանայք շատ շուտով կասկած են առաջացնում։ Ֆրանսիա-
կան հակահետախուզության մի գործակալ, որը հսկում
եր նրանց, չեր կարող համաձայնվել այն մտքի հետ, որ
նրանք յերկու հոգով կարող են այնքան շատ սպիտակե-
ղեն կեղտոտել։ Նա, բացի դրանից, նկատում ե, որ նրանք
լվացք եյին կախում նաև վատ յեղանակին, բատվորում
շորերը համարյա բոլորն ել վառ գույներ ունեյին։ Ֆրան-
սիայի կանայք, որը 900 հազար կյանք եր կորցրել, սո-
վորաբար ման եյին գալիս սգի սև հագուստով, կամ թե
հագնում եյին մուգ գույնի շորեր, տուժածներին վիրա-
վորած չլինելու համար։ Կասկածներն իրականություն
դարձան. գերմանական սավառնակները թռչում եյին շատ
ցածր, և սավառնորդները մեծ հետաքրքրություն եյին
ցուցաբերում դեպի մշտապես լվացվող կարմիր, կանաչ
ու նարնջագույն հագուստները։ Շուտով այդ յերկու կին-
գործակալները, որոնք 1901 թվականից սպասում եյին
պատերազմին, ստիպված յեղան նրան սպասել բանտի կա-
մերներում։

Համաշխարհային պատերազմի վերջին ամիսների ընթաց-
քում տարբեր գաղտնի հետախուզություններ հանդիպեցին
սիգնալիզացիայի նոր մեթոդների, այսինքն՝ ինֆրա-կար-
միր և ուլտրա-մանուշակագույն ճառագայթներով տրված
ազդանշանների։ Ինֆրա-կարմիր ճառագայթները լույսի
յերկար ալիքներ են, որոնք լույսի զգացում չեն առաջաց-

նում ու կարող են ուղարկվել հատուկ ազդանշանային լամպով և մնալ աննկատելի բոլորի համար, բացի հատուկ էկրան ունեցող և դաշտային հեռադիտակով զինված դիտողից։ Ամենաբարենպաստ մթնոլորտային պայմաններում, արևի պայծառ լույսի ժամանակ, այդ ազդանշանները հաղորդվում էին ութը մղոն հեռավորության վրա։ Այժմ մենք տեսնում ենք, թե կապի ասպարեզում ինչպիսի հաղթանակներ է ձեռք բերում հետախուզությունը և ինչպիսի կախարդական միջոցներ ունի նա իր տրամադրության տակ՝ ապագա կոնֆլիկտների համար։

Հետախույզը փորձում է իր աշխատանքի մեջ օգտագործել ժամանակակից տեխնիկայի բոլոր նվաճումները։ Մենք չենք կարող գուշակել կապի այն մեթոդները, որոնցով կօգտվեն հետախույզներն ապագայում, բայց կարծում ենք, որ այդ մեթոդներն իրենց գիտական հնարամտության տեսակետից, այժմ մեզ կթվան ֆանտաստիկ։

ՀԱԿԱՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ Է ՀԵՏԱԽՈՒՅԶՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Ինչպես մենք արդեն տեսանք, ռազմական հետախուզությունը կրում էր որոշ չափով սիրողական բնույթ և սպորտի նման ինչ-որ մի բան էր սպաների համար այնքան ժամանակ, մինչև որ Ֆրիդրիխ Մեծն այն յեզրակացության յեկավ, որ ավելի լավ է այդ աշխատանքի համար վարձել ու պատրաստել գյուղացիներին, քան թե ռիսկի յենթարկել գյուղացու զգեստ հագած գեներալների ու մարշալների կյանքը։ Զինվոր արքան առաջինը հետախուզությանը տվեց խստորեն մտածված սիստեմի բնույթ։ Քառասուն տարի դրանից հետո, յերկու հնարամիտ ֆրանսիացիներ — Ռեալը և Դեմարեն, Ֆուշեյի — Նապոլեոնի տաղանդավոր, բայց անկայուն ոստիկանական մինիստրի — ավագ լեյտենանտները, պատահաբար ստեղծեցին հետախույզների նկատմամբ հսկողություն ունենալու ժամանակակից սիստեմը։

Հակահետախուզությունը հակադրվում է հետախուզությանը, իսկ հետախույզն ու հակահետախույզն իրենցից ներկայացնում են հարձակվող և պաշտպանվող։ Հասարակ կլասիֆիկացիան հետախուզությունը համեմատում է հանցավոր գործունեության հետ, իսկ հակահետախուզությունը — ոճրագործության դեմ կազմակերպված պաշտպանության հետ։ Բայց դերերի այդպիսի բաշխումը ոչ միայն ճիշտ չի լուսաբանում շատ հետախույզների աշխատանքը, որոնց սխրագործությունների մասին մենք խոսեցինք վերևում, այլև հակահետախույզի գործունեությունը սահմանափակում է տարրական առաջադրանքներով։ Գաղտնի ծառայության մեջ, ինչպես և պատերազմի ժամանակ, ակտիվ հարձակումը հաճախ լավագույն պաշտպանությունն է հանդիսանում։ Հակահետախույզն օգտվում է ամեն տեսակ զենքից ու բոլոր հնարքներից, որոնք օգտագործվում են հետախույզների կողմից։ Հակահետախուզությունը հետախուզության ամենահմուտ ձևն է հանդիսանում. այդ — հսկողություն է իրենց՝ հետախույզների նկատմամբ, ըստորում հակահետախույզը նույնպես պետք է հրաժարվի ամեն տեսակ շաղակրատությունից և պետք է գործի սուսուփուս։

Լրտեսության վերաբերյալ մի սենսացիոն գործ, որը 1910 թվականին ահագին աղմուկ բարձրացրեց ամբողջ Յեվրոպայում, իրականում հանդիսանում էր հակահետախուզության մեթոդների ցուցադրումը։ Բերտրամ Ստյուարտը պրոֆեսիոնալ հետախույզ էր և բրիտանական կանոնավոր բանակի ընդունակ սպա։ Նրան առաջարկում են տեղեկություններ ձեռք բերել գերմանական ամրությունների և ռազմական դրության մասին՝ կղզիներում ու մայր ցամաքում, Եմդենից մինչև Կուկսհաֆեն — գերմանական ծովափի այդ միակ մասը, որն անհանգստացնում էր Ուայտհոլլին։ Ստյուարտին հրամայում են մնալ Ֆրիսլանդիայում, տեղեկություններ հավաքել հոլանդական կողմից և անձամբ դիտել այն ամենը, ինչ հնարավոր էր առանց Գերմանիա թափանցելու. բացի դրանից, նրան թույլատրում են առատորեն վարձատրել բոլոր տեղեկատուներին

վորոնք արժեքավոր տեղեկություններ կհաղորդեն։ Ստյուարտը փառասեր, յեռանդուն մարդ եր և, վորպես պրոֆեսիոնալ հետախույզ, չեր բավարարվում հետախուզության օբյեկտի վայրից հեռու գտնվող յերկրորդ անձնավորությունների միջոցով ստացվող ինֆորմացիաներով։ Նա գերազանցում ե իր լիազորությունները, անցնում սահմանը և հանդիպում ինչ-վոր մի մարդու, վորը նրան թվում ե արժեքավոր տեղեկություններ ունեցող վստահելի մարդ։ Նրանք գնում են Բրեմեն, ուր պարզվում ե, վոր այդ մարդը գերմանական հակահետախուզության գործակալ ե։ Բրեմենում Ստյուարտին ձերբակալում են և դատապարտում վեց տարվա բանտարկության։ Գերմանական մամուլն այդ միջադեպը մեկնաբանում ե վորպես բրիտանական ագրեսիայի ահեղ մի ակտ։ Այդ դատավարության շնորհիվ նույն թվականին հաջողվում ե ստիպել ռեյխստագին սպառազինման համար հատկացնելու զգալիորեն ավելի մեծ գումար։ Անգլիական թագավորի Բեռլին այցելելու առթիվ գերմանական կայսրը ներում ե Ստյուարտին։

Ուրիշ պայմաններում, և հատկապես վերջին պատերազմի ժամանակ, հակահետախույզին անհրաժեշտ եր լինում մտնել նաև թշնամու տերիտորիան։ Յերբեմն նա հետապնդում եր հանկարծակի սահմանը սողոսկող հետախույզին։ Ուրիշ դեպքերում նա այս վտանգավոր քայլն եր անում, վորպեսզի ձեռք բերի այնպիսի ապացույցներ, վորոնք հնարավորություն տային գտնելու հետքերը հակառակորդի այն գործակալների, վորոնց գործունեությունը նա մասամբ բաց ե արել։ Հենց նույն պահին, յերբ հակահետախույզը բաժանվում ե մայրենի հողից՝ նման առաջադրանք կատարելու համար նա կարող ե բռնվել վորպես հետախույզ։

Այսպիսով, համաշխարհային պատերազմի ընթացքում, կռվող արևմտյան պետությունները հենց ուղղակի ֆանտաստիկ գործունեություն եյին ցուցաբերում Բեռնում, Ցյուրիխում, Ժնևում և Շվեյցարիայի համարյա մնացյալ բոլոր մասերում։ Չնայած, վոր շվեյցարական բանակը և վոստիկանությունը պատերազմի սկզբում իր մեծ մասով

Գերմանիայի կողմն եյին, շվեյցարացիները հազիվ յերբեմն բռնում եյին ֆրանսիական, բրիտանական և ամերիկյան գործակալներին, թեև իրազեկ եյին նրանց գործունեության մասին։ Սակայն գերմանական գործակալները, ինչպես, օրինակ Կորը, ֆոն-Սոմմերսը, Կենիգերը, Մեյերը և շատ ուրիշները, ձերբակալվել և բանտարկության եյին դատապարտվել։ Այսպես եր լինում այն պատճառով, վոր դաշնակիցների գործակալներին հաջողվում եր ձեռք բերել և ներկայացնել շվեյցարական իշխանություններին փաստացի ապացույցներ այն մասին, վոր գերմանական հետախույզները Շվեյցարիայի անկախության դեմ ևս վոտնձգություններ են անում։ Իսկ գերմանացիներին վոչ մի կերպ չեր հաջողվում համոզել շվեյցարացիներին, վոր բրիտանական, ֆրանսիական, իտալական կամ ամերիկյան գործակալներն իրոք պարապում եյին վոչ թե հակահետախուզությամբ, այլ ալպյան փոքրիկ պետության չեզոքության դեմ վոտնձգություններ անելով։

Հակահետախուզության մեջ աշխատող սպան հազիվ ե պատահում, վոր վայելի այն առավելությունները, վոր վայելում ե հետախույզը, և ի լրումն այս բոլորի նա պետք ե պատրաստ լինի դիմագրավելու թակարդն ընկած գործակալի կատաղությանը։ Բացահայտված ու փակուղու մեջ ընկած գործակալը հասկանում ե, վոր հարցը նրա կյանքի մասին ե, ու նա, յեթե կարող ե, դիմում ե դավաճանության, սպանության, ստի և այլն։ Վոչ թիկունքից դանակ հասցնելը, վոչ կաշառքը և վոչ մի վոճիր չեն մեծացնի նրա պատիժը, բայց դրա փոխարեն կարող են փրկել նրան։

Հակահետախուզության մեջ ծառայության մտնողը պետք ե ունենա մի շարք հատկություններ՝ համեստություն, համարձակություն, համբերություն, սուր միտք, կշռադատություն, հնարագիտություն, յերևակայություն, ինտուիցիա, անխոնջ աշխատունակություն, ազնվություն և լեզուներ սովորելու ընդունակություն։ Յուրաքանչյուր հակահետախույզ պետք ե զգաստ լինի նմանապես հանդեպ այն ընկերների, վորոնք նույնպիսի աշխատանք են տանում։

Այս անհրաժեշտ է այն պատճառով, վոր հետախույզները, սողոսկելով հակառակորդի գաղտնի ծառայության մեջ, միշտ աչք են տնկում հակահետախույզ դառնալու։

Տեսնենք՝ Եվերտ ազգանունով մի անգլիացի ինչպես սողոսկեց գերմանական հակահետախուզության աշխատանքի մեջ։ Պատերազմի ժամանակ հակահետախուզության բրիտանական, ֆրանսիական և ուրիշ գործակալներ ծանոթանում եյին հետախուզական դպրոցների հետ Շարլոտենբուրգում, Վեզելում, Անտվերպենում, Բերնում և Ֆրայբուրգում, դիմելով այնտեղ վորպես չեզոք յերկրների այնպիսի քաղաքացիներ, վորոնք պատրաստ են իրենց ծառայությունը վաճառել Գերմանիային։ Սակայն շատ հազիվ եր պատահում, վոր բացի գերմանացիներից վորևե մեկը կարողանար ծառայության մտնել գերմանական հակահետախուզության մեջ։ Եվերտին պարզապես բախտը հաջողեց։ Նա ծանոթ եր Գերմանիային և ազատ խոսում եր գերմաներեն։ Կարողանալով թափանցել գերմանական ռազմական հետախուզության մեջ, նա կատարում եր նաև հակահետախուզության բնագավառի առաջադրանքները հոլանդական սահմանագծի յերկարությամբ և մերձհռենոսյան մարզում։

Գերմանական հետախուզության ղեկավարները տեղեկություն ստացան բրիտանական ինչ-վոր խիզախ գործակալի մասին, վորը հենց նրանց քթի տակից, Եսսենի արվարձաններում, ձեռք եր բերում խնամքով ծածուկ պահված ինֆորմացիաներ. դա Եվերտն եր։ Բայց վորովհետև նա վայելում եր յեռանդուն հակահետախույզի համբավ, ապա նրան հրամայեցին հետախուզել անգլիացուն։ Այժմ այդ թվում է ծիծաղելի, բայց նրա համար դա շատ վտանգավոր բան եր այն ժամանակ։ Եվերտը կարողացավ հաղթահարել բոլոր խոչընդոտները և չտապալվեց։ Այս մասին մինչև որս ել վոչինչ չեյին իմանա, յեթե նա խաղաղություն կնքվելուց հետո ինքը չպատմեր իր աշխատանքի մասին։

Հակահետախուզությամբ, վորպես ոժանդակ գործ, զբաղվում եր նաև Շտիբերը։ Ժամանակ առ ժամանակ նրա

գործակալները հարձակվում եյին հակառակորդի վորևե միայնակ դժբախտ գործակալի վրա։ Բայց Շտիբերի մասին պետք է արդարությունն ասել — նա ապացուցեց, վոր հակահետախուզությունն իր գործողությունների մեջ պետք է լինի անողոք և զգույշ։ Նա պնդում եր, վոր պատերազմի ժամանակ հետախույզը պետք է իրավունք ունենա սպանելու հակառակորդի գործակալին այնպես, ինչպես զինվորը կարող է կրակել հակառակորդի բանակի զինվորի վրա, յեթե նա չի հանձնվում։

Հակառակորդի գործակալը, պնդում եր նա, պետք է գնդակահարվի, ինչպես հակառակորդը կռվի դաշտում։ Բայց յեթե նա սպանված չե, այլ վիրավորված ու գերի վերցված, նա պետք է դատվի և յենթարկվի մահապատժի։ Թող նա գնդակահարվի այն բանի համար, վոր «հարձակվել է վիրավորներ փոխադրող գնացքի վրա». «կրակել է» գումակի կամ գեներալի ու նրա ադյուտանտների վրա։ Կարճ ասած մահապատժի հիմքը պետք է լիներ այնպիսին, վոր մահապատժի յենթարկվողը համակրանք չառաջացներ և հերոսի համբավ չստանար։ Շտիբերը գործնականում իրականացնում եր իր համոզմունքը — պատերազմը կշահի գաղտնի հետախուզություններից այն, վորն ամենից ավելի անողոք է։

Բայց հակահետախուզության իսկական արվեստը (կամ գիտությունը), ստեղծվել է Ֆրանսիայում։ Նապոլեոնի գաղտնի վոստիկանության գործակալները — Ռեալը և Դեմարեն հետախուզությունը դարձրին բավականաչափ անողոք, բայց միևնույն ժամանակ այն կրում եր խստորեն պաշտպանողական բնույթ և այդ, անտարակույս, անհրաժեշտ եր բազմաթիվ ոտարերկրյա գործակալներով վողողված յերկրի համար։ Բոնապարտի իշխանությունը միշտ ել յեղել է զինվորական իշխանություն։ Նրա կայսրության հիմքերը դրված եյին իրենց նախորդող ռեժիմների ծխացող ավերակների վրա։ Հեղափոխականները դիտում եյին նրան և ատում վորպես միապետի — իր հայրենիքը ճնշողի, իսկ ռոյալիստները, եմիգրանտները, յերկրից վռնդված արիստոկրատներն ու բոլոր տեսակի շառլատան-

ները դավադրություններ եյին կազմակերպում նրա դեմ,
լրտեսում եյին նրան վորպես ռազմական ուզուրպատորի։
Ինչպես մենք արդեն տեսանք, լավորեն կազմակերպ-
ված, համարձակ ու խելացի հետախուզությունը պահան-
ջում է իսկական հակահետախուզություն ստեղծել։

ՀԱԿԱՀԵՏԱԽՈՒՅԶՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Համաշխարհային պատերազմի ժամանակ հետախույզ-
ների գործունեյությունը դարձավ միջազգային պրոբլեմ,
վորը հետաքրքրում եր բոլոր պատերազմող և համարյա
բոլոր չեզոք պետություններին, ստիպելով նրանց ձեռք
առնել բոլոր միջոցները, իսկական հակահետախուզություն
կազմակերպելու համար։ 1916 թվականին, ինչպես և Նա-
պոլեոնի օրերին, հետախուզությունը կյանքի կոչեց հակա-
հետախուզությանը։ Շուտով հետախույզների սենսասիոն
նվաճումները դարձան հազվադեպ յերևույթ։ Հակահետա-
խուզությունն օգտագործում եր կազմակերպման ասպա-
րեզում ունեցած իր բոլոր առավելությունները, նա իր
կողմն եր գրավում բանիմաց մարդկանց և գործադրում
եր հարձակողական տակտիկա։

Ռուսաստանում հարկ եր լինում գործ ունենալ աչքի
ընկնող դավաճանների հետ, վորոնց կաշառել եր հակառա-
կորդը և վորոնք կարողացել եյին ճարպիկությամբ խրա-
մատվել. ու թեև հակահետախուզությանը չհաջողվեց
հայտաբերել դրանց բոլորին, այնուամենայնիվ շատերը
դատի յենթարկվեցին։ Ավստրիա-Հունգարիային հարկ եր
լինում հսկել նրա կազմի մեջ մտնող բազմաթիվ ազգու-
թյուններին։

Ֆրանսիայում բրիտանական և ամերիկյան եքսպե-
դիցիոն ուժերին հարկ եր լինում թեև ոտար, բայց վոչ
թշնամի բնակչության մեջ հակահետախուզության սիս-
տեմի իմպրովիզացիա անել։ Բոլոր ռազմական ձեռնար-
կումները պետք է պահպանության ներքո լինեյին ոտար
յերկրում, վորը հաճախ նույն դժվարություններն եր ներ-

կայացնում, ինչ վոր և հակառակորդի տերիտորիան։ Բալ-
կաններում և Պաղեստինում անգլիական ու ֆրանսիական
գաղտնի ծառայության պետերը նույն դրության մեջ
ընկան։ Զարմանալի չե, վոր ռազմական գործողություն-
ների ընդարձակ յեվրոպական թատերաբեմում հակահետա-
խուզությունը վերածվեց մի հսկայական ուժի, վորը գե-
րազանցեց նախկին պատերազմների գործակալների և ռազ-
մական վոստիկանության նվաճումները։

Այն բոլոր հակահետախուզական կազմակերպություն-
ների մեջ, վորոնք կյանքի կոչվեցին համաշխարհային պա-
տերազմի ժամանակ, բելգիացիների ստեղծած կազմակեր-
պությունն ամենից ավելի կատարելագործվածն եր և պատ-
մության մեջ իր նմանը չունեցավ։ Այդ կազմակերպու-
թյունն ստեղծվել եր անպաշտոն կերպով, հանկարծակի,
և այնուամենայնիվ նա Բելգիայի օկուպացիայի ամբողջ
ժամանակամիջոցում յեղավ միանգամայն կենսունակ
կազմակերպություն։ Գերմանական բանակը, վորը հիա-
նալի կազմակերպված եր ու պատրաստված, վորը չեր վա-
խենում ճակատային գրոհից, Լիեժից մինչև Անտվերպեն
ունեցած հաղթական արշավից հետո, վորը տևեց 9 շա-
բաթից մի փոքր ավելի, ամրացավ տեղում, անտանելի
ճնշում գործադրելով յոթը միլիոնանոց ժողովրդի վրա։
Զորակոչային տարիքի հասած յերիտասարդ բելգիացինե-
րը փախչում եյին Բելգիայից՝ Ալբերտ թագավորի բանա-
կի մնացորդներին միանալու համար, վորն այդ ժամանակ
գտնվում եր դաշնակիցների ճակատի ամենաձախ թևում։
Այդ, արտաքուստ նվաճված յերկրում թաքնված եյին
բազմաթիվ վիրավոր անգլիական ու ֆրանսիական զին-
վորներ, վորոնց ֆրանսիացիները Ֆրանսիա նահանջելու
ժամանակ հնարավորություն չեյին ունեցել տանելու
իրենց հետ։ Այդ վիրավորները չեյին ցանկանում գերի
հանձնվել և ահա պնդապես Ջիրսի ոգնությամբ ու նրա
խորհրդով միսս Կավելը, դոկտոր Բուլլը, իշխան և իշխա-
նուհի դե-Կրուաները կազմակերպում են նրանց փոխա-
դրությունը՝ սահմանի վրայով։ Այդ աշխատանքը հակա-
սում եր նվաճողի ռազմական օրենքներին։ Վախենալով

գերմանական գաղտնի ծառայությունից — բելգիացիները կազմակերպում են հակահետախուզություն, որը շատ դեպքերում ժամանակին տեղեկություններ էր ստանում պատրաստվող հարձակումների ու հետապնդումների մասին և շատ անգամ փրկել է մարդկանց կյանքը։

Բելգիայում գտնվող գերմանական հետախուզական ծառայությունը միքանի տարվա ընթացքում գործում էր Կուեբի և Տիգենի ղեկավարությամբ. Նա ուներ այնպիսի գործակալներ, որոնք պակաս չափով հայրենասիրաբար չէին տրամադրված, քան բելգիացիները։ Սակայն նվաճողի դրությունը պարտվածի դրությունից տարբերվում է նրանով, որ վերջինս գտնվում է իր սեփական տերիտորիայում և իր տրամադրության տակն ունի հազարավոր մարդիկ, որոնք ձգտում են վրեժ լուծել հակառակորդից։ Բելգիական գավառներն առավելագույն ճարպիկություն են ցուցաբերում, գերազանցելով իր կատարելագործվածությամբ հռչակ ձեռք բերած գերմանական սիստեմից։ Գաղթականներին օգնություն ցույց տվող կոմիտեյի շուրջը կազմակերպվում են միքանի խմբեր, որոնք գործում էին նույն այդ ուղղությամբ։ Սկզբում բոլոր բելգիացիները դաշնակիցների ծայրահեղ ձախ թևն էին ուղևորվում անտառների միջով, բայց 1914 թվականի հոկտեմբերից հետո այդ ճանապարհը փակվեց, ռազմաճակատի գիծը շարունակվեց մինչև ծովը, և բելգիացիները ստիպված յեղան դեպի չեզոք Հոլանդիան ուղևորվել Բրյուսելի վրայով։ Այդ խմբերի մարդիկ վերին աստիճանի յեռանդուն էին ու հնարամիտ։ Չորս ամսվա ընթացքում նրանք սահմանն անց են կացնում յերեք հազար հոգի, իսկ մյուսները նույն այդ ժամանակամիջոցում ավելի յերկար ու ավելի վտանգավոր ճանապարհով փոխադրել էին ութը հարյուր հոգի։

1922 թ. մարտին Արման Ժաննի դատավարության ժամանակ Մոնսում առաջին անգամն էր, որ յերևան յեկավ բելգիական հակահետախուզության կատարելությունը։ Ժաննը, որ տեղեկատու էր, շատ անխոհեմաբար պարծենում էր, որ ինքը մատնել է Եդիտ Կավելին և

մասնակցել է յեղել հարյուր քսան և վեց հոգի բելգիացիների, ֆրանսիացիների և անգլիացիների դատապարտության գործին՝ կատարված գերմանական ռազմական դատարանի ձեռքով։ Խաղաղությունը կնքվելուց հետո նա անհայտացավ այն տնից, ուր ապրում էր Լիեժում, և միքանի շաբաթ անց հայտաբերվեց Մոնսում, ուր նա ծառայում էր մի փաստաբանի գրասենյակում, որին գերմանացիները տասնևհինգ տարվա տաժանակիր աշխատանքի էին դատապարտել։ Պատմում էին, որ Ժաննը մատնել է մի մարդու, որ իր բարերարն է յեղել։ Գերմանացիների նահանջից հետո, Համբրեյում գտնված դիվանական գործերը մերկացրին նրա ով լինելը։ Բրյուսելի Բեռլեմոն փողոցի հետախուզական կենտրոնի գերմանական հետախուզության արխիվը նույնպես հաստատեց այս մարդու դավաճանական գործունեությունը։ Ժաննը, որ կասկած չուներ իր դեմ գոյություն ունեցող կորստաբեր մերկացումների մասին, սկսեց պաշտպանվել, պահանջելով վկաներ և մերժելով իր դեմ յեղած բոլոր մեղադրանքները։ Իր ճզճզոցով և աներես ընթացքով նա դատարանում ներկա յեղողներին բոլորին զինեց իր դեմ։

Ապա հանդես յեկավ մի ջենտլմեն, և մեղադրյալը միանգամայն կործանվեց։ Դա Բրյուսելի դատավոր Լակրուան էր։ Սա իր հայտարարություններով և համաշխարհային պատերազմում տեղի ունեցած դեպքերի նկարագրությամբ սոսկում առաջ բերեց Ժաննի մեջ։ «Որտեղից հայտնի յե ձեզ այս բոլորը»,—հարցնում էր մեղադրյալը։ Լակրուան ամեն անգամ պատասխանում էր. «Ես հո ձեր կողմն էի»։ Ժաննի գործը վարող Ցիլիեն փաստաբանի հետ միասին, Լակրուան պատերազմի ժամանակ բելգիական հակահետախուզության գլուխն էր ու այժմ է այդ մասին հաղորդում, որպեսզի ամենքի համար պարզ լինի այն դրությունը, որի մեջ գտնվում է նա դատարանում։ Լակրուան ու Ցիլիենը գիտեյին հակառակորդի բազմաթիվ գաղտնիքները և այժմ, փաստացի մերկացումներով, կարող էին ապացուցել Ժաննի հանցանքները։ Դատարանում ներկա յեղած թղթակիցներից մեկի

ասելով, Լակրուայի յելույթից հետո «պաշտպանը՝ ակտիվ մասնակցություն չուներ դատավարության մեջ»։ Ժաննը դատապարտվեց և հրապարակական մահապատիժ ստացավ։

Լոնդոնի վարսավիր Եվանսի և նրա թղթակիցների ձերբակալությունը, ինչպես մենք վերևում տեսանք, այնպիսի հարված հասցրեց Մեծ Բրիտանիայում գործող գերմանական հետախուզությանը, վորից Գերմանիան յերկար ժամանակ չեր կարողանում ուշքի գալ։ Գերմանական հակահետախուզությունն իր հերթին կարողացավ ֆրանսիական շտաբին զրկել շատ ստրատեգիական կետերում ունեցած նրա գործակալներից։ Գերմանացիներն սպասում եյին 1915 թվականի վաղ աշնանից, մինչև 1916 թվականի հունվարը։ Նրանք հետևում եյին կոմունիկացիոն գծերի յերկարությամբ և յերկաթուղային հանգույցների մոտ գործող վաթսունից ավելի ֆրանսիական հետախույզների։ Վերդենի վրա կազմակերպված մեծ հարձակման նախօրյակին այդ բոլոր հետախույզները ձերբակալվեցին գերմանացիների կողմից։

Այդ կործանիչ հարվածը ֆրանսիական հետախուզությանը վտանգավոր դրության մեջ դրեց, քանի վոր դաշնակիցների հրամանատարությանն անհրաժեշտ եր իմանալ, թե գերմանական հրամանատարությունն ինչպիսի պահեստի զորամասեր ե ուղարկում պատերազմական գործողությունների դաշտը և արդյոք միաժամանակ հարձակում չի նախապատրաստվում ռազմաճակատի վորևե այլ հատվածում։

Վաթսունից ավելի հետախույզների վոչնչացումը մեծ նվաճում եր գերմանական հակահետախուզության համար։ Համաշխարհային պատերազմի ամբողջ ընթացքում այդ նվաճումը յեղավ անգերազանցելի։ Պետք ե ճշմարտին ասել, վոր ֆրանսիական հետախուզության տապալումը կազմակերպված եր վոչ թե գերմանական գործակալների, այլ Ժաննի տիպի բելգիական ռենեգատների կողմից։ Գործելով Տրիերերի ուսմունքի համաձայն, Բրյուսելում և Անտվերպենում գործող գերմանական հետախուզության պետերն

ազատում եյին բանտերը, հակահետախույզներ վորոնելով մարտական գոտիների ու օկուպացիայի յենթարկված տերիտորիաների համար — Բելգիայի, Ֆրանսիայի հյուսիսային դեպարտամենտների, Լյուքսեմբուրգի, Էլզասի և Լոթարինգիայի համար։

Բալկաններում, Սալոնիկի ռազմաճակատում, ուր լրտեսությունն ու ինտրիգներն ավելի շատ եյին, քան թե կռիվը, ֆրանսիացիները և անգլիացիները հակահետախուզության համար օգտագործեցին ծովահենների մի շայկա, վորոնք Ժաննից վոչ նվազ սպառնալիք եյին ներկայացնում։ Յերկու հարյուր հոգուց բաղկացած այս հրոսակախմբի գլուխն եր մի յերիտասարդ անգլիացի սպա. նա մենակ պետք ե ղեկավարեր նրանց. Նրա վայելած իրավունքները համարյա անսահմանափակ եյին։ Աներկյուղ, մկանեղ այդ տղերքը, զինված ատրճանակներով, դանակներով և ահագին նրանիկներով (կորտիկներով), պատերազմի եյին գնում ամբողջ համայնքով, իրենց հետ վերցնելով կանանց, յերեխաներին ու ծերերին. Նրանք թափառում եյին գիշերները, սպանում եյին թշնամու զինվորներին և բռնում եյին բազմաթիվ հաղորդագրություններ։

Անկասկած ե, վոր Ֆրանսիայում թշնամի հետախույզների թիվը ավելի յեր, քան թե վորևե մի այլ յերկրում։

Անգլիացիները շուտով սերտ համագործակցություն հաստատեցին ֆրանսիական ժանդարմների, քաղաքացիական վոստիկանության, գաղտնի ծառայության գործակալների և եքսպեդիցիոն ուժերի սպաների միջև։ Հետագայում այս սիստեմը վորդեգրեցին բոլոր դաշնակիցները։ Յեթե անգլիացիները Ֆրանսիայում կասկած եյին ունենում մեկի վրա ռազմական բնույթ կրող հանցանքներում, ապա համարյա բոլոր դեպքերում նրանք իրազեկ եյին անում այդ մասին ֆրանսիական իշխանություններին։ Ֆրանսիական գաղտնի ծառայությունը պահպանում եր շվեյցարական, իտալական և իսպանական սահմանը, միջերկրածովյան նավահանգիստները, Փարիզը և ուրիշ կետեր, ուր ռազմական հանդերձանք եր պատրաստվում։ Անգլիացիները պահպանում եյին իրենց ծովային բազաները Լամանշում, մարտա-

կան գոտին Բելգիայից մինչև Ամյենի արվարձանները (ֆրանսիական բանակի հետ միանալու վայրը) և բավականաչափ ներքին տերիտորիա, որի մեջ մտնում են հանգստացող զորամասերի ճամբարները, հիվանդանոցները, հաղորդակցության գծերը և մատակարարման բազաները։ Այստեղ նրանք պահպանության պատասխանատվությունը վերցնում էին իրենց վրա, բայց քաղաքացիական բնակչությանը հսկելու համար իմաստուն կերպով օգտագործում էին ֆրանսիական ժանդարմերիան։

Ֆրանսիայում գտնվող ամերիկյան բանակն իր հակահետախուզությունն էր կազմակերպել բազաների, վարժական գոտիների, կոմունիկացիոն գծերի, (որոնք իրենց յերկարությամբ գերազանցում էին անգլիականից) և մարտական գոտիների նկատմամբ հսկողություն ունենալու համար։ Ամերիկան համաշխարհային պատերազմին մասնակցեց տասն և իննը ամիս և այդ ժամանակամիջոցում ոչ մի գերմանական գործակալ չկարողացավ քիչ թե շատ լուրջ հանձնարարություն կատարել ամերիկյան ճակատում։

Հակահետախուզության գլխավոր խնդիրն է՝ պաշտպանել շտաբները, հրամանատարներին և նրանց գաղտնիքները։ Փարիզն առավելագույն զգաստություն էր պահանջում նրանց կողմից, ում վստահվում էր պահպանել այն բազմաթիվ ռազմական միսիաներն ու հաստատությունները, որոնք ժամանակավորապես կամ մշտապես գտնվում էին այդ քաղաքում։ Ամեն որ այդ հիմնարկություններից յուրաքանչյուրը հիմնովին մաքրվում էր։ Թղթի և նույնիսկ ծծողականի կտորտանքները խնամքով հավաքվում էին և ոչնչացվում։ Ասում էին, որ յերբ Դելկասեն,—որը հրաժարեցվել էր 1905 թվականին, պատերազմ հայտարարելու վերաբերյալ կայզերի սպառնալիքի պատճառով,—արտաքին գործերի մինիստր էր, նա աշխատում էր չափից դուրս շատ և անչափ հոգնած լինելով, իր առանձնասենյակը հավաքելու գործը վստահել էր սպասավորին, որը զամբյուղ նետված բոլոր թղթերը պահում էր և ապա վաճառում օտարերկրյա գործակալներին։ Լոնդոնը համաշխարհային պատերազմի

շրջանում պակաս չափով էր մատչելի լրտեսների համար, քան թե Փարիզը, բայց այնուամենայնիվ, անգլիական գաղտնի հետախուզության պետերը տակսիով շրջագայելով փողոցները, ժամանակ առ ժամանակ տեղեկություններ էին ստանում իրենց գործակալներից։ Այդ նախազգուշությունն ուներ յեռակի նշանակություն․ նա գործակալին ազատում էր շտաբն այցելելու անհրաժեշտությունից, որտեղ նրան կարող էին նկատել մտնելու և դուրս գալու ժամանակ, լիովին ապահովվում էր խոսակցությունը որևէ մեկի կողմից լսվելու վտանգից և հասարակության ուշադրությունը չէր հրավիրում պետի ու գործակալի անձնավորության վրա, ինչպես այդ կարող էր տեղի ունենալ ճաշարանում կամ հյուրանոցում տեսակցելու ժամանակ։

Բոլոր յերկրներում ընդունված է, որ գաղտնի ծառայության ղեկավարներն ու պետերը պետք է հայտնի չլինեն իրենց ստորադրյալներից շատերին՝ ինչպես պատերազմի, այնպես և խաղաղ ժամանակ։ Յեթե պետերի անունները հայտնի չեն արտասահմանում, ապա նրանց կարելի չէ հետևել և լուսանկարել։ Իսկ այդ կարող է զգալի չափով նվազեցնել գաղտնի ծառայության ղեկավարի արժեքը։ Հակահետախուզությունը պետք է իր պետերին ազատի ամեն տեսակ ոչ ցանկալի ուշադրությունից, պահպանի նրանց տներն ու կյանքը, և միևնույն ժամանակ (թեև այդ արդեն հետախուզության բնագավառն է) նա պետք է տեղեկություններ իմանա մյուս յերկրների գաղտնի ծառայությունների ղեկավարների ու աչքի ընկնող հետախույզների մասին, ձեռք բերի նրանց լուսանկարները, ստույգ տեղեկություններ ունենա նրանց մասին։ Ֆրանսիացիները մեծ արդյունքների հասան գերմանական այնպիսի խոշոր գործակալների նկատմամբ հսկողություն սահմանելու շնորհիվ, ինչպիսիք էին Տիենը և Շտեյնհաուերը։ Ֆրանսիական հետախույզները պատերազմի ընթացքում սողոսկում էին նույնիսկ հետախույզների գերմանական դպրոցները և Բեռնի, Անտվերպենի ու Բեռլինի հետախուզական շտաբները։ Այնուհետև նրանք

արտասովոր հաջողություն ունեցան հակառակորդի այն գործակալներին ձերբակալելու ասպարեզում, վորոնց համար անհրաժեշտ եր իրենց հետախուզական սխրագործությունններն ավարտելու նպատակով միայն հաջողությամբ անցնել սահմանը։ Շվեյցարական սահմանը մի թակարդ եր, վորտեղ ամենից ավելի հաճախակի եյին վերջանում այդ գաղտնի թափանցումները։ Չորս տարվա ընթացքում այդ սահմանի վրա ձերբակալվեցին ավելի քան յերեք հարյուր մարդ, կամ Ֆրանսիայից դուրս գալու փորձի ժամանակ կամ Շվեյցարիա ժամանելուց կարճ ժամանակ հետո։ Ձերբակալվածներից բոլորը լրտեսներ չեյին, բայց նրանցից յուրաքանչյուրը կասկածելի անձնավորություն եր։ Յեթե այդքան մեծ թվով մարդկանց ներկալումը պահանջում եր մեծ ծախսեր, ապա, այնուամենայնիվ, այդ ծախսերն աննշան եյին այն վնասի համեմատությամբ, վոր կարող եյին հասցնել նրանցից վոմանք։

Բեռնի ճանապարհին ձերբակալված մի կնոջ մոտ հայտաբերվում են Լե-Կրեզո գործարանում պատրաստվող մի նոր տիպի թնդանոթի գծագրերը։ Այդ գծագրերն արված եյին նրա ներքևի շրջազգեստի վրա, անտեսանելի թանաքով, բայց շրջազգեստը չափազանց պինդ ոսլայված եր, վորպիսի հանգամանքը 1917 թվականին ուշադրություն հրավիրեց։ Մանրամասն հետազոտությունից հետո, վերջապես, ծածկագիրը հայտաբերվեց։ Մի «չեզոք» տուրիստի ձեռքից վերցված ե Փարիզի գլխավոր հակաոդային կառուցումների սխեմատիկ ուրվանկարը։ Այդ նկարը կատարված եր ամենաբարակ թղթի վրա, ամուր վոլորված ու դրված կապույտ մատիտի մեջ (մատիտներ նրա մոտ կային միքանի հատ), բայց վորովհետև անհրաժեշտ եր յեղել գրաֆիտի մեծ մասը հանել, դրա հետևանքով այդ մատիտը մյուսներից ավելի թեթև եր։ Հակահետախույզներն ստուգում են մատիտների քաշը, և լրտեսը ձերբակալվում ե։

Գերմանական գործակալ Հոլցմանի բացահայտման դեպքով հակահետախուզությունն ինքն իրեն գերազանցեց։

Հոլցմանը մի քանի ժամանակ գտնվում եր Ֆրանսիայում չդրսևորված։ Նա հրաման ստացավ տեսակցություն ունենալ մի ուրիշ գործակալի հետ, վորը, թվում եր, նույնպես անվտանգ դրության մեջ ե, ու նրա հետ ուղևորվել Շվեյցարիա՝ նոր հրահանգներ ստանալու համար։ Ֆրանսիական հակահետախույզներն իմացան յենթադրված տեսակցության մասին, ու նրանցից մեկն ստանձնեց Հոլցմանի դերը, հաջողեց ձեռք բերել այն հրահանգները, վորոնց մեջ շարադրված եյին Ֆրանսիայի հարավ-արևելքում գտնված հիդրոելեկտրական սարքավորումները պայթեցնելու մանրամասն պլանները։ Հոլցմանը և իր ընկերը բռնվեցին նույն պահին, յերբ նրանք փորձում եյին սողոսկել սահմանի մյուս կողմը՝ վորպես ֆրանսիական դասալիքներ։ Նրանց հաջողվեց ձեռք գցել այն պայթուցիկ նյութերը, վորոնք նախասահմանված եյին այդ պայթեցումների համար։ Այդ դեպքից հետո շվեյցարական կառավարությունն առաջարկեց գերմանական դավադիրներին անմիջապես հեռանալ Շվեյցարիայից և այլևս այնտեղ չվերադառնալ։

Ռուսաստանի հակահետախուզությունը հակառակորդի գործակալներին հայտաբերեց, թեև դավաճաններն ամեն կերպ խանգարում եյին նրա աշխատանքը։ Այդ դավաճաններից մեկն եր այնպիսի մի կարևոր անձնավորություն, ինչպես զինվորական մինիստրը։ Նույնիսկ նրանք, ում հայտնի չեն ռուսական տեմպերամենտը և կայսրության քաղաքական կառուցվածքը, կարող են պատկերացնել, թե ինչպիսի ջանք եր հարկավոր գործ դնել՝ Սուխոմլինովին դեպի կախաղանը տանելու համար։ Յեվ իսկապես դա այն աստիճան դժվար բան եր, վոր դատարանի վճիռը, նրան մահապատժի յենթարկելու մասին, այնպես ել մնաց անկատար։ Նույնիսկ Սուխոմլինովին իշխանությունից բանտի կամերան տանելը և ամբողջ դատավարությունը հակահետախուզության փայլուն նվաճումն եյին, բայց պետք ե ափսոսալ, վոր այդ բանը չկատարվեց ավելի շուտ։

Դատավարության ժամանակ Սուխոմլինովն առաջադրեց տարօրինակ մի արդարացում։ Նա ասաց, թե իր կինը յե-

բիտասարդ է և շռայլող, ուստի ինքը հարկադրված էր ընդունել այն առատ կաշառքները, որ առաջարկվում էին գերմանական էմիսարների կողմից։

Հայտնի յե, որ նախքան զինվորական մինիստր դառնալը, Սուխոմլինովը չափազանց ընդունակ սպա չէր։ Նրան զինվորական մինիստր նշանակելը Ռուսաստանի զինվորական շրջաններում ընդունվեց բարյացակամորեն։ Երբ Սուխոմլինովը Կիևի զինվորական շրջանի հրամանատարն էր, այնտեղ նա հանդիպում է մի ուսուցչի կնոջ և որոշում է ամուսնանալ նրա հետ։ Ապահարզանի համար ձևական առիթ ստեղծելու նպատակով, նրա նախկին ամուսնուն արձակուրդ են տալիս և թույլատրում են մեկնել արտասահման։

Տիկին Սուխոմլինովան դառնում է կարյերիստի պաշտելի կինը։ Սուխոմլինովը յերջանիկ էր նրա հետ և ուշադրություն չէր դարձնում հասարակական կարծիքի վրա։ Նա ամեն բանի մեջ զիջում էր կնոջը, իսկ վերջինս հաճախ ուղևորվում էր արտասահման։ Վերժբոլովում, Գերմանիա տանող գլխավոր յերկաթուղագծի վրա, սահմանապահ պահակախմբի պետն էր գնդապետ Սերգեյ Մյասոյեդովը։ Այդ ժանդարմական սպան, գերմանական հետախուզության կողմից վարձատրվող գործակալը, ավելի քան ուրախ էր մեծ պետի խրախուսանքին արժանանալու համար՝ սիրալիրություն ցույց տալ նրա կնոջը։

Մյասոյեդովը լրտեսներին թույլ էր տալիս անցնելու սահմանը և ծառայություն էր մատուցում անվանի ճանապարհորդներին։ Սուխոմլինովի յերիտասարդ կինն արտասահմանում գնում էր զանազան իրեր, իսկ գնդապետն օգնում էր նրան կոնտրաբանդն անցկացնելուն։

Շուտով գեներալին հրավիրում են մայրաքաղաք, զինվորական մինիստրի պաշտոնով։ Նրա կինը բարձր աստիճանի յե հասնում, որը նրան հնարավորություն է տալիս վարելու վերին աստիճանի շռայլ կյանք։ Շուտով գնդապետ Մյասոյեդովը հանվում է պաշտոնից այն սկանդալի կապակցությամբ, որին հասցրին նրան մաքսանենգական գործարքները։ Պաշտոնապես նա «գործուղվեց զինվորական

մինիստրության տրամադրության տակ»։ Վորպես մտերիմ ընկեր նա գնում է Սանկտ-Պետերբուրգ, Սուխոմլինովի մոտ և ստանում է գեներալի վստահելի օգնականի պաշտոն։ Մյասոյեդովին բացեիբաց մեղադրում էին լրտեսության մեջ. դրա համար նա մենամարտի յե կանչում օկտյաբրիստների լիդեր Գուչկովին։

Գուչկովը, վոր հռչակավոր հրաձիգ էր, մարտահրավերն ընդունում է, բայց մենամարտի ժամանակ կրակում է օդի մեջ։ Մյասոյեդովը կրակում է Գուչկովի վրա, բայց վրիպում է։ Իր ընկերների հարցին, թե ինչու յեր կրակում օդի մեջ, Գուչկովը պատասխանում է, թե «յես չուզեցի այդ սրիկային ազատել կախաղանից»։ Դրանից հետո Մյասոյեդովը հրաժարական է տալիս, բայց պատերազմը հայտարարելուց հետո նորից յերևում է հրապարակում, ցանկանալով աշխատանքի նշանակվել շտաբում, բայց նրան մերժում են։ Այդ ժամանակ գնդապետ Մյասոյեդովը նորից մտնում է զինվորական մինիստրության տրամադրության տակ, վորն իր մութ մեքենայությունների ասպարիզում նրա կարիքն ուներ։ Սուխոմլինովի ստորությունն արտահայտվեց մատակարարման ու ռազմամթերքի պաշարների վերաբերյալ պաշտոնական զեկուցագիրը կեղծելու մեջ։ Մի զեկուցագրում նա Վոլընի վրա հարձակման պատրաստվող զորքերի գլխավոր հրամանատարին հաղորդում է, թե ճակատի թիկունքում կա դաշտային թնդանոթների արկերի բավականաչափ պաշար։ Ղեկավարվելով այդ հաղորդագրությամբ, հրետանին սկսում է հարձակումը, ընթանում փայլուն հաջողությամբ, վորովհետև ռուս զինվորներն այն ժամանակ լավ վարժեցված էին, աներկյուղ, տոկուն և համբերատար։ Բայց շուտով արկերի պաշարը սպառվում է, իսկ թիկունքում արկեր չկային, վորի հետևանքով հաղթական հարձակումը դադարում է։

Սուխոմլինովը, Մյասոյեդովը և նրանց կեղտոտ շայկան շատերի կողմից կասկածվում էին դեռ շատ վաղուց, սակայն մեղադրանքը վերջնականապես հիմնավորվեց մի յերիտասարդ սպայի շնորհիվ։ Այդ սպան, վոր հայտնի յե

Կ. կեղծանունով, գերմանացիների կողմից գերի յե վերցվում և վորպես ռազմական գերի նա յերկար տարիներ խաղաղության պետք ե սպասեր։ Նա յերբեք շփում չեր ունեցել հակահետախուզական աշխատանքի հետ, բայց վորոշում ե օգտագործել գերմանական գաղտնի ծառայության վստահությունը։ Այս առթիվ պետք ե հիշատակել, վոր գերմանացիները վարձահատույց լինելով, Ռուսաստանի զինվորական մինիստրին և այլ ազդեցիկ անձնավորությունների՝ նրանց ծառայությունների համար, չափազանց վատ կարծիք ունեյին ռուսների հայրենասիրության մասին։ Արևելյան ճակատում գործող գերմանական շտաբի պետ գեներալ ֆոն-Հոֆմանը միամտաբար գանգատվում եր, թե Գերմանիայի կառավարությունը բավականաչափ վարկ բաց չի թողնում իրեն, պատերազմի ռուսական պլանները գնելու համար։ Ուստի, յերբ Կ-ն իրեն հայտարարում ե վորպես ինքնակալության հակառակորդ, վորը պատրաստ ե վերադառնալ Ռուսաստան իբրև գերմանական գործակալ, նրա հանկարծակի պատրաստակամությունը՝ վաճառելու իր հայրենիքը, ըստ յերևույթին վոչ վոքի առանձնապես չի զարմացնում։ Նրան փոխադրում են Շարլոտենբուրգի հետախուզական կենտրոնը և այնտեղ տալիս չափազանց մանրամասն հրահանգներ։ Դրան հետևում ե նրա «փախուստը» դիմակավորող խաղը։ Նա հասնում ե մինչև Կոպենհագեն, իսկ այնուհետև մինչև Ստոկհոլմ, վորտեղից գերմանական գործակալներն ուղևորվում եյին Մերձբալթյան նահանգները։ Վերջիվերջո նա ընկնում ե Ռիգա և այնտեղ կարողանում բաց անել իր փախուստի գաղտնիքը։

Բեռլինում յերազում եյին իշխան Նիկոլայի սպանության մասին։ Մի ռենեգատի (Ռուձինսկուն) այդ բանի համար առաջարկվում ե 50 հազար դոլար։ Նա չափազանց լավ հայտնի յեր պահնորդական բաժնին, և գաղտնի վոստիկանության գործակալներն աչք չեյին հեռացնում նրանից, հենց վոր նա յերևում եր Գլխավոր շտաբի մոտակայքում։ Ի վերջո, նրանք Ռուձինսկուն ստիպում են խոստովանել իր ստացած առաջադրանքի մասին։ Նրա խոստովանությունը սենսացիա յե առաջացնում Ռուսաստանում, բայց այդ ժամանակ վրա յե հասնում Կ-ն, Ռուսաստանում գերմանական լրտեսության սիստեմի մասին մանրամասն տեղեկություններով, վոր նա իմացել եր Շարլոտենբուրգում հրահանգներ ստանալու ժամանակ։ Նա ուղարկվում ե համագործակցելու Մյասոյեդովի գործակալներին և իր տրամադրության տակ ուներ բավականաչափ փաստեր, բազմաթիվ մարդկանց մեղադրելու համար։ Սակայն նրան վոչինչ չեյին ասել Ալտշուլլերի, Կրիվոշեի և Մյուլլերի շայկայում յեղած գերմանական ծագում ունեցող գործակալների մասին։ Այդ գործակալները պատրաստ եյին մատնել ռուս դավաճան Մյասոյեդովին, բաց անելու նրա գաղտնի մեքենայությունները մի ուրիշ ռուսի։ Կ-ի հաղորդած տեղեկությունները լրացրին տարակուսելի համբավ ունեցող գնդապետի դեմ յեղած մեղադրական նյութերը և անուղղակի կերպով հասցրին նրա գործակիցներից մեկի—զինվորական մինիստրի—ձերբակալությանը։ Սուխոմլինովի հանցանքն ապացուցվեց և նրա պաշտպանությունը նույնպիսի խղճուկ տպավորություն եր թողնում, ինչպես և նա ինքը։

Մյասոյեդովը ձերբակալվեց, դատապարտվեց և կախաղան հանվեց։ Դատարանում ապացուցվեց, վոր նա հակառակորդին հաղորդելիս ե յեղել բանակում շիֆրով տրվող հրամանները, և նույնիսկ կեղծելիս են յեղել հեռագրով հաղորդվող ռուսական հրամանները՝ հօգուտ գերմանացիների։ 1915 թվականի Արևելյան Պրուսիայում տեղի ունեցող գործողություններից մեկում նրա դավաճանական միջամտությունը հասցնում ե այդ գործողություններին մասնակցող ռուսական ուժերի ամբողջ ձախ թևի վոչնչացմանը։

Կ-ն իր հակահետախուզական գործունեյության համար ստանում ե զինվորական պարգև, բայց նրա անունը չի հաղորդվում մամուլում։ Վախենում եյին, վոր Սուխոմլինովի և Մյասոյեդովի բազմաթիվ կողմնակիցները կարող են վրեժ լուծել նրանից։

Հնարամիտ սպան բնազդաբար գործում եր հակահետախուզության յերկու հիմնական կանոններին համապա-

տասխան—1) փոքր գործակալին, վորը չգիտե, վոր ինքը հայտաբերված է, թույլ տալ տանելու ավելի վտանգավոր գործակալի մոտ, 2) հայտաբերված գործակալ-սուրհանդակը պետք է ոգտագործվի մյուս գործակալներին հայտաբերելու համար (վորոնց զեկուցագրերն ինքը հաղորդում է), կամ թե հակառակորդին կեղծ ինֆորմացիա հաղորդելու համար։

ԳՐԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ ՀԱԿԱՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

Փոստային ու հեռագրական գրաքննությունը պատերազմի ժամանակ, ընդհանուրի կարծիքով, ծառայում է կանխելու համար կարևոր ինֆորմացիայի թափանցումն այն մարդկանց նամակների մեջ, վորոնք հաշիվ չեն տալիս իրենց՝ հաղորդած նորությունների նշանակության մասին։ Կա նաև այն կարծիքը, վոր գրաքննիչը քանդում է դավաճանների ու հակառակորդի գործակալների դավերը, վորոնք փորձում են իրենց ձեռք բերած տեղեկությունները հաղորդել ուր հարկն է։ Բայց համաշխարհային պատերազմի շրջանում փոստային գրաքննությունը խաղաց էլ ավելի կարևոր դեր. նա միանգամայն անսպասելի ձևով լրացնում եր հակահետախուզության գործունեյությունը, հայտաբերում եր գործակալներին և ոգնում՝ նրանց աշխատանքի մեթոդները բաց անելու գործին, ուսումնասիրելով չեզոք յերկրներն ուղարկվող նամակները, նա հավաքում եր բազմաթիվ մանր տվյալներ, վորոնք չափազանց արժեքավոր եյին ռազմական ու ծովային հետախուզության համար։

Հայտնի յե, վոր դեպի Ասիա ձեռնարկած արշավանքի ժամանակ, Ալեքսանդր Մակեդոնացու ականջին հասնում են լուրեր, թե դաշնակիցների ու վարձկան զորականների միջև դժգոհություն կա և թե թագավորը չափազանց հասարակ յեղանակով ստուգել է նրանց։ Նա հայտարարում է, վոր նամակ է գրում տուն և խորհուրդ է տալիս իր զորապետներին նույն բանն անել։ Յերբ սուրհանդակները ճանապարհ ընկան, նա կանգնեցրեց նրանց ու կարդաց

նրանց հանձնված բոլոր նամակները։ Նապոլեոնն ամեն որ վորոշ ժամ եր բաժին հանում՝ մասնավոր նամակներ կարդալու համար։ Ռիշելյեն առաջին ֆրանսիացին եր, վորը սիստեմատիկաբար խախտում եր մասնավոր նամակագրության անձեռնմխելիությունը։ Ընդհանրապես շատ քիչ թագավորներ կամ հրամանատարներ են յեղած, վորոնք խորշեյին այդ ճանապարհով ինֆորմացիա ստանալուց։

Լոնդոնում, ռեստավրացիայի դարաշրջանում, հռչակավոր գյուտարար սըր Սամյուել Մոռլանդն ապշեցրեց իր յերկրպագուներին, հորինելով մի գործիք, վորը բաց եր անում նամակները և ապա արագությամբ ու ճշտիվ նրանց պատճեններն եր հանում։

Փոստային ծառայությունն Անգլիայում այդ դարաշրջանում մասնավոր ձեռնարկություն եր, վորը կապալով եր վերցրել կոմսուհի Չեստերֆիլդը. կոմսուհու գործակալն ու կառավարիչը, սըր Ֆիլիպպ Ֆրաուդը, Լոնդոնի փոստի կառավարիչ նշանակեց վարպետորդի Ջեյմս Խիկսին։ Մոռլանդի հնարած գործիքն ափաշկարա կեցած եր փոստատանը. ու մի անգամ Կարոլոս II յերեք ժամ մնաց փոստում «հիացմունքով և մեծ բավականությամբ» դիտելով նամակների պատճենահանումը, վորոնց բովանդակությունը, հավանորեն, նրան հետաքրքրում եր վոչ պակաս, քան ինքը մեքենան։ Ձեռագիր նամակի պատճենահանումը յերկու րոպեյից պակաս ժամանակում, առանց լուսանկարելու, զարմանալի պիտի թվար նաև մեզ համար։ Տարաբախտաբար, գործիքը հրդեհի ժամանակ վոչնչացել է։

Յերբ 1914 թվականին Յեվրոպայում բռնկեց պատերազմը, միայն պատերազմող յերկու պետություններ—Ռուսաստանը և Գերմանիան ունեյին գրաքննիչների պատրաստի հաստիքներ։ Ֆրանսիական զինվորական ու ծովային գրաքննչությունն ստեղծվեց պատերազմի սկզբում, առանց հատուկ դժվարությունների։ Բայց անգլիացիները, վորոնք ամենամեծ գրագրությունն ունեյին Յեվրոպայում, խոստովանում են, վոր ոգոստոսի առաջին շաբաթներին, յերբ նրանք ձեռնամուխ յեղան գաղտնի ծառայության

այդ բաժնի կազմակերպմանը, նրանց սպառնում էր լիակատար քաոս։ Անգլիական նավահանգիստները ժամանող նավերը հսկայական քանակությամբ նամակներ էին բերում գրաքննչության նոր շենքը։ Այդ նամակների կույտերն աճում էին սարսափելի արագությամբ։ Հապճեպօրեն նշանակվում էին մարդիկ, վորոնք պետք է իրենց ձեռքի տակով անցկացնեին նամակների այդ հոսանքը, ըստվորում, գերմանացիների պնդմամբ, նրանց մեջ յեղել են գերմանական յերեք գործակալ․ գլխավոր վտանգը, վոր սպառնում էր այդ գործակալներին, չափազանց հոգնածությունն էր։

Պատերազմական գործողությունների սկսվելուց մի-քանի որ առաջ փոստի մի հեռատես պաշտոնյա կալանքի տակ է առնում ամբողջ փոստը, վորը նրան թվում էր, թե կարող է ունենալ վորևե հետաքրքրություն։ Յերբ նամակային ինֆորմացիայի այդ ամբողջ մասսան վերջապես մշակվում է և ուսումնասիրվում, պարզվում է, վոր նամակների մեջ յեղել են բազմաթիվ գերմանական և ավստրիական հրամաններ՝ զորահավաքի վերաբերյալ։ Այդ նամակներն ուղարկվում էին արտասահմանում բնակվող գերմանացիներին ու ավստրիացիներին։ Հրամանները հանձնվում են հետախուզական բաժին։ Յելնելով այդ փաստաթղթերից, հետախուզական բաժինը կարողանում է մանրամասն ամփոփագիր կազմել Ֆրանսիայի ու Ռուսաստանի դեմ դուրս յեկող՝ հակառակորդի զորամասերի վերաբերյալ։ Այդ բոլոր տեղեկությունները շտապ կարգով ուղարկվում են համապատասխան յերկրներին և առաջին նախազգուշացումն են հանդիսանում նրանց դեմ ուղարկվող ուժերի մասին։ Ամբողջ պատերազմի ընթացքում վոչ մի անգամ գրաքննիչներին չի հաջողվել այդպես կարճ ժամանակամիջոցում հավաքել այդքան արժեքավոր տեղեկություններ, ինչպես այդ յերկու շաբաթվա ընթացքում։

Գրաքննիչներն ստիպված են հսկայական քանակությամբ նամակների մեջ վորոնել մի պոտենցիալ կերպով վտանգավոր տող։ Համաշխարհային պատերազմի ընթացքում Լոնդոնում ամեն որ հետազոտվում էին հարյուրա-

վոր նամակներ, ծրարներ ու թերթեր։ Նույն բանը կատարվում էր նաև Փարիզում։ Այդ նյութի մեծ մասը դուրս էր գալիս միանգամայն անմեղ, յերբ հետազոտությունները կատարող մասնագետները չեյին հայտաբերում անտեսանելի թանաքի կամ թե կոդային ու շիֆրային հաղորդագրությունների վորևե հետք, փոստը նորից կնքվում էր և ուղարկվում ըստ հասցեյի։ Յեթե վորևե նամակ տարակույս էր առաջացնում, այն յերկար չէր պահվում, նկատի ունենալով, վոր այդ հանգամանքը կարող է նախազգուշացնող յերևույթ լինել հանցավորի համար։ Բայց այդպիսի նամակների պատճենը հանվում էր և պահվում հակահետախուզության մոտ։ Այն բոլոր նամակներն ու ծրարները, վորոնք թեև կասկածելի էին թվում, բայց վոչ մի հիմք չեյին տալիս պնդելու, վոր դրանք ուղարկողը հետախուզության գործակալ է, պահում էին չափազանց յերկար։

Շնորհիվ փոստային գրաքննության զգաստության, մի գրաքննությունն, վոր իր աշխատանքում կոնտակտ էր պահպանում հակահետախուզության հետ, հայտաբերվեց մի նշանավոր գերմանական հետախույզ՝ Մյուլլեր ազգանունով։ Մի անգամ, 1915 թվին, Լոնդոնի գրաքննությունն ստացավ Ամստերդամ հասցեյագրված մի թերթ։ Այդ թերթի լուսանցքներում հայտաբերվեց գաղտնագիր, ուր ասված էր, թե «Ս»-ն ուղևորվել է դեպի հյուսիս և գրելու յե «201»-ից։ Շտեմպելի վրա դրոշմված էր «Դեպտֆորդ»։

Սկոտլանդ Յարդի տեսուչներից մեկը գործն սկսեց այնպես, կարծես թե «Ս»-ն բանկ է կողոպտել կամ մի մարդասպան է, վորին անհրաժեշտ է բռնել։ Նա դիմեց Դեպտֆորդ քաղաքի վոստիկանությանն այսպիսի հարցումով, թե քաղաքի վոր փողոցների վրա կան այդպիսի տներ՝ 201 համարով։ «Միայն մի փողոցի վրա,—ասված էր պատասխանում,— Դեպտֆորդ Հայ Ստրիտ փողոցի վրա»։

Այս տան մեջ անգլիական դետեկտիվները գտան Պետեր Հաան անունով մի մարդ՝ հացթուխ (անգլիական

հպատակ), վորը յերդում է ուստում, թե յերբեք լրագրերի լուսանցքներում վոչ մի արտառոց գրություններ չի արել, յերբեք Հոլանդիա թերթեր չի ուղարկել և առհասարակ չգիտե՝ ով է «Ս»-ն։ Սակայն խուզարկության ժամանակ նրա մոտ գտան կլոր ծայրով գրիչ և անտեսանելի թանաք։ Հաանին ձերբակալեցին։

Հացթուխը համառորեն հրաժարվում եր խոսելուց, բայց նրա հարևանները սիրով պատասխանում եյին նրա փոխարեն և հիշեցին մի մարդու, վորը հաճախակի լինում եր նրա մոտ։ Ըստ նրանց նկարագրության՝ դա բարձրահասակ մի մարդ եր, կիրթ շարժուձևերով, և՝ բոլոր նշաններին նայելով՝ ռուս եր։ Դետեկտիվները դիմեցին Լոնդոնի պանսիոնների ցուցակին, ըստվորում հետախուզությունը հասցրեց նրանց դեպի Բլումսբերի, ուր սարսափած տանտիրուհին ընդունեց, վոր՝ նկարագրությանը նայելով՝ դա իր կենվորն է, մի ռուս, Մյուլլեր ազգանունով. այս կինն ասաց, վոր հիշյալ կենվորը նորերս անձնական գործերով Նյուկեստլ է մեկնել։ Յեվ իրոք, «Ս»-ն հյուսիսում եր։

Իրենց ձեռքի տակ ունենալով բոլոր նշանները՝ դետեկտիվները, վորոնք հսկում եյին Նորթումբերլենդյան նավահանգիստը, ճանաչեցին Մյուլլերին գնացքում։ Նրան ձերբակալեցին, վերադարձրին Լոնդոն պահակի ուղեկցությամբ։ Սա իրոք վոր վտանգավոր հետախույզ եր։ Նրա ստացած տեղեկությունների առաքման սիստեմն ինքնին մի զարմանալի նորույթ եր։ Այդ սիստեմը յերկար ժամանակ կարող եր մնալ չհայտաբերված։ Նա հայտարարություններ եր տալիս անգլիական գավառական թերթերին, իսկ հետո այդ թերթերն ուղարկում եր իր հոլանդական թղթակցին։

Այն կոդը, վորով ոգտվում եր Մյուլլերը, վերջիվերջո բացվեց հռչակավոր «40-րդ սենյակի» մասնագետների ձեռքով։ Յեվ Մյուլլերի մահապատժից հետո, հետախուզական բաժնի սպաները շարունակում եյին ուղարկել գերմանայիններին սուտ տեղեկություններ, ոգտվելով նրա մեթոդից։ Ավելին. բրիտանական հետախուզությունը յերկար ժամանակ ստանում եր գերմանացիներից դրամական

փոխադրումներ, վորպես վարձատրություն այն տեղեկությունների համար։ Այս դեպքը հնարավորություն տվեց հակահետախուզությանը ճշտորեն վորոշել այն գումարները, վոր գերմանացիները վճարում եյին իրենց գործակալներին, ինչպես և նույն գումարների ստացման ժամկետները։ Մյուլլերի գործից հետո, բրիտանական գաղտնի ծառայությունն ի վիճակի յեր նախազգուշացնել գրաքննությանը նման գումարներն ստանալու մասին նշելու անհրաժեշտությունը, այն գումարների, վորոնք կանոնավոր ընդհատումներով չեզոք պետություններից ուղարկվում եյին վորևե մեկի հասցեյով։

Կասկածից վեր է, վոր փոստային գրաքննչության ամենակատարելագործված կազմակերպությունն եր ցարական Ռուսաստանի հռչակավոր «սև կաբինետը»։ Այստեղ ստացվում եյին գլխավորապես բարձրաստիճան անձերի թղթակցությունները. հատուկ պաշտոնյաներ բաց եյին անում ու կարդում թղթակցությունները, հանում նրանց պատճենը կամ լուսանկարում և պահում գաղտնի կարգով։ Նկատի ունենալով, վոր այդպիսի ուշադրության բավականաչափ արժանավոր անձնավորությունների թիվը համեմատաբար սահմանափակ եր, փոստային գրասենյակում միանգամայն հարմար պայմանների մեջ դրված պաշտոնյաներն ուսումնասիրում եյին ձեռագրերի նմուշներն այն աստիճան, վոր արդեն սովորել եյին ձեռագրերը ճանաչել առաջին հայացքից։ Գրաքննչության միքանի աշխատողներ գիտեյին մինչև 20 լեզու։ Ռուսները «սև կաբինետի» աշխատանքն անվանում եյին պերլյուստրացիա (նամակները բաց անելն ու կարդալն առանց հասցեատիրոջ գիտության)։

Կոմս Իգնատյևը, Կիևի նահանգապետ յեղած ժամանակ, իր նամակները միշտ ուղարկում եր հավատարիմ մարդկանց ձեռքով, կարծեք գաղտնի դավադրությունների մասնակից լիներ։ Կոմս Վիտտեն, վոր խոշոր պետական գործիչ եր, վոչ սակավ տուժել եր իր կարյերայի սկզբնական շրջանում, վորովհետև նրան մեղադրում եյին, թե զանազան հասարակական հարցերի նկատմամբ իր կարծիքն

է ունեցել, վորն անկեղծորեն արտահայտել է իր մասնավոր գրագրության մեջ։ Հասարակական գործեր—ահա այն թեմատիկ չափսը, վորը կիրառվում էր «սև կաբինետից» անցնող բոլոր նամակների նկատմամբ։ Մենք կարող ենք մեզ պատկերացնել աշխատանքի պահին այն գրաքննիչներին, վորոնք դավաճանության աչքառու ցուցումներ կամ գոյություն ունեցող ռեժիմից դժգոհ լինելու աղոտ նշաններ են վորոնում։ Որեր ու շաբաթներ ձանձրալի անձնական գործեր, բամբասանքներ ու դատարկ բաների մասին բացարձակապես բարեմիտ շաղակրատանքներ կարդալուց հետո, վերջապես պատահում է մի չնչին խոսք, վորը դիպվածով արտահայտել է վորևէ մի կոմս կամ մեծ իշխան, կամ գեներալ։ Նույնիսկ կայսերական ընտանիքի անդամներն ազատ չեյին փոստային այդ հսկումից։

«Սև կաբինետն» իր բաժանմունքներն ուներ Մոսկվայում, Կիեվում և Ոդեսսայում։ Մոսկվայի բաժանմունքը կոչվում էր «գաղտնի եքսպեդիցիա» և բաղկացած էր պետից և ութը չինովնիկներից։ Կիեվի բաժանմունքն ուներ նույնպիսի հաստիք և, ամենայն հավանականությամբ, ամենից ակտիվն էր մյուսներից, քանի վոր նրա աննկուն չինովնիկները միևնույն ժամանակ ավստրո-գերմանական գործակալներ եյին։ Յեթե չլիներ լրտեսության հայտաբերումը ռուսական փոստային գրաքննչության մեջ, մեզ շատ ավելի քիչ բան հայտնի կլիներ նրա գաղտնի գործունեյության մասին։ Յերբ «սև կաբինետի» Կիեվի բաժանմունքում հայտաբերվեցին հակառակորդի գործակալներ, նրանք ձերբակալվեցին ու դատի տրվեցին, կարծես թե հին շենքի պատերի մեջ առաջացած ճեղքերն այն աստիճան մեծ եյին, վոր այլևս չարժեր վորևէ բան թագցնել հասարակությունից։

Գլխավոր մեղադրյալը՝ Կարլ Զիվերտը գրաքննության ապարատում աշխատում էր մոտ 50 տարի։ Նա միևնույն բարեխղճությամբ գործում էր յերկու կամ ավելի տերերի համար և զարմանալի անտարբերություն էր ցուցաբերում դեպի քաղաքական բոլոր բանակները։ Նրա յերեք գլխավոր օգնականները—Եդուարդ Խարդակը, Մաքս Շուլցը և

Կոնրադ Գուզանդերը—նրա նման ծագումով գերմանացիներ եյին, բայց վաղուց արդեն բնակություն եյին հաստատել Կիեվում։

«Սև կաբինետն» իր աշխատանքի մեջ այնքան հեռու յեր գնացել, վոր բաց էր անում և ստուգում նույնիսկ տեղական գաղտնի վոստիկանության փոստը։

1911 թվականին Նիկոլայ 2-րդն այցելեց Կիեվ (նրա այդ այցելության ժամանակ թատրոնում սպանվեց Ստոլիպինը)։ Ցարական շքախմբի պահպանությունը հանձնարարվեց գեներալ Կուրլովին, վորը «սև կաբինետին» հրամայեց ձեռք չտալ ցարական շքախմբի պատկանող անձանց նամակներին։ Զիվերտը չկատարեց այդ հրամանը։

Զիվերտի դատավարության ժամանակ պարզվեց, վոր նա լուսանկարելիս է յեղել այն նամակները, վոր այրի թագուհին ուղարկում էր ծովակալներին ու գլխավոր հրամանատարներին։ Նույնիսկ ռասպուտինյան շայկայի անդամները չեյին կարողանում իրենց նամակները պաշտպանել Զիվերտից և նրա համագործակիցներից։

Դատավարության ժամանակ ապացուցվեց, վոր Զիվերտը ռուսական ռազմական գաղտնիքները Վիեննա յե հաղորդելիս յեղել դեռ մինչև պատերազմը։ Զիվերտը հաղորդում էր, վոր այն հատուկ ելեկտրական թեյամանը, վորն օգտագործվում էր գոլորշու միջոցով ծրարները բացանելու համար, պատրաստված է յեղել գերմանական ֆիրմայի կողմից։ Նա բացատրում էր նաև, վոր շատ նամակների պատճենները հանվելիս են յեղել ձեռքով, յերբ վորևէ բառ կամ ստորագրություն լինում էր անընթեռնելի, դրանք լուսանկարվում եյին, և նկարը փակցվում էր տեքստի համապատասխան տեղում, ըստվորում բոլոր լուսանկարչական ապարատները նույնպես ստացված եյին Գերմանիայից։

Ամենքի համար միշտ հասկանալի յեր, վոր ինչ-վոր պետական կազմակերպություն բաց է անում կարևոր նամակներ, և քանի վոր դրանց մեծ մասը կնքվում էր մեղրամոմով, կարծվում էր, վոր այդ անելու համար հարկավոր է բավականաչափ ճարպիկություն ունենալ։ Ռազմա-

կան հետախուզության գործերի մասնագետները և ընթերցողները թե Եվրոպայում և թե Ամերիկայում սովորաբար ծրարների կնիքը հանելու համար հանձնարարում էին օգտագործել գրչահատի տաքացրած բերանը. նամակը կարդալուց հետո կնիքը նորից վերադառնում է իր նախկին տեղը։ Բայց Ջիվերտը, վորը բաց էր անում բազմաթիվ կնիքներ ունեցող տասնյակ նամակներ, գտավ, վոր գրչահատի տաքացրած բերանը կամ յերկաթալարը չեն սազում իր պերլյուստրացիոն «հանճարին»։ Տաքացրած մետաղը շատ հաճախ փչացնում էր ծրարը։ Դրա համար նա հորինեց մի փոքրիկ հարմարանք, վոր բաղկացած էր՝ գործելու ճաղի հաստություն ունեցող բարակ կլոր ձողիկից. ձողիկը յերկու յեր ճեղքված մինչև իր յերկարության կեսը։ Ձողիկը մտցվում էր ծրարի մեջ՝ անկյունի կողքից և հասցվում էր մինչև դիմացի անկյունը։ Նամակն ընկնում էր ձողիկի ճեղքի մեջ։ Այնուհետև ձողիկն արագությամբ պտտվում էր ձեռքով, ու նամակը վոլորվում էր ձողիկի վրա, վորից հետո պետք էր զգուշությամբ դուրս հանել ձողիկը, բայց առանց ծրարը ձգելու և կնիքը կամ կնիքները վնասելու։ Կարդացված և պատճենահանված նամակը նորից վոլորվում էր ձողիկի վրա, զգուշությամբ մտցվում էր ծրարի մեջ, վորից հետո վոլորվածքը հետ էր տրվում, ապա ձողիկը նորից դուրս էր քաշվում, իսկ ծրարը շտկվում էր ձեռքով։ Այնուհետև նամակն ուղարկվում էր ըստ պատկանելության նույնքան լավ ծրարված ու կնքված, ինչպես մտնում էր «սև կաբինետը»։

ԳԱՂՏՆԻ ՎՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից Եվրոպայում գաղտնի վոստիկանությունը մասնակցում է հակահետախուզությանը. կարելի յե ասել, վոր վոստիկանական ծառայությունը գործնական պատրաստություն է տալիս գաղտնի հետախուզության աշխատողներին, մի շարք հնարամիտ գործակալների ու պետերի առաջ քաշելով հակահետախուզության գծով կատարվող ռազմական աշխատանքի համար։ Գաղտնի վոստի-

կանությունն այս կամ այն ձևով օգտագործվելիս է յեղել բոլոր հնագարյան դինաստիաների կողմից։ Մեծագույն հզորության հասավ նա 16-րդ դարում, Հնդկաստանում։ Ակբար թագավորը մոտավորապես 1556 թվականին կազմակերպել էր գաղտնի հետախուզություն, վորը փաստորեն կառավարում էր պետությունը։

Լրտեսները Ակբարի համար լավագույն միջոցը յեղան խիտ բնակված և վերին աստիճանի բարդ հասարակական ու կրոնական փոխհարաբերություններ ունեցող իր կայսրությունը կառավարելու համար։ Հնդկական փիլիսոփաքաղաքագետներից մեկը նշել է, թե լրտեսները «չափավորում են» պետական պաշտոնյաների ջանքերը։ Ակբարի գաղտնի հետախուզության սիստեմի մեջ, ըստ յերևույթին, հատուկ տեղ էին գրավում ճանապարհորդողների վրաբերյալ տեղեկությունները։ Անգլիացի Ջոն Հուկինսը, վորը վորպես Ելիզաբեթ թագուհու պատգամաբեր շրջագայում էր Արևելքում, Սուրաթում չափազանց անբարյացակամ վերաբերմունքի հանդիպեց Մոկառուբ խանի կողմից։ Հուկինսը համառորեն շարունակեց իր ճանապարհը մինչև Ագրա։ Բայց Ակբարի լրտեսներն իրենց զեկուցագրերով առաջ անցան նրանից։ Յերբ անգլիական ծովակալը մուտք գործեց քաղաք, նրան պատվով դիմավորեցին, իսկ մասնավոր խոսակցության ժամանակ թագավորը հիշատակեց այն բոլոր անախորժությունների մասին, վոր տեղի էին ունեցել Սուրաթում նախքան ծովակալի այնտեղ գալը։ Այդ մասին ցավակցություն հայտնելուն զուգընթաց, այցելուին հասկացնել տվին, վոր Սուրաթում արդեն կարգ ու կանոն է հաստատված։ Այդպիսով լրտեսներն օգնում էին ամենատես ու ամենագետ թագավորին՝ ժողովրդին ահի մեջ պահելու։

Ամբողջ գաղտնի հետախուզությունը Հնդկաստանում հանձնարարվում էր գլխավորապես աղբահավաքներին։ Օրենքի համաձայն, օրը յերկու անգամ նրանց ուղարկում էին բոլոր բակերը մաքրելու, ըստվորում նրանք՝ հավաքելով աղբն ու անմաքրությունները, ականջ էին դնում ամեն տեսակ խոսակցությունների։ Լսածը նրանք հաղոր-

դում էյին պետերին, վորոնց զեկուցագրերն ուղարկվում էյին անմիջականորեն կայսրին։ Նյութերի ընտրություն չէր կատարվում, և ամենակեղտոտ բամբասանքները, հարևանների կամ ախոյանների ամենաաննշան ասեկոսեները, բոլոր մանր սկանդալները հայտնի էյին դառնում պալատում։

Գաղտնի վոստիկանության այդպիսի կազմակերպություն գոյություն չի ունեցել ուրիշ վոչ մի տեղ, յեթե հաշվելու չլինենք միջնադարյան յեկեղեցու ուժեղ կազմակերպությունը Յեվրոպայում։ Հետախուզության հարցերի գերմանական հայտնի մասնագետ ֆոն-Դեկկերը մի անգամ ասել է, թե այն գաղտնիքը, վորը չի կարող բաց անել հոգևորականը կամ կինը, յերբեք չի բացվի։ Իսկ ծխական քահանան հոգևորական անձ էր, վորը հսկայական ազդեցություն ուներ իր ծխականների վրա. այդպիսով յեկեղեցին հիանալի հնարավորություններ ուներ թափանցելու տեղական գաղտնիքների մեջ, և տեղական զեկուցագրերի պարունակած տեղեկությունները հետախուզական լուրջ նյութ էյին հանդիսանում Վոլսեյի կամ Ռիշելյեյի տիպի արքեպիսկոպոսների համար։

Յեկեղեցու հակառակորդները միշտ պնդում էյին, վոր խոստովանությունը գաղտնի հետախուզության միջոցներից մեկն է հանդիսանում։ Մի կողմ թողնելով վեճերը, պետք է հիշատակել, վոր մինչև վերջին հարյուրամյակը յեկեղեցին պատրաստում էր մեծ թվով հիանալի գործակալներ, լրտեսներ ու գաղտնի ծառայության պետեր։ Ֆուշեն, Տալեյրանը, Դեմարեն անցյալում յեղել են քահանաներ, վորոնք չափազանց մեծ ընդունակություն ունեյին կազմակերպելու և ոգտագործելու գաղտնի վոստիկանության ծառայությունը։ Կարդինալ Ռիշելյեն իր տրամադրության տակ ուներ մի ճարպիկ քահանա՝ Ժոզեֆ դյու Տրեմբլեյ անունով, վորը համարձակ և միջոցների մեջ խտրություն չդնող գործակալների ոգնությամբ բաց արեց Սեն-Մարսի դավադրությունը, հետևում էր Ավստրիային ու նրա դաշնակիցներին, ավստրիական թագուհուն Ֆրանսիայում, և նույնիսկ ավելի առաջ գնաց դավադրուհի Մարիա դե Ռոգանից, դքսուհի Լյուիննից ու Շևրեզից։

Ֆրանսիայում դեռ մինչև այսօր էլ գոյություն ունեն այն տրադիցիաները, վորոնք սկիզբ են առնում Ֆուշեյից ու նրա գործակալներից։ Ֆրանսիական գաղտնի վոստիկանության մեթոդները կապված են այսպես կոչված «դոսյեներ»—գործեր կազմելու հետ։ «Դոսյեն» ներկայացնում է հանրապետության այն բոլոր բնակիչների մասին յեղած տվյալների լրիվ ամփոփագիրը, վորը կարող է վորևէ նշանակություն ունենալ իշխանությունների համար. դրանք տեղեկություններ են պարունակում բոլոր աչքի ընկնող մարդկանց ու նրանց ազգականների մասին, փառքի ճանապարհը բռնած անձանց, նրանց ընտանեկան հարաբերությունների մասին և վերջապես այն բոլոր անձնավորությունների մասին, վորոնք թեկուզ հեռավոր կերպով կապված են այն բանի հետ, վորը կոչվում է հանցագործության աշխարհ։

«Դոսյեի» սիստեմը գտել էր բազմաթիվ նմանվողներ։ Բայց Շտիբերի աշակերտները Բեռլինում այդ սիստեմը գործադրեցին այլ յերկրների քաղաքացիների նկատմամբ, ինչպես և հետախուզության ու գաղտնի սպասարկության նպատակներով՝ պատերազմի դեպքում։ Գերմանական գործակալներին, վորոնք արտասահման էյին ուղարկվել մինչև 1914 թվականը, հանձնարարված էր հաղորդել այն բոլոր մասնավոր տեղեկությունները, վոր հնարավոր կլինի ձեռք բերել հասարակական տեսակետից աչքի ընկնող տարբերկրացիների ու նրանց ընտանիքի անդամների վերաբերյալ։ Դրա հետևանքով ստացվեց սկանդալային խրոնիկայի մի էնցիկլոպեդիա, վորի մեջ կարելի յե հանդիպել հազարավոր մարդկանց անունների, վորոնք հայտնի էյին իրենց յերկրում և վորոնց վրա, անհրաժեշտության դեպքում, կարելի յե ճնշում գործադրել, սպառնալով հայտնի դարձնել նրանց մեղքերը, զանցանքները կամ թե ընտանեկան գաղտնիքները։

Այդ պարզապես մի մեծածախ նախապատրաստություն էր՝ պաշտոնական շանտաժի համար։ Հազիվ թե կարելի լիներ յենթադրել, վոր այդ բոլոր մարդիկ, վորքան էլ տարափահար արված լինեյին նրանք, կարող էյին հար-

կադրվել որևէ ինֆորմացիա տալու հակառակորդին։ Բայց նրանց կարելի չէր համոզել, որ նրանք անուղղակի աջակցություն ցույց տան կամ թե անխուսափելի կոնֆլիկտի որերին թագցնեն գերմանական գործակալների գործունեությունը։

ՊՐՈՊԱԳԱՆԴԸ ՎՈՐՊԵՍ ԳԱՂՏՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

Համաշխարհային պատերազմը կատարելագործեց հարձակման մի նոր տեսակ։ Հետախուզության սովորական մեթոդներին զուգընթաց, հսկայական չափով զարգացավ պրոպագանդը, վորը ներգործում եր բանակի ու քաղաքացիական բնակչության բարոյական վիճակի վրա։

Պրոպագանդին, վորպես հարձակման միջոցի, մենք հանդիպում ենք հին դարերում։ Ռազմասեր հույները հիանալի տիրապետում եյին այդ զենքին։ Համաշխարհային պատերազմի մեջ սիստեմատիկ պրոպագանդը շահում եր մեծ ճակատամարտեր և զինաթափ անում նավատորմը. նա բարոյալքեց ժողովուրդներին և տասնյակ անվճռական, չեզոք յերկրների դարձրեց յեռանդուն կռվող յերկրներ։ Մարդկանց ամբողջ վաշտեր ու գումարտակներ իրենց ամբողջ ժամանակն ու ընդունակությունները նվիրել եյին գիտականորեն կազմակերպված պրոպագանդին. այդ մարդիկ պետք է ունենային բազմաթիվ ու բազմազան հատկություններ, սկսած մեծ հնարամտությունից ու նորություններ տարածելու ընդունակությունից, մինչև համոզելու մեծ ձիրքը։

Պրոպագանդը ռումբի պես պայթում եր մարտական գծերի, չամրացված քաղաքների վրա և արթնացնում միլիոնավոր մտքերը։ Հրետանին պահանջում եր արկեր, պրոպագանդը—թուղթ ու թանաք։ Պրոպագանդը մղվում եր նկարների, պիեսների, յերգերի միջոցով նրանց համար, ովքեր լսելը գերադասում եյին մտածելուց։ Հինգ տարվա ընթացքում, 1915 թվականից մինչև 1920 թվականը, պրոպագանդը գերազանցեց այն բոլոր հնարամտություններից, վորոնք յերբևիցե մատուցվել եյին ընտրողներին կամ ապստամբած մասսաներին։

Պատերազմն սկսվելուց քիչ հետո, Յեվրոպայում պատերազմող յերկրներն սկսեցին համոզել իրենց և ուրիշներին, վոր պատերազմի պատասխանատվությունը դրվելու յե հակառակորդի վրա։ Պատերազմող կողմերից յուրաքանչյուրը թափում եր իր վրայից մեղադրանքը և ժխտում եր իր հանցանքը հաստատող մյուս կողմի ներկայացրած փաստերը։ Պրոպագանդի նպատակներով մոբիլիզացիայի եյին յենթարկվել այն մարդիկ, վորոնք ամաչում եյին տրամաբանորեն մտածելու կարողությամբ։ Մարդիկ սովորաբար սիրով հավատում են այն բանին, վորին ուզում են հավատալ, և ռազմական պրոպագանդը միշտ ձգտում է ազդել նրանց զգացմունքների վրա։ Ներկա պայմաններում, յերբ պատերազմին ժամանակցում է ամբողջ ժողովուրդը, ինչ էլ խոսեն և գրեն թշնամու մասին, այդ բոլորը շատ անհավանական չի թվում։

Պրոպագանդը նույնպես հանդիսանում է հակահետախուզության աշխատանքի օբյեկտը։ Պրոպագանդն ամենից ավելի վերահսկողության եր յենթարկվում և խափանվում գրաքննչության կողմից։ Սակայն Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և Ամերիկայում խիստ հսկողությունը զանազան լուրերի հրապարակման նկատմամբ ընդհանուր գայրույթ ու անմշտապես առաջացնում եր գրաքննությունն ավելի հանգստություն։ Այստեղ թերևս գրաքննությունն ավելի շատ չարիք է պատճառել, քան թե բարիք։ Հակառակորդի պրոպագանդն օգտագործեց այդ հանգամանքը, քանի վոր կիսով չափ իրազեկ դարձված անձինք միշտ ձգտում են իմանալ ամեն ինչ, իսկ այդ գյուտ է հանդիսանում պրոպագանդիստի համար։ Այլ բան է, յերբ մարդիկ չեն ստվորել կարդալ ու հասկանալ։ Նրանք կատարելապես անծանոթ լինելով, թե ինչի վրա յե հիմնվում պրոպագանդիստի պլանը, մոլորության մեջ են գցում նրան։

Դրանով է բացատրվում այն փաստը, վոր համաշխարհային պատերազմի ժամանակ ավստրո-գերմանական պրոպագանդը մեծ հաջողություն չունեցավ ռուս զինվորների ու քաղաքացիական բնակչության մեջ։

Իտալական ճակատում ավստրո-գերմանական հետախուզությունը 1917 թվականի հոկտեմբերին սուտ ինֆորմացիա յեր հավաքում Հյուսիսային Իտալիայում տեղի ունեցող քաղաքացիական լուրջ անկարգությունների վերաբերյալ։ Տուրինում տեղի եյին ունենում հուզումներ, զորքը կրակում եր ժողովրդի վրա, բազմությունը ցրելուց հետո հրապարակում մնում եյին սպանվածներ։ Գործակալների միջոցով հաջողվում է իմանալ սպանվածների անունները և այլ տվյալներ, վորոնք հայտնի եյին Տուրինի և նրա արվարձանների բոլոր բնակիչներին։ Պրոպագանդիստները ձեռնամուխ են լինում գործին։ Ավստրիայում տպագրվում են Հյուսիսային Իտալիայում լավ հայտնի թերթերի հատուկ համարներ, տեղի ունեցած հուզումների ու արյունհեղության վերաբերյալ ցնցող հաշվետվություններով։ Հրապարակվում եյին սպանվածների ու տուժածների ցուցակները, տրվում խմբագրական բացատրություններ, վորոնց դիպած չեր լինում պատերազմական ժամանակվա գրաքննության ձեռքը և վորոնք չեյին խնայում իշխանություններին։ Հոկտեմբերի վերջերին Պիեմոնտից Հորիցիայի հյուսիսային մասը յեկան մի շարք զորամասեր․ սավառնակներից նրանց համար թերթեր նետվեցին, վորոնց ամսաթիվը այնպես եր նշանակված, վոր թվում եր, թե դրանք հրատարակված են Իտալիայում։ Պիեմոնտցիները կարդացին այդ թերթերը, արդյունքը ցնցող եր։ Նրանք վորոշեցին վերադառնալ տուն, Տուրին, և կարգ ու կանոն հաստատել այնտեղ․ անառիկ խրամատները միանգամից դատարկվեցին։ Այդ բանը պատահեց հոկտեմբերի 24-ին, իսկ հոկտեմբերի 25-ին տեղի ունեցավ Կապորետտոյի ճակատամարտը։ Իզոնցոյի մոտ ճակատը պատռվեց, չնայած վոր իտալական զորքերի թիվը հարաբերվում եր ավստրիական զորքերի թվին այնպես, ինչպես յոթը՝ չորսին։ Նահանջի ժամանակ իտալացիները կորցրին սպանված ու գերի առնված մոտ կես միլիոն մարդ։ Հասնելով Պիավեյին, իտալացիները ժամանակին յեկած վեց ֆրանսիական ու հինգ բրիտանական դիվիզիաների օգնությամբ կասեցրին ավստրիացիների հարձակումը։

Պատերազմի վերջին ամիսներին, այսինքն՝ 1918 թվականի հուլիսից մինչև նոյեմբեր, դաշնակիցների զգույշ ու անընդհատ պրոպագանդն աստիճանաբար ունեցավ իր քայքայիչ ազդեցությունը․ զինադադարը դարձավ անխուսափելի։ Թուրքիան, Բուլղարիան և Ավստրո-Հունգարիան հեռացան Գերմանիայից, նրան թողնելով մենակ։

Ամեն տեսակ այլ միջոցների նման, պրոպագանդը ևս կարող է լուրջ վնաս հասցնել այն գործին, վորին նա կոչված է ծառայելու։

Պատերազմի սկզբին ֆրանսիացիները, փորձելով ձըգձգել պատերազմը, ուշացնում եյին զորահավաքը, վորը հասցրեց մեծ անկարգությունների ու ձախ թևում հակառակորդի ուժերի թվական գերակշռության։ Սակայն ֆրանսիական հեծելազոր զորքերն անցան Լոթարինգիայի սահմանը, և այդ էլ հենց գերմանական պրոպագանդի կողմից օգտագործվեց համոզելու համար գերմանական ժողովրդին, վոր Գերմանիան հանդիսանում է պաշտպանվող յերկիր։

Ամերիկան մտավ պատերազմի մեջ, և գերմանացիները կարող եյին վախենալ նրանից, յեթե չլինեյին այն պաշտոնական հավաստիացումները, թե ամերիկացիները ղեկավարվում են պարզապես ագահությամբ, իրենց տրամադրության տակ ունենալով միանգամայն անփորձ, անպատրաստ ու փոքրաթիվ բանակ։ Ամերիկյան մեծ բանակի ստեղծումից և այդ բանակը յեվրոպական կոնտինենտ փոխադրելուց հետո, դաշնակիցների՝ չեզոք յերկրներում գործող պրոպագանդիստները հոգ տարան, վորպեսզի գերմանացիները սխալ տեղեկություններ ստանային հակառակորդի ուժերի թվի վերաբերյալ։ Գործակալների զեկուցագրերից իմանալով ֆրանսիական յերկաթուղիների վատ վիճակի մասին, գերմանական շտաբը պնդում եր, թե Ֆրանսիան կարող է իր յերկիրն ընդունել ամերիկյան ուժերի խոշոր դեսանտը, բայց յերբեք չի կարողանա միջոցներ տրամադրել՝ այդ ուժերը ռազմաճակատ փոխադրելու համար։

Ամերիկացիներն արագորեն կառուցեցին իրենց սեփական յերկաթուղին, բերին իրենց շարժական կազմը և ռազ-

մաճակատ փոխադրեցին միլիոնավոր մարտիկների։ Այդպիսով, Գերմանիայի ու Ավստրիայի բնակչությունն ապրեց դարձյալ մի ծանր հիասթափություն։

Դաշնակիցները զարմանում եյին, վոր 60 միլիոն բնակչությանը հնարավոր եղավ մոլորության մեջ գցել և տալ այդպիսի կեղծ ինֆորմացիա։ Գերմանացիները հավատում եյին, վոր, երբ Անգլիայի բնակչությունը մեռնում ե սովից, իսկ Լոնդոնը ցեպպելինների կողմից վեր ե ածվել ավերակների։

Բրիտանական ծովային հետախուզական ծառայության պետ սըր Ռեջինալդ Հոլլն արագությամբ հնարեց հակառակորդի վրա ներգործելու բազմաթիվ միջոցներ։ Սակայն մի դեպքում Հոլլը լուր տարածեց, վորը ռիկոշետով խփեց Անգլիային։ 1914 թվի դեկտեմբերին Հոլլը լուր տարածեց Գերմանիայում այն մասին, վոր բրիտանական նավատորմը իր ուժերը կենտրոնացնում ե Հոլանդիայի հյուսիսային կողմում, Եմսի և Վեզերի միջև՝ բրիտանական զորքերի դեսանտն այնտեղ պաշտպանելու համար։ Այս լուրն անմիջականորեն հասավ գերմանական գլխավոր շտաբը և հալած յուղի տեղ ընդունվեց։ Գերմանացիներն այնքան լրջորեն հավատացին այդ բանին, վոր վտանգ սպառնացող ռայոնը պահեստի դիվիզիաներ ուղարկեցին։ Այս միջոցառումն անհանգստացրեց Լահեյին։ Պահեստի դիվիզիաների շարժման լուրը թռավ Սպիտակ ծովի վրայով և անհանգստացրեց անգլիացիներին։ Բրիտանական բանակի հետախուզական մարմնի գործակալները հաղորդեցին գերմանական ուժերի անբացատրելի ներկայության մասին ծովեզրում։ Բրիտանական հրամանատարությունն էլ իր հերթին նույնպես հարկադրված եր կազմ ու պատրաստ լինել։ Յերկու կողմերի միքանի օրվա ներվային ուժեղ լարվածությունից հետո միայն Հոլլն իմացավ, վոր միստիֆիկացիայի արդյունքը գերազանցեց նրա ակնկալությունները, և նա վերջ դրեց զինվորական շտաբի անհանգստությանն Ուայտհոլլում։

Պրոպագանդի առաջադրանքը յերբեք չպետք ե հանձնարարվի հետախուզության գործակալներին։ Տաղանդավոր

հետախույզները, վորոնք փորձել են միաժամանակ զբաղվել նաև պրոպագանդով, անխուսափելիորեն հրաժարվել են դրանից և զղջացել, իսկ միքանի կարճատևներ այդպիսի փորձի համար հատուցել են իրենց կյանքով։ Բոլո Փաշան, վորն զբաղվում եր ոճառ պատրաստելով և սպեկուլյացիա յեր անում ամբողջ Հարավային Յեվրոպայում, տաղանդավոր դավադիր եր։ 1914 թվականին նա, ամերիկյան բանկերից ստանալով խոշոր գումարներ, գալիս ե Ֆրանսիա և սկսում թերթեր ձեռք գցել, վորոնց օգնությամբ նա պատրաստվում եր պարտվողականության գաղափարի պրոպագանդ անել։ Գերմանիայի կարծիքով այդպիսի պրոպագանդը պետք ե ռազմաճակատում քայքայեր ֆրանսիական զորամասերը։ Բոլոն կարողանում ե իր տրամադրության տակ առնել միայն աննշան, խղճուկ թերթուկներ, վորոնք յերկրում չունեյին վոչ մի ազդեցություն։ Յերբ նա ձգտում եր գնել մի խոշոր թերթ և վերջապես կարողանում ե ձեռք գցել «Լե-ժուռնալ»-ը, վորը հրատարակում եր սենատոր Հումբերտը, նրա յերգը յերգվեց։ Այնպիսի մի մարդ, վորը հանկարծ մեծ գումարներ եր ճարել և թերթեր եր գնում այն պահին, յերբ հասարակական կարծիքը վճռական դեր եր խաղում, հենց միանգամից կասկած գրավեց իր վրա։ Պարտվողականության ձայնը, վոր հնչում եր Բոլոյի չնչին մամուլում, շուտով խլացավ դատարանում իրեն արդարացնել ճգնող Բոլոյի ձայնով։ Նրան գնդակահարեցին։

1915 թվականին գերմանական գործակալներն Ամերիկա եյին ուղարկվում վոչ թե հետախուզական նպատակներով, այլ պրոպագանդի համար։ Նրանց հանձնարարվում եր լուրեր տարածել՝ Գերմանիայում և արտասահմանում ապրող իրենց հայրենակիցների դեմ։ Նրանք տարածում եյին գերմանական արժանապատվությունն ստորացնող կեղծ փաստեր։ Իսկ ինչ եր այդ տարօրինակ կամպանիայի նպատակը։ Գերմանացիները յենթադրում եյին, թե հենց վոր Ամերիկայի հասարակայնությունը հասկանա, վոր տարածվող լուրերը չեն համապատասխանում իրականության,

4084

նա այդ լուրերը կընդունի վորպես դաշնակիցների վոտնձգություններ։

Բայց վերջիվերջո այդ պլանը տապալվեց և, անկասկած, ոգտագործվեց դաշնակիցների պրոպագանդի համար։ Գերմանացիների գազանությունների մասին տարածվող առասպելների մոտավորապես յերկու յերրորդ մասը հերյուրանք եր։ Բայց մեկ յերրորդ մասը, ինչպես, որինակ, Լուվենի ավերումը, միսս Կավելի և կապիտան Ֆրիատի գնդակահարությունը, ճշմարտություն եր։

Ответственный по выпуску Б. Г. Потикян
Тех. редактор Д. М. Джинибалаян
Корректор С. Акопян

Уполкрайлит № С—4541. Сдано в набор 5 июля 1937 г. Подписано в печать 19 июля 1937 г. Об'ем $8^{1}/_{2}$ п. л. Тираж 2500. Заказ № 1222.

Типография Краевого Армянского Из-ва „БОЛЬШЕВИК" Ростов-Дон, Ворошиловский пр № 27.

ՀՀ Ազգային գրադարան
NL0194346

Գին 1 ռուբ.
Цена 1 Руб.

Р. РОУАН

Разведка и контрразведка

На армянском языке

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ АРМЯНСКОЕ
ИЗДАТЕЛЬСТВО „БОЛЬШЕВИК"
Ростов-Д, Ворошиловский пр. № 27